

1960

ՀԱՄԻԱԾԻՆ



4582

ՌՆԸ
ԺԷ ՏԱՐԻ


Մարտ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Գ

1960



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Մեր մայրերը	3
Համայն վրաց Պատերիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ի ընտրությունն ու գանակալությունը	6
Քաղվածքներ Գեղազույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություն- ներից	11
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	13
ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ—Մեղեքի հարգանքը	15
Վարդանանց տներ Մայր Աթոռում	17
Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆ—Ավարայրի եակատամարտի մեծ խորհուրդը	18
Հ. Հ. ՍԻՐՈՒՆԻ—Եղիշե պատերիարք Դուրյան	23
Տանե Կիլիկիո Կաթողիկոսությունը պատմության լույսի տակ	29
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	74
Նորակառույց առաջնորդարանի բացումը	77
Հիշատակելի երեկո մը	78
Արգենտինեանայ կյանք	79

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՂԱՅԿԱԿԱՌ ՍՍՏ. ԷՋՄԻԱՅԻՆ

«ԷՋՄԻԱՅԻՆ» ԱՄՍԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Redaction of the monthly review «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia, USSR

ՀՐԱՄԱՆՈՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՑ


ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Մ Ե Ր Մ Ա Յ Ր Ե Ր Ը



որ սեւեղի բարոյական զաստիարակութեան խնդրում ընտանիքի և ծնողների ճշգրիտ դերը միշտ էլ եղել է մարդկային կյանքի կարևոր հարցերից մեկը, որով զբաղվել են մանկավարժն ու փիլիսոփան, եկեղեցականն ու բարոյախոսը, գիտնականն ու պետական գործիչը:

Այն ժողովուրդը, որ հետաքրքրվում է մանուկների, մատաղ սերնդի առողջ դաստիարակությամբ, նշանակում է իր գոյության հիմքը դնում է անխորտակելի ժայռի վրա:

Հտանեկան դաստիարակության մեջ կենտրոնական դեր է կրում և որպէս ՄԱՅՐ:

Մայրական զգացմունքն ու կոչումն է, որ ընտրագրում են կնոջ:

Մարդկային առաջին և անմոռանալի հաստատությունը ՏՈՒՆՆ է, ՀՆՏԱՆԵԿԱՆ ՕՋԱԽԸ, որտեղ սկիզբ է առնում կյանքը: Տան մեջ, ընտանեկան հարկի տակ է, որ առաջին անգամ դաստիարակվում է մանուկը հիմնականում մօրը խնամքի տակ, որպէս հասարակական ընկերային էակ:

Տունն է հիմնադրը հասարակության և օրրանը քաղաքակրթության: Հասարակությունը գոյմարն է ընտանեկան օջախների: Հասարակությունը այնքան է զորավոր և հաստատուն, որքան իր ծոցում ունի բարոյապետ, հոգեպետ և կենսաբանորեն առողջ ընտանիքներ:

Տիպար տուն նշանակում է տիպար հասարակություն: Իսկ տան ռզին, տնտեսն ու տիրուհին մայրն է, նվիրված ամբողջությամբ և սրտովին ընտանիքի ներքին կյանքին և բարօրության:

«ԿԻՆ ՔՈ ՈՐՊԷՍ ԱՅԳԻ ՎԱՅՆԼՈՒՉ» (Սաղմ. ձեռն 3):

Մեծ և անգնանատելի է բարիքը ընտանեկան դաստիարակության: Մայրն է, որ ընտանիքում հսկում է կյանքի ծառի վրա: Մարդկային սերնդի ապագան մօր ձեռքումն է: «ԿԱՆԱՅՔ ԵՆ, ՈՐ ՄՆԱՆԻՆ ԶԹԱԳԱՒՈՐԱ... ԵՒ ԿԱՆԱՅՔ ԵՆ, ՈՐ ՄՆԱՆԻՆ ԵՒ ՄՆՈՒՑԱՆՆԸ ԶՄՇԱԿԱՍ» (Եզր Դ 16):

Մօր շնչով և դաստիարակությամբ, ընտանեկան մաքուր և առողջ հարկի տակ ցանկած բարի դաստիարակության սերմերը աճում են ու պտղավորվում հետագայում զրպրոցում, ուսումնական բարձրագույն հաստատություններում և ընկերության, հասարակության ծոցում:

«ԻՄԱՍՏՈՒՆ ԿԱՆԱՅՔ ՇԻՆԵՑԻՆ ԶՏՈՒՆԱ» (Առակ ԺԳ 1):

Հասարակության կյանքում մեծ է բարիքը ընտանեկան առողջ դաստիարակության:

Մեծ է և պատասխանատու հոր ղեկավար դերը ընտանիքում, առավելաբար «գործի կյանք»-ում, բայց մայրն է պահապան հրեշտակը ընտանեկան հարկի տակ և պահպանողը բարոյական նորմաների, ավանդությունների, սրբությունների և բարի սովորությունների:

Կնոջ գերագույն կոչումը մայր լինելու պարտականության մեջ է: Բայց ամեն կին չէ որ տիպար մայր է: Ընտանիքը միշտ չէ, որ ունեցել է կրթիչ, դաստիարակիչ դեր:

Հեռավոր անցյալում կիներ Լոդէլ է մասամբ իրավագույր: Նախանձելի չի Լոդէլ երա գրությունը. եա արհամարհված է Լոդէլ նույնիսկ իր ընտանեկան, ամուսնական կյանքում: Առաջինը Մովսիսական օրենքն էր, որ հրահանգում էր պատվել հօրն ու մօրը (Ել, Ի 12): Հին աշխարհի իմաստուններից Սոկրատեսը րկադրում էր երիտասարդներին. «ԼՈՒՐ

ԱՐԴԵԱԿ, ԽՐԱՏՈՒ ՀՈՐ ՔՈ ԵՒ ՄԻ ՄԵՐԵՐ
ՆԱԳԵՆ ՄՈՐ ՔՈ (Առաջիկ և 81):

Բայց նախաբանական մտածողու-
թյան մեջ խոսվում է ՄՈՐ ԵՎԱՏՄԱՄԲ ՀՈՐ
ԴԱՆՔԻ ՄԱՍԻՆ միայն, որպեսզի որդիները
«եղիայնական» լինեցին ի վերայ երկրի
ոստորանքան: Քրիստոնեությունն է. որ առա-
ինը բարձրացրեց կնոջ մեծ դերը որպես
մոր և դաստիարակչի:

Եկեղեցու հայրապետները ավետարանա-
կան «տալիթա, կումի» («աղբիկ, ոտքի-
կաց») խոսքի մեջ տեսնել են կնոջ բարոյա-
կան-առարականական ազդեցությունը ա-
ռաջին հրավեր-կոչը (Մարկ. Ե 41):

Հեթանոսաց մեծ առաքյալը Պաղոս. այս
ուկերունների լույսի տակ, Ա դարում հայ-
տաբանում է այլ և կնոջ բարոյական, հասա-
րակական հավասարության հռչակապ սկըզ-
բունքը. «Գի՛գ ԽՏԻՐ ՈՉ ԱՐՈՒՄ, ՈՉ ԻԳԻ. ԱՅԼ
ԱՄՆՆՔՔԵԱՆ ԴՈՒԺ ՄԻ ԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻ-
ՍՈՒՍ» (Գաղատ. Գ 28):

Խառոյական, իմացական, բեկերային իր
դեռի և կոչման մեջ վերահաստատված կնոջ
մեջ միշտ մեծարվել և զնաճատվել է առա-
ջին հերթին մայրը՝ իր ամուսնու սիրով, գա-
վակների գործով տոգորված բարի և անձ-
նագոհ էակը, մայր որդավի բերկրեալ»
(Սաղմ. չԺԲ 9):

Անճուն է մոր անձնագոհությունը: Ո՛վ կա-
ռոլ է չափել խոսությունը մայրական սիրո
և նվիրման: Մայրական սիրտը մի երկին է
սիրո և զոհողության, իսկ մայրական սերը՝
մեծագույն առաքիներությունը կնոջ:

Եղբայրի և բայստավոր է այն ժողովուրդը,
որն ունեցել է և ունի իր անցյալի պատմու-
թյան մեջ որպես ներշնչաբան և իր հերկա
կյանքի օրհնում որպես ուղեցույց կնոջական
տիպար դեմքեր, օրինակելի մայրեր:

Մեր հին ու նոր պատմության մեջ ևս կան
ՏԻՊԱՐ ՀԱՅՈՒՆԻՆՔՐ՝ որպես օրինակելի
ԿԱՆԱՅՔ և ՄԱՅՐՈՒՆ:

Հեթանոսության շրջանին հայը Անանիտ
դիցանու կերպարի մեջ մարմնավորել է բն-
տանիքի, սիրո, գեղեցկության, պարկեշտու-
թյան մասին իր բարոյական նորմաները:
Անանիտը նման չէ ոչ ասորական դիցանիսնե-
րին և ոչ հունական Արտեմիսին կամ Ափրո-
դիտեին. նա ավելի բարձր բարոյական կշիռ
ունի: Նա ՀԱՅ ՏԱՆ ՈԳԻՆ ԷՐ, «կեցցուցիչ...
խնամակալ հայոց» և «մայր ամենայն զգաս-
տութեանց», որ «կյանք ու լիություն» էր
պարգևում Հայոց երկրին:

Քրիստոնեության շրջանին «լույսի մոր»
Աստվածամոր կերպարի մեջ խտացել են հայ
հավատացյալ ժողովրդի բնութանկան սրբու-
թյան, բարոյականության մասին վսեմա-
գույն հորմաները, որպես «մահաբնական սր-
բուրան» և զգաստութեան ընդունաբան:

Հայ վանականությունն ու պատմությունը
հարուստ են տիպար կանանց և մայրերի
կերպարների բնութագրությամբ: Աննա Սան-
դախտ Լույսը (Ա դար). Հրիփսիմեն (Դ դար).
Շուշանիկը (Ե դար). «ի կամաց, և ոչ ի հար-
կէ և ի բանութենէ» Քրիստոսի սիրուն նվիր-
ված իմաստուն կույսեր և երկնավոր գիճվու-
ներ. որոնք փառությամբ նահատակվում են
իրենց հավատի և պարկեշտության համար և
«գլխատակս նոցանց ցնծութեամբ» տոնում
է եկեղեցին, որովհետև նրանք եղան հին
ժամանակներում Հայոց աշխարհի «զոհի
փրկութեան» և «ծնան ազգս բազումս»: Դ
դարում Փառանձիմ բագունին պետականո-
րեն մտածող «գորատու կին» է եղել (Հոսր
Գ 11) հայոց երկրի համար: Ե դարի 50-ա-
կան քվականների Հայոց աշխարհի «փափ-
կասուն տիկնայի» ներկայանում են մեզ որ-
պես նշմարտապես հայրենասեր, առաքինի
կանանց և մայրերի լուսապսակով:

Եղիշեն իր հանրածանոթ պատմության
մեջ, է եղանակի վերջում, զնդեցկարեն կեր-
տել է Հայրենիքի և հավատի անձնուրայ
այդ կանացի մարտիկների կերպարները:
Եղիշին «տիկնայի փափկասուն»-ը պրոֆ.
Մ. Արեղյանը բնութագրել է որպես «գորո-
վալից ինքնությամբ ոգված մի սխանչելի
հիմն ԱՌԱՔԻՆԻ ԿԱՆԱՆՑ» («Հայոց հին գե-
կանության պատմություն», Ա հատ., Երևան,
1944, էջ 310—311):

Այդ տիկնայի, Ավարայրից հետո, հայ ա-
ռաքինի կնոջ պատմի. նույնքան ծանր պայ-
ման են մղում իրենց տան մեջ և մեծ հոգա-
ծությամբ նվիրվում իրենց երեխաների կրթ-
ության և դաստիարակության. «մոռացան
իրենց կանացի տկարությունը և եղան առա-
քինի մայրեր հոգևոր պատերազմում..., կրթ-
ին հարսնացան առաքիներության հետ...,
իրենց կյանքով նմանեցան մահվամբ փա-
նահատակներին»:

Իմացական մեծ հետաբերություններ ու-
նեցող և հայրենասիրական դաստիարակու-
թյամբ տոգորված հայ կնոջ սխանչելի կեր-
պարն է Մամիկոնյանների Տան մեծ տիկին
Զվիկը, որը Ե դարի վերջերին, հայ կանանց
մեջ մտավոր ընդունակություններով և հոգև-
վոր շնորհներով գերազանցապես օժտված
մայրը հանդիսացավ, և որի շնչի տակ դաս-
տիարակվեցին Վահանյանց և Կամսարա-
կանների սերունդներ:

Այլապես հուզիչ և սրտազրավ են նաև
կերպարները Վահան Գաղթնացու քրոջ՝ Խոս-
րովիդուխտի (Է դար), Ստեփանոս Սյունեցու
քրոջ՝ Սահակդուխտի (Ը դար), որոնք եղել
են մեծ և հոգեկից երաժիշտներ՝ «յոյժ հմուտ
երաժշտական արհեստին»: ԺԲ դարում Այ-
ծնմանիկը, Անիի պաշարման օրերին, հայրեն-
ասիրության տիպար հերոսուհի է, որ Անիի

պարիսպների վրա անվեհեր կանգնած համարձակ կոպում էր և նետաճարում բշտամուն իր իսկ մարմնի մեջ մտած նետերով: Նույնքան հուզիչ և սրտառու է կերպարը սասունցի Քաջունու, որը բարաբալան արշավանքների ժամանակ ԺԴ դարում, հույրի լեռներում, բոտ Քաղմա Մեծափեցու վկայությամբ, եղնիկի նման հալածական, մտաբերելով վերահաս բարոյական աղետը, բշտամուն ձեռքը չի լքում համար, իր իսկ ձեռքով «գեղեցիկ դորդին իր ցանկալի» և բարձր մարտից «ի վայր ընկեց զինքն», բարձր պահելու համար հայ օջախի սրբությունը և հայ առաքինի կնոջ պատիվը: Հետագա դարերում ևս, և մասնավորապես 1915 թվականի Ապրիլյան եղեռնի օրերին, հայ կանայք և մայրեր, հավատարիմ հայ կնոջ հերոսական, հայրենասիրական և բարոյական ավանդներին, նախընտրեցին մահը իրենց և իրենց հարազատների, և անաղարտ պահելու համար հայ կնոջ պատիվը, հայ ընտանեկան օջախի սրբությունը, անվեհեր սրտով ու մահի հանձնվեցին ջրի ակունքներին, իսկ ուրիշներ գահավիժվեցին անյուրեղն ի վայր...:

Ուրեմն հարուստ է մեր պատմությունը կանացի և մայրական այսօրինակ սխրագործություններով: Հավատալով, հայրենասեր և առաքինի. հայունիների սրտառու կերպարները լցել են մեր ողջ պատմությամբ: Հայ կինը հավասար արիությամբ բաժնի է իր արյունը, ֆրոնտեր իր համազմունքների, ազգային ազատագրության, իր հավատի: Հայրենասիրության, իր ժողովրդի գոյության համար: Տիպար հայ կանայք, որպես գերագույն մայրեր, իրենց նկարագրի և բարեքի լինին են դրոշմել հայ սերունդների վրա:

Հայ ժողովուրդը միշտ ունեցել է և այժմ ավելի քան երբևէ ունի բարձր համարումը քնտանեկան սրբությունների և ընտանեկան դաստիարակության մասին: Ընտանեկան հարկը մի այգի է, իսկ մայրը՝ այն ազնիվ մշակը, որն անցնում և ծաղկեցնում է կյանքի ծաղիկը՝ երեխային: Բան ու բոլոր շկան այնտեղ, այլ սիրող սիրտ, կենդանի օրինակ և բարոյաշունչ ու դաստիարակիչ խոսքեր:

Այսօր ևս մեր ազգային-էկեղեցական, ընկերային-հասարակական կյանքում, որպես

ժողովուրդ և նկեղեցի, որքան կարիքն ունենա տիպար հայունիների, տիպար մայրերի, ԶԳՆՑՈՂ, ՄՏՆՍՈՒՂ, ԳՈՒՄՈՒՂ ազնիվ կանանց:

Երանի ամեն կին, որ մայր է դառնում, ըմբռնի մայրության վսեմությունը, սրբությունը:

Բայց ինչպիսիք են ժամանակն ու կյանքի պահանջները: Զարգացող հասարակական-տնտեսական կյանք, ֆադախերությունը նոր հարցեր են դնում մայրերի և կանանց առաջ: Այժմ կնոջ և մոր գործունեության շրջանակը չի սահմանափակվում միմիայն տան նեղ շրջապատի մեջ:

Այսօր գործունյա և զգույն կանանց ոգին ընդգրկում է գործունեության ավելի լայն հորիզոններ: Հայ կինը գիտակցել է միշտ առժեռվաբար իր կյանքը նույն արդյունավորությամբ, նվիրումով և եռանդով՝ նաև ընտանիքից դուրս:

Հայ կինը այսօր և՛ տան մեջ հյուանդան մայր է, պահապանը հայ օջախի դարավոր ավանդների, և՛ միաժամանակ գործունե աշխատող ու կառուցող գիտության, տեխնիկայի, լուսավորության, արվեստի և գրականության բնագավառներում: Բավ է հիշել, որ այսօր Հայաստանում գիտական աշխատանք կատարողների ավելի քան մի երրորդը կանայք են, ժողովրդական լուսավորության բնագավառում աշխատողների ավելի քան մի տասներորդը կանայք են: Հայաստանում աշխատում են տարբեր գիտությունների բնագավառներում 350 կին՝ գիտության թեկնածու և 15՝ դոկտոր: Բազմաթիվ կանայք աշխատում են ձեռնհասորեն այլ հասարակական դեկավար դիրքերում:

Ընտանիքի մեջ և հասարակության ծոցում ծաղկում են հայ կնոջ ստեղծագործ շնորհները, շինարար ուժն ու կազմակերպչական ընդունակությունները:

Հայ նկեղեցին, ինչպես միշտ, այսօր էլ, որպես պահապանը հայ օջախի դարավոր սրբությունների, սրբազան պարտականություն է համարում հավատալու, հայրենասեր, ժաջան և առաքինի հայ կանանց դաստիարակության գործը, հոգուտ հայ ժողովրդի և Հայրենիքի:





ՀԱՍՄԱՆ ՎՐԱՑ ՊԵՏՐՈՍԱՐԺ-ԿԱթՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՍՂԻ-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 10-ին վախճանվել էր Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս երջանկահիշատակ Մելքիսեդեկ Գ-ը, Վրաց Եկեղեցու Ս. Սինդիկ որոշմամբ հանգուցյալ հայրապետի քառասունքը լրանալուց հետո, ինտերվարի 20-ին հրավիրվեց համայն վրացական եկեղեցական ժողով՝ նոր կաթողիկոս ընտրելու համար, ժողովին մասնակցում էին եկեղեցական և աշխարհական 59 պատգամավորներ:

Ընտրության ներկա էին նաև Ռուսական, Բուլղարական Պրովոսլավ Եկեղեցիների ներկայացուցիչներ: Ընտրությունը տեղի ունեցավ Թբիլիսիի Ս. Սիրոնի մայր տաճարում, դադտնի քվեարկությամբ: Միաձայնությամբ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս ընտրվեց կաթողիկոսական տեղապահ, Բաթումի միտրոպոլիտ գերաշնորհ Եփրեմը:

Համայն Վրաց նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը ծնվել է 1896 թվականին Գորիի շրջանի Դոնսի գյուղում: Իր նախնական կրթությունը ստացել է Գորի քաղաքի հոգևոր ուսումնարանում, ավարտելով այն գերազանց 1912 թվականին: Այնուհետև ընդունվում է Թբիլիսիի հոգևոր սեմինարիան և այն ավարտում 1918 թվականին, ապա ընդունվում Թբիլիսիի համալսարանի պատմա-փիլիսոփայական ֆակուլտետը և ավարտում 1926 թվականին: Համալսարանն ավարտելուց անմիջապես հետո նա ընդունում է հոգևոր կոչում և 5 տարվա ընթացքում բարձրանում եպիսկոպոսական աստիճանի:

1945 թվականին հանգուցյալ Կալիստրատ Կաթողիկոսը նրան շնորհում է միտրոպոլիտություն:

Կաթողիկոսական տեղապահ միտրոպոլիտ Եփրեմը հրավիրում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ներկա լինելու Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի ընտրության և գահակալության հանդեսներին, Վեհափառ Հայրապետը, սիրով ընդունելով քույր Եկեղեցու ռարեկամական և սիրո ալղ հրավերը, փետրվարի 20-ին իր շքախմբով Մոսկվայից ժամանում էր Թբիլիսի՝ խաղաղության համագումարից վերադարձի իր ճանապարհի վրա:

Թբիլիսիի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Վրաց Եկեղեցու նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ-ը իր եպիսկոպոսներով, Վրաստանի հայոց թեմի քարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և հարյուրավոր հայ և վրացի հավատացյալներ: Վրաց նորընտիր Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբություն Եփրեմ Բ-ը հայտնապես հուզված, չերմագին քառերով իր գոհունակության խոսքը հայտնեց Վեհափառ Հայրապետի ժամանման համար Թբիլիսի, ընդգծելով, թե եղբայրական սիրո այս վերաբերմունքը անմոռանալի պիտի մնա Հայ և Վրացական Եկեղեցիների պատմության մեջ: Նույն չերմությամբ Վեհափառ Հայրապետն իր պատասխան խոսքի մեջ իր մեծ ուրախությունը և իր խնդակցությունը հայտնեց Նորին Սրբության ընտրության առթիվ և իբրև եղբայրական սիրո գերագույն նշան՝ երկու հայրապետները ողջագուրվեցին՝ ներկաների բուռն ծափերի տարափի տակ:

Փետրվարի 21-ին, կիրակի, տեղի ունեցավ Վրաց նորընտիր Կաթողիկոսի գահակալության հանդեսը: Առավոտյան ժամը 10-ին

Վրաց նորընտիր Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբութիւն Եփրեմ Բ-ը այցելեց Վեհափառ Հայրապետին: Ժամը 10-ին երկու Հայրապետները իրենց շքախմբով մեկնեցին դեպի վրաց ժողովրդի Սրբութիւն Սրբոց, լազմադարյան Միջինթալի վանքը, որտեղ տեղի պետք է ունենար նորընտիր Կաթողիկոսի դահակայութեան հանգեսը: Ինքնաշարժը ժամը

Հաւարտ սուրբ պատարագի, Վրաց Եկեղեցու լարձրաստիճան հոգեւորականները Նորընտիր Կաթողիկոսին առաջնորդում են հանդիսավորութեամբ դեպի Հայրապետական Գահը, և «Աքսիոս» (սկրժանի էս) երգի հնչուններէ տակ, 3 անգամ նստեցնում են Գահի վրա: Գահակայութեան հանդեսը վերջանալուն կատարվեց զոհարանական մաղթանք, որից



ՀԱՄԱՐԱՅՆ ՎՐԱՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԽ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ

11-ին հասնում է Մցխեթաւ երկու Հայրապետները առաջնորդվում են Մայր Տաճար: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը բաղժում է Գահի վրա:

Սկսվում է գահակալութեան հանդեսը: Նորընտիր Պատրիարք-Կաթողիկոսը, շրջապատված բարձրաստիճան հոգեւորականներով, մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ:

հետո Նորին Սրբութիւն Եփրեմ Բ-ը իր շնորհակալական խոսքով զիմեց բոլոր ներկաներին և շնորհակալութիւն հայտնեց մանավանդ քնտրութեան ժամանակ իր նկատմամբ ցուցաբերված վստահութեան և սիրո համար: Նորընտիր Կաթողիկոսը ջերմորեն ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետին:

Նորին Ս. Օծուխյուն Վազգեն Ա Կաթողիկոսը իր շնորհավորական խոսքում ասաց.

«Այս հանդիսավոր և սուրբ պահուն, վրաց ժողովուրդի հոգևոր կեդրոն պատմական Ս. Մցխեթայի կամարներուն տակ, բույլ տվել Ձեզ բերել եղբայրական սիրտ ողջույն, Ձեզ՝

Մտտ երկու ամիս տոա, սուգի մեջ էր մտած Ձեր նկեղեցին, երջանկահիշատակ Մելիսեղիկ Գ Կաթողիկոսի վախճանումով: Հայ նկեղեցին ևս, և հատկապես Մենք, անձամբ բաժնեցինք Ձեր սուգը. Մեր ներկայացուցիչներով մասնակցեցանք յազման արարողու-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ՀԵՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՄԱՆ
ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐԺ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՓՐԵՄ Թ-ԻՆ

նօրընտիր Հայրապետ համայն վրաստանի և սիրելի եղբայր Մեր ի Քրիստոս:

Մենք էլ Մեր ռախոյրայունը, որ վրաց Ս. նկեղեցիի Հայրապետական Գանձի վրայեն վերցալ սգո հոգը, և այսօր, Ձերդ Սրբության արքուկալության հանդեսով, Ձեր նկեղեցին ունեցավ իր արժանավոր նոր Գանակալը:

րյան և Ս. էջմիածնի կամարներուն ներև աղօթեցինք հանգուցյալ Հայրապետի հոգվո խաղաղության համար:

Այսօր, Ձեր ռախոյրյան այս հանդեսին, հույնպես Ձեր կողմին ենք և կազմենք ուս Աստված, որ Ձեզ պարգևե հաջողոյ, երկար կյանք և զործելու նոր ուժ ու եռանդ, որ-

պեսզի իրեն իմաստուն և քաջ Հովվապետ, ղեկավարեմ Զեռնեղեցին և առաջնորդեմ Զեռնապետաներ ժողովուրդը Ս. Ավետարանի սիրտ և խաղաղության ճանապարհով: Ի սրտե կմաղքենեմ Զեղ յիակատար ճաջօգույն Զեռնապետան առաջնության մեջ:

Ս. էջմիածնեն Մենեմ պիտի հետևիմ Զեռնապետանության և վստահ եղեմ, թե Զեռնապետան մեկ ճաջօգույն Մեզ խորունկ ուսուցիչություն պիտի պատճառե, Զեռնապետան մեկ ճաջօգույն պիտի նկատեն Մեռնապետանությունը:

Գահակալության հանդեսը վերջանալուց հետո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Նորին Սրբությունը նվերեմ Կաթողիկոսը առաջնորդվեցին «Խնտուրիստ» հյուրանոցը, որտեղ տրվեց պաշտոնական ճաշկերույթ, ճաշկերույթին ներկա էին Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Վրաց Ուղղափառ Եկեղեցու գործերի խորհրդի լիազոր պր. Մ. Մեկվարիշվիլին, Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր պր. Ա. Շալուաշվիլին, Վրաց ինտելիգենցիայի ներկայացու-



ՀԱՄԱՅՆ ՎՐԱՅ ՊԱՏՐԻԱՐԺ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՓՐԵՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՅՈ

Կեցցե՛մ վրաց եօրենտիր Կաթողիկոս Նորին Սրբությունը նվերեմ ճայրապետը:

Վեհափառ Հայրապետը, իր խոսքի վերջավորության, իրեն սիրո հիշատակ, Նորին Սրբությունը նվերեմ Կաթողիկոսի կրթից կախեց կաթողիկոսական մի գեղեցիկ պանակե՛հ՝ հատկապես պատրաստված այդ առթիվ:

Ուղույնի խոսքեր ասացին նաև Ռուս Պրովոսյավ Եկեղեցու անունից գերաշնորհ Պալատի սրբազան արքեպիսկոպոսը, Ռուղարական Եկեղեցու անունից՝ Անտոնի վարդապետը և Վրաց Եկեղեցու հոգևորականության և լայնարժեքի ներկայացուցիչները:

Երիշներ հանձինս ակադեմիկոսների, գրողների, կոմպոզիտորների, վրաց հոգևորականությունը և այլ հյուրեր:

Սեղանը օրհնեց Նորենտիր նվերեմ Կաթողիկոսը, Ապա Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը հրավիրեց բոլոր ներկաներին առաջին բաժակը բարձրացնել շամայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Նորին Սրբությունը նվերեմ Բ-ի կենացը, իր հերթին Նորենտիր նվերեմ Կաթողիկոսը բաժակ բարձրացրեց Նորին Ս. Օծություն Ս. Ս. Վաղգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը և ապա Մոսկվայի և շամայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբությունը

Անցածի և Բուզարիայի Պատրիարք Նորին Սրբութիւն Կիրիլի կենացը: Շնորհավորական շերմ րաժականառեւ արտասանեցին նաև ներկաներից շատերը:

Վեհափառ Հայրապետը Իր պատասխան ճառով մի անգամ ևս սրտագինս շնորհավորեց Եփրեմ Կաթողիկոսին, գնահատանքի խոսք ուղղեց Վրաց Եկեղեցուն և հոգևորականութիւնը, մաղթելով, որ Նորընտիր Կաթողիկոսի օրոք Վրաց քույր Եկեղեցին առավել զորանա և առաջադիմի: Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ասաց.

«Մենք կնամուտանք, բն մեր Եկեղեցիները պատմական իրենց դերը պիտի է շարունակեն մեր ժողովուրդներու հոգեւոր կյանքի շինութեամբ, հոգեկան մխթաբարութեամբ ճանապարհով, մեր Եկեղեցիները իրենց սրբազան գործը պիտի է շարունակեն նաև խաղաղութեամբ գաղափարի և ժողովուրդներու միջև սիրո և եղբայրութեան ամրապնդման աշխատանքներուն մեջ:

Հաւակալեալ սիրելի է Մեզ վրացի և հայ ժողովուրդներու դարավոր եղբայրութեամբ ամրապնդման գաղափարը և մենք ուրախ ենք և հպարտ իրեն Եկեղեցական գործիչներ, որ այդ եղբայրութեամբ ալ ավելի կ'ստեղծեն և կ'դառնան ամբողջական միասնութեամբ մը: Աշխատանքովը և գործակցութեամբը նաև մեր երկու Եկեղեցիներուն:

Վեհափառ Հայրապետը Իր խոսքը վերջացրեց սրտաբուխ մաղթանքներով Վրաց Եկեղեցուն, վրացական ժողովրդի և Վրաստանի առավել քարգաւաճման համար:

Նորընտիր Կաթողիկոսին ուղղված ողջույնի խոսքերով հանդես եկան նաև Լվովի արքեպիսկոպոս Պալլադին, Չերնիկովի արքեպիսկոպոս Անդրեյը, ակադեմիկոս Վ. Շուբամիճեն (Եփրեմ Կաթողիկոսի երբեմնի ուսուցիչ, պրոֆեսոր համալսարանում) և ակադեմիկոս, ժողովրդական քանաստեղծ Գ. Խոնիճեն, որպէս ճանարանական ընկեր Պատրիարքի և դասընկեր համալսարանի: Մաշկներով Վերջացավ Նորին Սրբութիւն Եփրեմ Կաթողիկոսի աղոթքով:

Փետրվարի 22-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ գերանորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի, Վրաս-

տանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսի, թեմական խորհրդականդամների, այցելում է վրաց Կաթողիկոսաւորանը, որտեղ Վեհափառ Հայրապետին դիմավորում են Վրաց Եկեղեցու 5 եպիսկոպոսներ և առաջնորդում ընդունարան: Վեհափառ Հայրապետը շերմաքին խոսքերով մի անգամ ևս շնորհավորում է Եփրեմ Կաթողիկոսին և մաղթում արդյունավետ գործունեութիւն:

Նույն օրը, ժամը 4-ին, Նորին Ս. Օժոթիւնը այցելեց Յրիլիսի Հայոց Ս. Գեորգ Եկեղեցին: Հաճատացյալների րազմութիւնը խանդավառորեն ու ծափերով դիմավորում է Վեհափառ Հայրապետին: Վեհափառ Հայրապետը տշրաշափառով առաջնորդվում է դեպի Եկեղեցի: Ամբողջ ճանապարհը ծածկված է գորգերով և թարմ ծաղիկներով: Վեհափառ Հայրապետի հետ հայոց Եկեղեցի այցելեց նաև Չերնիկովի արքեպիսկոպոս գերաշնորհ Անդրեյը: Վեհափառ Հայրապետը ներկա եղավ երեկոյան ժամերգութեան, ապա և ողջունեց ներկաներին, տալով Իր հայրապետական օրհնութիւնը: Երգչախմբի կողմից երգված «Ամեն հայի սրտից բխած» Հայրապետական մաղթերգի հնչունների տակ, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Իր հաճատացյալներին և Իր շքախմբով ուղղվում է դեպի կայարան:

Կայարանում ևս հաճաքվել են հայ և վրացի հաճատացյալներ: Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար կայարան էին եկել Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբութիւն Եփրեմ Ա-ը, վրաց բարձրաստիճան հոգևորականներ, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, հայոց Եկեղեցու քահանայից դասը, թեմական խորհրդի պատվարժան անդամները: Ժողովրդի հուզիչ և խանդավառ ծափերի տակ ողջագոյրվեցին երկու Հայրապետները և հրաժեշտ տվեցին միմյանց: Երեկոյան ժամը 7-ին, գնացքը շարժվեց՝ բռնուն ծափերի և ողջերթի շերմ բարեմաղթութիւնների տակ:

Փետրվարի 23-ին, երեքշաբթի, առաւմտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին:





Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1959 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ սույն նիստում քննության առնվեցին Ռումինիայի և Բուլղարիայի թեմական խորհուրդների պաշտոնական դիմումները՝ երկու թեմերի համար առաջնորդ նշանակելու մասին:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ընդառաջելով Ռումինիայի և Բուլղարիայի թեմական

խորհուրդների դիմումներին, խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ երկու թեմերի համար առաջնորդ հաստատել Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանին:

Վեհափառ Հայրապետը հաստատեց Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումը:

1959 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ սույն նիստում Մայր Աթոռի 1959 թվականի ընթացքում կատարված շինարարական աշխատանքների և 1960 թվականի ծրագրերի մասին զեկուցեց Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա. Գալիկյանը:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, մի շարք դիտողություններից հետո, գոհունակու-

թյամբ ընդունեց զեկուցագիրը և առաջարկեց Մայր Աթոռի տնտեսական վարչության և գլխավոր ճարտարապետին՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցները, առաջիկա շինարարական տարում ևս, ըստ նախատեսված ծրագրի, առաջ տանելու համար շինարարական աշխատանքները:

1960 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ սույն նիստում քննության առնվեց Շիրակի թեմի 1959 թվականի տարեկան համարառվությունը, Վերստուգիչ հանձնաժողովի անդամ պր. Է. Ալեքսանյանի զեկուցման հիման վրա:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, հետ մանրակրկիտ քննության, որոշեց հաստատել համարառվությունը:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը միաժամանակ խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ նոր թեմակալ առաջնորդ նշանակել Շիրակի թեմի համար:

1960 թ. փետրվարի 5-ի նիստից

ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ խորհուրդի նիստում արանձնապես քննության առավ և հաստատեց 1960 թվականին Վեհաժողովի նոր շենքի վերանորոգման և բարեփոխման շինարարական աշխատանքների ծրագիրը:

ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ խորհուրդի նիստում, Վեհափառ Հայրապետը, բնդառն չելով հունվարի 20-ի նիստում Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից կատարված խնդրանքին, Շիրակի թեմի համար առաջնորդական փոխանորդ նշանակեց Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թալիրյանին:

1960 թ. մարտի 8-ի նիստից

ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ խորհուրդի նիստում Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Գ. Քեչյարյանը զեկուցեց ներքին թեմերի 1959 թվականի բյուջեի կատարողականի և 1960 թվականի նախահաշիվների մասին:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հաստատեց ներքին թեմերի բյուջեի 1959 թվականի կատարողականը, իսկ մի շարք դիտողություններից և առաջարկություններից հետո հաստատեց 1960 թվականի նախահաշիվները:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ, ՇԱՐԱԹ, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ հերթական գրական-գեղարվեստական Լրեկոն, ուսանողության ուժերով:

Երեկոյին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը, ի գլուխ ամբողջ միաբանության: Քրիստոսի սուրբ ծննդյան խորհրդի մասին իրենց փորձնական քարոզները կարդացին Գլխարանի ուսանողներ Խորեն սարկավազ Պալյանը և Հակոբ սարկավազ Պողպալյանը:

Ապա գործադրվեց ճոխ հայտագիր՝ բաղկացած արտասանությաններով, մեներգերից և խմբերգերից:

Երեկոյի վերջում ուսանողությանը հայրական խոսք ուղղեց Վեհափառ Հայրապետը:

ՓԵՏՐՎԱՐԻ 13-ԻՆ, ՇԱՐԱԹ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Լենինական մեկնեցին գերաշնորհ Տ. Հայկազուն Եպիսկոպոս Արարհամյանը, հոգեշնորհ Տ. Եղիշ վարդապետ Սարգսյանը և Շիրակի թեմի նորընտիր առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանը:

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց գերապատիվ Տ. Հայկազուն Եպիսկոպոսը և ներկայացրեց հավատացյալներին իրենց նորընտիր և եռանդով լի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանին:

Սրբազան հայրը և Եղիշ վարդապետը Մայր Աթոռ վերադարձան փետրվարի 15-ին:

ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տեառնըմբանաջ», Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Աղբթեանի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը՝ ձեռնադրության աշխարհիս քնարանով:

ՓԵՏՐՎԱՐԻ 20-ԻՆ, ՇԱՐԱԹ, Մոսկվայի Ռուսաց Պատրիարքարանում, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիե Վլադիմիրի շքանշանով պարգևատրեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին՝ նրա ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, երբ սրբազանը գտնվում էր Մոսկվայում, որպես անդամ Վեհափառ Հայրապետի գլխավորած եկեղեցական պատգամավորության, մասնակցելու համար ընդհանուր գինաթափման օգտին սովետական հասարակչության ներկայացուցիչների կոնֆերանսին:

ՓԵՏՐՎԱՐԻ 27-ԻՆ, ՇԱՐԱԹ, Երեկոյան ժամը 6.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հանդիսավոր երեկո՝ նվիրված Երուսաղեմի հանգուցյալ պատրիարք Եղիշ արքեպիսկոպոս Դուրյանի ծննդյան հարյուրամյակին:

Երջանկահիշատակ Եղիշ արքեպիսկոպոս Դուրյանի կյանքի և գործունեության մասին հետաքրքիր և ըրվանդակալից զեկուցում կարդաց նրա աշակերտ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն Եպիսկոպոս Արարհամյանը:

Երեկոյին ընթերցվեցին Եղիշ արքեպիսկոպոս Դուրյանի «Օշական» (Զոհրապ Շամլյան), «Անառակը» (Սարգիս սարկավադ Մարգսյան), «Համառու» (ճամբորդները) (Վոսմաշապուհ Ճիհանյան), «Բարացած սիսեռները» (Հակոբ Կոթճյան) և այլ քանաստեղծություններ «Դրվագներ մանուկ Հիսուսի կյանքին» հատորից: Ընթերցվեցին նաև Դուրյան սրբազանի Շնորհալու տաղերի աշխարհարար թարգմանություններից հատվածներ:

կատարվեցին համապատասխան մենեթր-գիր և շարականներ:

Հոգևոր Ժեմարանի ուսանողները սրտագին երախտագիտությունը նշեցին Դուրյան մեծ ուսուցչի և ամբասիր հոգևորականի ծննդյան 100-ամյակը:

Վերջում փակման խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը, ոգեկոչելով Դուրյան պատ-րիարքի քաղցր հիշատակը:



Փետրվարի 28-ին, ԿԻՐԱԿԻ, Բուն բարեկենդան: Մայր Տաճարում փակ խորանի առաջ պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը: Քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արքահամ-յանը՝ ռի միայն հացի կեցցե մարդ, այլ նաև ամենայն բանի որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ քնարանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Փետրվարի 28-ին, ԿԻՐԱԿԻ, Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նախագահել Մայր Աթոռի սեղանա-տանը միաբանության Բարեկենդանի ճաշին:



Փետրվարի 29-ին, ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:



ՄԱՐՏԻ 2-ին, ԶՈՐԵՔԱՐԹԻ, ՍՍՈՒՄ Մի-նիստների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախա-գահ պր. Պուզինը և նույն խորհրդի աշխա-տակից պր. Սոլովյովը այցելեցին Մայր Աթոռ, ընկերակցությամբ Հայկական ՍՍԻ

Սինիստների Սովետին առընթեր Հայ Եկեղե-ցու գործերի խորհրդի նախագահ պր. Սարգիս Գասպարյանի:

Հարգելի հյուրերը դիտեցին Մայր Տաճա-րը, ծանոթացան Ս. Էջմիածնի տեսարժան հնություններին և այնուհետև այցելեցին Վեհափառ Հայրապետին:



ՄԱՐՏԻ 2-ին, ԶՈՐԵՔԱՐԹԻ, Մայր Տա-ճարում առավոտյան ժամերգության կից կատարվեց Մեծ պահոց առաջին հանդիսա-սավոր Արևադարի ժամերգությունը, որին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 4-ին, ՈՒՐԱԿ, Երեկոյան հաղա-ղական ժամերգությունից հետո, Մայր Տա-ճարում կատարվեց Մեծ պահոց առաջին թեկեսցե-ն, Վեհափառ Հայրապետի նա-խագահությամբ:




ՄԱՐՏԻ 5-ին, ՇԱՐԱԿ, ժամը 7-ին, Հոգևոր Ժեմարանում դասախոսություն կարդաց Վե-հափառ Հայրապետը Սևգոթի մասին թե-մայի շուրջ, որը լսվեց ուսանողության կող-մից չեմ հետաքրքրությամբ:



ՄԱՐՏԻ 6-ին, ԿԻՐԱԿԻ, Սևրտաքսման կի-րակի օրը, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյա-նը, իսկ քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին ներկա էին նաև Իրա-քից և Հայկից ժամանած հայ ուխտավոր-ներ, որոնց պատարագից հետո ընդունեց Վեհափառ Հայրապետը:






ՂԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ

ԺՆՈՂՆԵՐԻ ԼՅՐԳԱՆՔԸ

«Պատուեա զճայր քո և զմայր քո ի
Բնդ բարի լիցի. և զի Երկայնակեայ
լինիցիս ի վերայ երկրից բարօրեանս:
(Նվթ Ի 12)



Ուսես մարգարեն, Սինա լեռան
վրա, աստվածային ներշնչումով
մշակեց տասը պատվիրանները,
որպեսզի Իսրայելի ծողովորդը
ղեկավարվի զրանցով և ունենա աստվածա-
հաճո կենցաղ:

Տառնաքանյա պատվիրանի հինգերորդը
հիշեցնում է երիտասարդներին իրենց պար-
տավորությունները դեպի իրենց ծնողները,
որոնք Աստուծո փոխանորդն են երկրիս վրա:

Իսրայելացիների մեջ, նահապետական
ընդանում, հարգանք էին վայելում միայն
հայրերը, իսկ մայրերն առանձին հարգանք
չունեին, նույնիսկ Ս. Գրքի մեջ տոհմային
կապը պահվում էր հայրական զեռով: Այս-
պես օրինակ՝ «Աբրահամ ծնաւ զԻսահակ,
Իսահակ ծնաւ զՅակովբ, Յակովբ ծնաւ զՅու-
դա, Յուդա ծնաւ զՓարէս» (Մատթ. Ա 2). և
ոչ մի տեղ մոր անունը չի հիշատակվում:
Որպեսզի մայրն էլ հարգանք վայելի իր որ-
դիների կողմից, Մովսիսական օրենքը պատ-
վիրում է. «Պատուեա զհայր քո և զմայր»,
հավասար լափով և հավասար հարգանքով,
ինչպես վկայում է նաև Սողոմոնը իր առակ-
ների մեջ. «Լուր, որդեակ, խրատու հօր քո
և մի՛ մերժեր դօրէնս մօր քո» (Առակք Սո-
ղոմոնի, Ա 8), «Յամենայն սրտէ քոմմէ

փառաւորես զհայր քո և զմօր երկունս մի՛
մոռանար» (Սիրաք է 29):

Ինչո՞ւ որդիները պիտի հարգեն իրենց
ծնողներին: Որովհետև Աստուծոց հետո ծնող-
ներն են որդիներին կյանք շնորհել: Հիվանդ
որդու անկողնու մոտ ծնողներն են նստում
և հսկում: Որդիների երջանկությունը ծնող-
ների ուրախությունն է, իսկ նրանց վիշտը
ծնողների համար դառնություն է: Աստված
ծնողներին իր պաշտպանության տակն է
առնում և պատվիրում է որդիներին՝ «Պա-
տուեա զհայր քո և զմայր»:

Ծնողների վարմունքը և բարեպաշտու-
թյունն էլ հիմք չէ, որ որդիները հարգեն ի-
րենց ծնողներին, որովհետև այդ հատկու-
թյուններից զուրկ թեթևամիտ ծնողներ կան,
որոնք լքում են իրենց հարազատ զավակնե-
րին և անհետանում են, թողնելով դեռևս
խնամքի և հոգածության կարիք զգացող, ան-
խառանքի անընդունակ մանկահասակ երե-
խաներին:

Աստված չի ասում, թե պետք է պատվել
հարուստ, խելացի ծնողներին: Որդին երբեք
չպիտի ասի, որ իմ հայրը կամ մայրը ար-
ժանի չեն հարգանքի: Աստուծո պատվիրանի
համաձայն, որդին պարտավոր է հարգել իր
ծնողներին, որովհետև նրանք իր գոյության
պատճառ են դարձել: Ուստի և հշմարիտ է
առածը, թե չէ՞ փառք մարդոյ ի պատուէ

հօր իւրոյ լինին, և նախատինք որդւոց՝ մօրն անարգութիւն է» (Սիրաք Գ 13)։ Հոր պատվելը քո սեփական հարգանքն է, իսկ մօրն արհամարհելը քո սեփական նախատինքն է, եւ հենց դրա համար էլ Աստված խիստ պատիժ նշանակեց ծնողներին արհամարհող որդիներին. «Այն որ արհամարհէ զհայր և անարգէ ծնրութիւն մօր, խլեսցեն զնա ագռաւ ձորոց» (Առակք Սողոմոնի 17)։ Այս խըստութեան հետ մյուս կողմից Աստված իր խոստումն է անում, զգի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրին քարոսթեան»։

Այնտեղ, ուր ծնողները հարգվում են, ընտանեկան երջանկությունը և օրհնությունը անպակաս են, իսկ այնտեղ, ուր ծնողներն արհամարհվում են, այնտեղից էլ վերանում են օրհնությունը, խաղաղությունը և դրանց փոխարինում է երկպառակությունը և այսպիսով խորտակվում է ընտանեկան երջանկությունն ու քաղցրությունը։ Այն որդին, որ ծաղրում է իր ծնողներին, նույն վիճակին էլ ինքն է արժանանում մի օր։ Վատ որդին երբեք լավ հայր չի կարող դառնալ և ամենուրեք հաստատվում է, որ ծնողները նույն վարմունքին են արժանանում, ինչպես որ իրենք են վարվել իրենց ծնողների հետ։ Ով իր ծնողներին պատվում է, ինքն էլ իր որդիներին կհարգվի։ «Որ փառաւորէ զհայր, Իրկայնակեաց լինի» (Սիրաք Դ 6)։ Դրա համար էլ հոր օրհնությունը հաստատում է որդու տունը։ «Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոց» (Սիրաք Գ 11)։ Ուրեմն պատվի՛ր քո հորը և մորը։ Ամեն կերպ զգուշացի՛ր, որ նրանց չվիրավորես։ Մի՛ արհամարհիր, այլ լսի՛ր նրանց։ Մի՛ կարծիր երբեք, թե դու այնքան խելոք ես, որ նրանց խորհուրդը ավելորդ է։ Մի՛ ծաղրիր նրանց խոսքերը, նրանց սխալը ծաղրի առարկա մի՛ դարձնիր, նրանց թերությունները մի՛ հրապարակիր օտարներին առաջ։ Ով իր ծնողներին արհամարհում է, նա մարդկանցից ամենաապերախտն է երկրի վրա։ Մի՛ բարկանար նրանց վրա։ Այն որդիները, որոնք ծնողնե-

րին հակառակում են, ցավ են նրանց համար, դրա հակառակը՝ իմաստուն որդիները ուրախութիւն են։ «Որդի իմաստուն որդիներն է մօր զհայր, որդի անմիտ տրտմութիւն է մօր» (Առակք Սողոմոնի Ժ 1)։ Երբե՛ք թթու դժմի՛ մի՛ ցույց տար ծնողներիդ, կերպարանք մի՛ ծռիր ծնրունի հորդ դժմ և մի՛ այպանիր տկար։ Հիվանդ մորդ, Հարգի՛ր, սիրի՛ր նրանց խոր ծնրութիւնը, պատկերացրո՛ւ նրանց անցյալը, հիշի՛ր նրանց սերը և մտածի՛ր այն մասին, որ դու ևս պիտի ծնրանաս։ Ոչ մի անգամ ձեռք չբարձրացնես հորդ և մորդ դժմ։ Աթենացիք կտրում էին այն ձեռքը, որ հարձակվել է ծնողներին հարվածելու։ Մովսէս մարգարեն պատիժ էր նշանակել ծնողներին հարվածող որդիներին։ «Որ հարկանե զհայր իւր կամ զմայր իւր՝ մահու մեռցի, Որ րամբասեսցէ զհայր կամ զմայր իւր՝ մահու մեռցի» (Ելք ԻԱ 15—17)։ Սառայի՛ր նրանց, քո վարմունքով քաղցրացրո՛ւ նրանց դառն օրերը, անուշ խոսքովդ մոռացնել տու՛ր նրանց վիշտը, աշխատի՛ր լավ խնամել հիվանդութեան օրերում։

Հիշի՛ր Հովսեփին, երբ նա եղբայրներին հայտնվեց, նրա առաջին հարցն էր, թե արդո՞ք հայրը կենդանի էր, ինչպե՞ս էր նրա առողջությունը. ապա ինչ խնամքով նայում էր հորը։ Եթե ծնողներդ քեզանից մի րան են խնդրում, աշխատի՛ր ըստ կարելւոյն կատարել նրանց խնդիրը։ Այո՛, ժառանգե՛ք ձեր ծնողներին միևնույն նրանք իրենց աչքերը կփակեն։ Սիրեցե՛ք ձեր ծնողներին սրտանց, և այդ սերը միշտ ցույց տվե՛ք։

Քո ծնողների հիշատակը անշինչ պահի՛ր հիշողութեանդ մեջ, որպեսզի քո որդիները, որդիների որդիները իմանան, որ դու հինգերորդ պատվիրանը կատարել ես։

Ոչ միայն քո ծնողներին պիտի պատվես, այլ բոլոր ծնր մարդկանց առհասարակ։

Պատվի՛ր ծնրունիներին քո ծնողների նման և մի՛ մոռանար, որ դու էլ մի օր կծնրանաս և այն ժամանակ ծնրի պատիվը կիմանաս։





ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱՐՈՒՌԻՄ

Փետրվարի 25-ին, հինգշաբթի, Մայր Աթոռում սուրբ պատարագի մատուցմամբ, եկեղեցական արարողություններով և գրական հանդեսով նշվեց տոներ «Մերոց Վարդաճառց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատեհագմին»:

Ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ, Մայր Տաճարի Ավագ Ս. Սեդանի վրա, եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ է մատուցում Հոգևոր Ժեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արաբաճյանը:

«Հայր մեր»-ից առաջ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր Տաճարի ավագ բեմի առաջ, կատարվում է հոգեհանգիստ սպան համօրէն նշեցնելոցս:

Սրբոց Վարդանանց օրը տոնն է նաև Նորին Ս. Օծուխյուն Վեհափառ Հայրապետի անվանակոչության:

Հանդիսավոր սուրբ պատարագի վերջում, իշման Ս. Սեդանի առաջ, քարոզում է պատարագիչ սրբազանը՝ «Հաւատոյ գինու վառեալ Մամիկոնեան զօրավարին, յաշխարհօրէն պատերազմին ախոյեանն Եկեղեցւոյն քնարանով, հանգամանորեն կանգ առնելով Վարդանանց պատերազմի և Ղևոնդյանց քահանաների նահատակության գլխավոր զեպքերի վրա, Ավարայրի ճակատամարտի հաջթական ելքը որոշող բարոյաքաղաքական, հոգևոր-մշակութային և այլ ազդակների վրա և հայ ժողովրդի կյանքում Վարդանանց հերոսների թողած մեծ և անմոռանալի հիշատակի վրա: Քարոզի վերջում սրբազանը սրտագին բարեմաղթություններ է անում Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքի արեւատության, Մայր Աթոռի պայծառության և Մայր Հայրենիքի հզորության և խաղաղության համար:

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է Հայրապետական լիազրանքի Մայր Տաճարում ներկա եղող

հավատացյալները, ակնածանքով համբուրելով Վեհափառ Հայրապետի Ս. Աջը, շնորհավորում են նրա անվանակոչության տոնը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Սաղկյա դահլիճ, որտեղ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հանուն միաբանության շնորհավորում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը:

Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված իր անվան տոնի առթիվ արտահայտված սրտագին շնորհավորություններից և բարեմաղթություններից, իր խոսքի վերջում օրհնում է Հայոց Ազգը, Հայաստանյայց եկեղեցին, Հայրենի երկիրը և խաղաղություն, շինություն է բարեմաղթում ողջ աշխարհին:

Վեհափառ Հայրապետի անվան տոնի առթիվ ստացվել էին նաև քաղմաթիվ շնորհավորական հեռագրեր:

Ժամը 3-ին, Հոգևոր Ժեմարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկույթ Ժեմարանի ուսանողության կողմից՝ նվիրված Ս. Ղևոնդյանց և Ս. Վարդանանց խնկելի հիշատակին:

Պետական Հիմնի նվագից հետո, վերադառնալով սրբազանը կատարեց հանդեսի բացումը: Ուսանողության կողմից կատարվեցին օրվա տոնը ոգեկոչող խմբերգեր, մեներգեր, արտասանություններ, բնիկերգվեցին ճառեր:

Վարդանանց տոնի ազգային-եկեղեցական նշանակության նվիրված բովանդակալից զենուցումով հանգես եկավ Հոգևոր Ժեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս պր. Պարգե Շահբազյանը:

Ս. Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց մարտիկների հիշատակի ոգեկոչման նվիրված գրական երեկույթ վերաբացավ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և ուսանողության ուղղած հայրական խրատակա-նով:





Պ. ՇԱՀԱՐԱՋՅԱՆ

(Հոգեւոր Ժեմաւանի դոմոսխոս)

ԵՎԸՐԵՅՐԻ ԺԵԿԱՅԵՄԵՐՏԻ ՄԵԺ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Տասնհինգ դար շարունակ հայ ժողովուրդը, ամեն տարի, խորին երախտագիտությամբ, ոգևորությամբ և ազգային հպարտության ամենալեւրմ գագացումներով մեծարում է Վարդանանց պատերազմի նահատակների սուրբ և անմահ հիշատակը։ Վարդանանց պատերազմը մեր պատմության մեջ որակվել է որպէս ճկունական և ռազգային-ազատագրական պատերազմ։

Վարդանանց պատերազմը հայ ժողովուրդի մղած ճակատամարտն էր գերազանցապէս ազգային վտանգված սրբութիւնները պահպանելու համար։ Ահա թե ինչու տասնհինգ դար շարունակ հայ ժողովուրդը տոնում է միայն այս տոնը, որը սովորական ու պարզ ալքի համար կաւոյ է թվալ սոսկ ինչ-որ ճակատամարտի տարեգարծ։ Հայ ժողովուրդը երբեք ուղեմատենի, ուղեմամու ժողովուրդ չի եղել։ Հայ ժողովուրդը Վարդանանց տոնի մեջ տեսնում է ոչ թե ինչ-որ զենքի հաղթութիւնը։ Մեր պատմության մեջ թիշ լին նման դեպքեր։ Բայց հայ ժողովուրդը այդ դեպքերի հիշողութիւնը չի պահել մարմնավորելով դրանք առանձին տոնի մեջ։ Միևնուրեւ հայութիւնը միշտ տոնում է ու պիտի տոնի Վարդանանց ճակատամարտի տոնը մեծագույն սիրով, երախտագիտությամբ, ազգային արդար հպարտությամբ և խանդաղատանքով։

Անշուշտ Վարդանանց պատերազմը ունեցել է իր սոցիալ-քաղաքական շարժառիթները։ Ինչպէս հայտնի է մեզ պատմութիւնից, 387 թվականին Հայաստանը բաժանվեց

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։ Հայաստանի մեկ հինգերորդը վարչականորեն միացվեց Բյուզանդիային՝ կորցնելով ազգային ինքնուրույնության վերջին հնարավորութիւնն անգամ։ Արեւելահայաստանը ավելի քան 50 տարի պահեց իր կիսանկախ դրութիւնը։ Մանթէ, որ երկու հարեան հզոր պետութիւնների կողմից սպառնացող վտանգը հակակշռելու համար հայ ժողովուրդը ստեղծեց իր տառերը՝ հիմք դնելով սեփական մշակութիւն։ Ստեղծելով իր դպրութիւնն ու սեփական մշակութիւնը՝ հայ ժողովուրդը հիմնովին վերափոխեց իր դեմքը՝ վերաճնալուրդելով քրիստոնեական քաղաքացւոյն սկզբունքների համաձայն։ Հայ ժողովուրդը այնուհետև աճեց մշակութապէս, աճեց հոգեպէս՝ հաղորդակից դառնալով ավելի մեծ քաղաքակրթության։ Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության պայծառացումն ու բյուրեղացումը, իր իսկ կողմից ստեղծված մշակութի հետեւանքով, չէր կարող դուր գալ Պարսկաստանին։ Մյուս կողմից՝ պարսիկները շատ լավ գիտեին մեր ազգային ամենամեծ թուլութիւնը՝ հայ իշխանների կենտրոնախույս և փառասիրական ձգտումները։ Նրանք ժամանակը հասած համարեցին 450-ական թվականներին հայ ժողովուրդը վերջնականապէս իրենց մեջ ձուլելու համար։

Ի տարբերութիւն մեր՝ և դարի պատմիչ Վաղար Փարպեցու, որը Մյուսիյաց նախարարական տան ներքում տեղի ունեցած ինչ-որ երկպառակութիւններով և ընտանեկան ներ-

քին ինտրիգներով է քաղատրում այդ արյունահեղ ճակատամարտը. մեր մյուս պատմիչը՝ Նղիշեն, իր Պատմության ընծայականի մեջ, իր գործի լրջությանն ու տարողությանը. գիտակ դիտնական պատմարանի

պատճառների մասին Նղիշենի շարադրանքը, որով տրվում է այդ ժամանակվա Հայաստանի քաղաքական դրության բազմակողմանի, հանճարեղ նկարագրությունը, Համառոտակի պարզեցնք, ըստ Նղիշենի տվյալների,



ՄԵՐԻՐ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հմտությամբ տալիս է այդ մեծ եղելության հանգամանալից վերլուծությունը՝ պարզելով վարդանանց պատերազմի հիմնական պատճառները, դեպքերի զարգացման ընթացքը և հետևանքները, իհարկե, մենք հակված ենք ավելի ողջամիտ և դատողության մոտիկ համարել Ավարայրի պատերազմի դրդա-

սոցիալ-քաղաքական ու տնտեսական այն իրավիճակը, որ գոյություն ուներ այդ շրջանում Հայաստանում: Մի կողմից՝ թուլացել էր Բյուզանդական կայսրությունը, մյուս կողմից՝ պարսիկները առավել ևս թուլացնելու համար հայերի ներքին դիմադրական ուժը՝ սահմանափակել էին հայ իշխանների

դեռ մասնատված աղնվականների համար «հայրենիք» հասկացողությունը սահմանափակված էր սոսկ իրենց հայրենական կալվածների շրջանակով, Վարդանը նրանցից էր, որոնք գործում էին համահայկական ընդհանուր շահերի ըմբռնումով ու դիտակցությամբ, գիտակցությամբ, որ նրա մեջ պատվաստել էր Հայաստանայցի Եկեղեցին այդ օրերին, որպես միակ համահայկական ընդհանուր կազմակերպություն:

Վարդանը, այնպես ինչպես պատկերված է Եղիշեի պատմության մեջ, իրեն մարդ է իրեն զորավար օժտված է բնավորության այնպիսի դրական գծերով, որոնք հայ սերունդների լայն նրան դարձրել են մեր անցյալի հայրենասեր զորավարների շքեղ փաղանգի ամենալուսավոր դեմքերից մեկը: Իր ժողովրդի դժբախտ ճակատագրի իսկ բերումով, շնայած նա ստիպված է եղել հաճախ վերցնել զենք, բայց միշտ ձգտել է հաշտ ու խաղալ կյանքի, սիրել արդար ու շինարար աշխատանքը: Նրա գերագույն ցանկությունը, սրբազան իդեալն է եղել տեսնել իր ժողովրդին օտար լծից ազատ, ինքնիշխան, միակ տերն ու տնօրինողը իր սեփական ճակատագրի, Ավելի լավ կարելի չէ բնութագրել Վարդանին, քան այդ անում է Եղիշեն գործին ուղղված Վարդանի ճառի մեջ, որն ամենայն իրավամբ կարելի է համարել Եղիշեի պատմական երկասիրության ամենափայլուն և անկրկնելի էջերից մեկը:

Վարդանի հակառակ, Վասակն ու իր կողմնակիցները ոչ միայն իրենց նախընթաց գործունեությամբ ջլատում էին հայ ժողովրդի միաբանությունը, այլև վճռական պահին, երբ արհավիրքը ծնծում էր Հայաստանի դռները, սուր բարձրացրին իրենց սեփական ժողովրդի վրա: Զուր են մեր մի շարք պատմաբանների փորձերը արդարացնելու Վասակին: Վասակը ոչ մի դեպքում չի կարող արդարանալ ժողովրդի արդար ու անողորմ դատաստանի առաջ, և պատահական չէ, որ մինչև այսօր էլ Վասակ անունը համադոր է դավաճան անվան:

Տվյալ դեպքում հարցը հայ ժողովրդի լինելու կամ չլինելու խնդիրն էր: Ահա այդ էր, որ չմարտնեց Վասակը: Հազվերտի հավատուրացությունը թուղթը, ինչպես նշեցինք, միայն կրոնական հարց չէր: Հայերի դավանափոխությամբ Հազվերտն ուզում էր ցամաքեցնել այն ակունքը, որտեղից սնվում էր հայ ժողովրդի կենդանությունն ու կենսունակությունը: Հարվածելով ահա քրիստոնեությունը՝ Հազվերտը հարվածում էր հայ ժողովրդին իր ամբողջության մեջ: Ահա այս է, որ Վասակը չմարտնեց: Նա չմարտնեց նաև այն, ինչ կարող էր կազմել որակապես բարձր,

բայց թվով փոքր ժողովուրդների միակ անպարտելի զենքը: Փոքր ժողովուրդների դիմադրական ամենամեծ զենքը հայալու է՝ խառնված իր ազգային սրբությունների վրա: Փոքր ժողովուրդները մեծենելով միայն կարող են ապրել: Այս է Վարդանանց պատերազմի հիմնական խորհուրդը, որը գերազանց կերպով գիտակցվեց Վարդանի կողմից, բայց ոչ Վասակի: Ահա այդ գիտակցությունն էր, որ հերոսացրեց Վարդանին, իսկ Վասակին դարձրեց դավաճան:

Թե ինչպես վերջացավ Ավարայրի ճակատամարտը՝ հայտնի է բոլորին: Հայերը տանով տվին այդ ճակատամարտը, բայց պատերազմը՝ ոչ: Ինչպես գիտենք հետագա դեպքերի դարձացումից, պատերազմը փոխեց իր ձևը: Վարդանի մահից հետո, հայ խորքը նահանջեց թշնամու թվական գերազանցության առաջ, դիմադարձ հարձակումներով ամրացավ անտառների և անառիկ վայրերի մեջ: Պարսկական նվաճողները ներխուժեցին Հայաստանի խորքերը: Բայց հայերը չզազարեցրին իրենց դիմադրությունը: մերթ ալստեղ, մերթ այնտեղ նրանք շարունակում էին կռվել պարբերական ընդհատումներով: Ինչ չհաջողվեց կատարել Վարդանին, կատարեց նրա եղբորորդին՝ Վահան Մամիկոնյանը: 481 թվականի հայ ժողովրդի ապստամբությունը՝ Վարդանանց պատերազմի շարունակությունն էր, որն այս անգամ պսակվեց հաջողությամբ 484 թվականին կնքված նվարսակի դաշնագրով: Այդ դաշնագրով հայ ժողովուրդը վերանվաճեց իր արժանավորությունը, վերականգնեց իր երկրի ներքին անկախությունը: Առանց Ավարայրի չէր կարող հաղթանակել հայերի երկրորդ ապստամբությունը: Վարդանի, ինչպես նաև հայկական համագունդի նահատակությունը տվեց իր արդյունքը: Վարդանն ու Վարդանանք մեռան: որպեսզի ապրի հայ ժողովուրդը: Եվ հայ ժողովուրդը ապրեց՝ հասնելով մինչև մեր օրերը: Պատմությունը քանիցս ցույց է տվել, որ վերածնվում են միայն այն ժողովուրդները, որոնք գիտեն մեռնել, գիտակցաբար մեռնել:

Բոլոր փորձությունների միջով հայ ժողովրդի գոյատևման փաստով է բացատրվում Վարդանանց պատերազմի խորհուրդն ու իմաստը: Եվ այդ փաստը մեզ ներշնչում է այն համոզումը, որ ապրել կարող են միայն այն ժողովուրդները, որոնք գիտեն և մեռնել: Մահն ոչ իմացալ՝ մահ է, մահ իմացալ՝ անմահություն է: Այս է Վարդանանց պատերազմի զաղափարական ուսանելի կողմը մեզ համար, որ մեր ժամանակից դեռևս ավելի քան մեկ ու կես հազարամյակ առաջ սրբազան նշանաբանն է եղել Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Խո-

22
բենեացու, Բյուզանդի, Եղիշեի, Փարպեցու,
Եղեկի և Մեր մյուս լուսավոր ղեմաբերի, ո-
րոնք անմահ փառքով պսակեցին իրենց գա-
րը և լուսավոր ուղի բացեցին դալոց սե-
րունդների առաջ։

րուսացիների առաջ:
Վարդանանց դյուցազնամարտը դարձրե-
լաբունակ ներշնչել է բազմաթիվ հայ ա-
կանավոր գրողներին, որոնք հայ ժողովրդի
կյանքում տեղի ունեցած այդ նշանակալից
իրադարձությունը ներբողել են մեծ ոգեռ-
ուովյալով: Մեր վերածնունդի դարաշրջանի
այնպիսի գրողներ, ինչպիսիք են Շնորհա-
յին, Հովհաննես Իսաստասերը, Գրիգոր
Խաթեցիի և ուրիշների, բանաստեղծական
խոր ապրումով գրված բազմաթիվ երգերի
մեջ գեղարվեստական մարմնավորում են
տվել այդ թեմային: Մեր նոր շրջանի գրա-
կանության մեջ նույնպես այդ ճակատամար-
տը դարձել է գովքի ու երգի նյութ: Յուրա-
բանչյուր հայ ընթերցողի հայտնի են Ալի-
շանի, Սրվանձտյանի, Դուբյանի, Պատկան-
յանի, Դեմիրճյանի և արեւելահայ ու արե-
ւմտահայ մեր մյուս դասական գրողների
այդ թեմային նվիրված տարբեր ժանրի
բազմաթիվ ստեղծագործություններ: Այս
բոլորը վկայում են այն մասին, որ հայ ժո-
ղովրդի պատմական ճակատագրից անբա-
ժան է եղել նրա մղած պայքարը օտար-
երկրյա բռնակալության դեմ՝ հաւուն իր ան-

կախության և ազգային ինքնուրույնության։
Եվ ամեն անգամ իր ժողովրդի ազատու-
թյան և ազգային սրբությունների անաղարտ
պաշպանման նախանձախնդիր հայ զորդը
բուռն կրքով և անկեղծ ներշնչանքով է տար-
փոդել Տղմուտ գետի ափին տեղի ունեցած
այդ մեծ ճակատամարտը՝ նրա մեջ տեսնե-
լով իր իդեալների ու իղձերի լավագույն
արտահայտությունը։



ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԷ ԴՈՒՐՅԱՆ*

13. ԴՈՒՐՅԱՆ ԳՐԱԳԵՏԸ

Դուրյան մեր նոր գրականությունը ամեն համակրելի դեմքերն են մեկն էլ Ան կապտականի սերունդի մը, որ արևմտահայ գրականության ամենն մոռալ շրջանին հասավ, և չկրցավ իր հոմար գտնելու Համիդի ամենն դժն տարիններն էին, երբ դեռ նոր ալքերն էր քացած արևմտահայ գրականությունը և ճիգեր կրներ հասուննալու։ Այդ սերունդի բոլոր դեմքերն ալ չկրցան լրման հասնիլ, կամ կես թողուցին իրենց պտղաբերությունը։ Տարբեր պայմաններու մեջ ալիլի բեղմնավոր կրնային դառնալ Արփիարյան և Զոհրապ, Կամսարական ու Բաշալյան, Կյուրճյան ու Սիպիլ, և ալիլի տարբեր կաճեր սերունդը, որ հաջորդեց իրենց, արևմտահայ գրականության դժբախտ սերունդը, որ հորիզոն շունեցավ և զնաց լրագրության և ուսուցչության ասպարեզին մեջ ամլանալ կամ լքել զրիչն ու խամրիլ։ Բախտավոր քացառություններ եղան անոնք, որ այնուամենայնիվ շարունակեցին գրել կամ գացին ապաստանիլ արտասահման կամ հասունցան հոն։

Մենք պատանիներ էինք դեռ այն օրերուն, ու Դուրյանն էր, Պետրոս Դուրյանը, մեր ներշնչումներուն միակ աղբյուրը։

Դպրոցի գրասեղաններին կսկսի մեր սերունդի սեր Դուրյանի հանդեպ։ Մեր կյանքին այն շրջանն էր, երբ քանաստեղծությունն էր մեր պաշտամունքի, մեր ոգևորության միակ առարկան։

Մեր այն տարիքին ո՞վ չէր հափշտակված Պետրոս Դուրյանով։ Մեզմե ո՞վ չէր փորձած անոր նմանիլ, ըլլալ անոր պես հիվանդ, անոր պես դառնացած ու անոր պես մեծ։ Ո՞վ մեզմե երկյուղածություն մը ուխտի չէ գա-

ցած Սկյուդար անոր շիրիմին, ու գոց չէ ըրած անոր քերթվածները՝ «Տրտունջք»-ը, «Լճակ»-ը, «Իմ մահը», փորձելով երբեմն զանոք կապել ալ։

Երանի կուտայինք պերպրանցիներուն, որոնք կշնչեին անոր մասունքներուն առնթներ ու կրնային անոնցմով ամեն վայրկյան ներշնչիլ։ Իսկ մենք, Կեդրոնականցիներ, Սկյուդարեն այնքան հեռու, դժբախտներ էինք։ Կերպականայինք միայն այցն այց։ Կեդրոնականն էր դեռ Մեծարենց, երբ այցն մը դարձին, գողտրիկ քերթված մը գրեց՝ «Պետրոս Դուրյանի շիրիմին առջև»։

... Հուլիսով մեռավ ան, հուլիսով կապրի՝ դեռ,

Սառներուն նման, որ թարմ ու դալար
Իր գերեզմանն կենն քովն ի վեր
Իսկ մենք՝ ապրելով՝ ընդմիշտ կը մեռնինք
Ոգորումներեն, հույսերեն մոլար,
Եվ՝ մոռացումն է զոր հետ կը տանինք։

Մեր զմայանքը Պետրոս Դուրյանեն շատ շուտ պիտի հասներ Եղիշե Դուրյանին։ Ան ալ սկսեր էր արդեն հայտնվիլ զմայելի իր քերթվածներով, երբ դեռ դպրոցական գրասեղաններու առջև էինք մենք։ Արձակ այն էջը, զոր գրեր էր 1898-ին, Օշական այցելել հետո, հայ գրական հավաքածոներու զարդ պիտի շարունակե մնալ և զոր գոց ըրինք մենք, երբ դեռ Կեդրոնականն էինք, էջ, ուր մեզ կպատմեր Դուրյան ուխտի իր այցը Մեծ վարժապետին՝ Մեսրոպի ոտքը, մոտենալու համար անոր դամբարանին, թծրագրելու ձուլ հիացումի մեջ, ու համարյուրի տաք շրթունքներով քարի մը պաղ երակներուն մեջն ծծել հոգեկան կայծեր՝ երկար դարերով իրենց կրակը անշեջ պահող նվիրական նշխարներ։

* Երաժշտական «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի Ա և Բ համարներէջ։

րենք, չուզելով սակայն հավատալ, թե անոնց տակ փոշի դարձած ոսկորները կգտնվեն, չուզելով հավատալ, թե ասի-մը հողի տակ կրնային թաղել կենդանի գիրը: Ու հետո, հուզումով արքշիտ, տենչացեր էր ան.

«Ու եթե Մեծ վարդապետին ստվերագիծ ձեռքը տեսնեի գեթ՝ ոսկի մագաղաթի մը վրա, կամ աննման քահանայապետին գահար գիրերով դարդարված լանջապանակը տեսնեի գեթ, առաջին ու անգիտակից շարժումս պիտի ըլլար անգամ մըն ալ ծնրադրել ու թախանձագին խնդրել իրմէն.

«— Աղվոր Ա Բ Գ-եզ դաս մը տուր ինձի»: Այս արձակ զմայլելի կտորը առաջին անգամ մեզ բերավ կարդաց Հրանտ Ասատուր, որ հաճելի ընթերցումներով կհամեմեր աշխարհարար լեզվի իր դասերը Կեդրոնականին մեջ, և անկէ հետո Դուրյան մեր սիրած անուններն մեկը դարձավ, այն սակավաթիվ դեմքերու կարգին, որոնց կհանդիպեինք առիթն առիթ թերթերու մեջ, և որոնք կրնային զոհացում տալ մեր դրական հետաքրքրութեան:

Բայց, ավա՜ղ, հազվադեպ էին այդ առիթները:

Շրջան մըն էր, երբ Կոստանդնուպոլսո մեջ կասած էր հոգեկան ամեն թռիչք. հայ գրականութիւնը հոգեվարքի մեջ էր: Հին անունները իրենց պատանն էին քաշվեր ու տարին անգամ մը միայն կերեային մահկանացուներուն, թերթերու րացառիկ թիվերուն մեջ կամ տարեգրքերու էջերին, հետո դարձաւ իրենց պատանը քաշվելու համար:

Մեր միակ սնունդը հին թերթերու և պարբերականներու հավաքածուներն էին, զորս քանի մը առանձնաշնորհյալներ կերթայինք պրպտել զաղտուկ ազգային մատենադարանի դարակներուն մեջ: Կեդրոնական վարժարանի հարակից սրահի մը կողքին խուցի մը մեջ կդպված էին անոնք, և Բարգեն վարդապետ, ապագա Կիլիկիո կաթողիկոսը, որ Ղալաթիո քարոզիչ էր այդ տարիներուն, Կեդրոնականի տղոցմէն կկանչեր, որպէսզի իրեն օգնեն: «Շալրահիք»-ի, «Մասիս»-ի, «Արեւելք»-ի հին հավաքածուները կթղթատեինք հափշտակութեամբ և կոգնութիւնք իր ընկալումն մեջ փշրված սերունդի մը գրական ճիգերով:

Այլապէս այդ օրերու պատանիներս ուրիշ գրական սփոփանք չունեինք, բայց եթե «Մասիս»-ը միայն, մասամբ ալ «Արեւելք»-ը, որ կստացվեր Իզմիրէն: Պետք է ըսել, որ Տիգրան Արփիարի հիմնադրութեան օրերէն հայ գիրը, և ատեն-ատեն կհաղորդէր հոգեվանքեր կորզել երբեմնի համալսարաններէն: Գրիգոր Զոհրապ, Եղիա Տեմիրճիպաշյան, Սիմփի և ուրիշներ երբեմն կերեային «Մա-

սիս»-ի մեջ, նոր անուններու և սկսնակներու կողքին:

Դուրյան այդ օրերուն էր, որ տպեց իր մի քանի ամենեն զեղեցիկ ոտանավորները Տիգրան Արփիարի «Մասիս»-ներուն մեջ: Արարեալ այն քանի մը գողտրիկ քերթվածներ, որոնք լույս տեսան հոն 1904-ի Մեծ պահքի շարաթներուն, բանաստեղծ մը հայտնեին Նդիշե Դուրյանի մեջ:

«Տլառնընդառաջ»-ն էր անոնցմէ առաջինը, ուր արդեն քերթողը իր դիմագիծը չըզգացներ և զոր բացառիկ հափշտակութեամբ կկարդայինք այն օրերուն:

Բայց «Անառակ»-ն էր, որ Դուրյանի նվիրագործումն եղավ: Իրրէ բանաստեղծութիւն պզտիկ գահար մըն էր ան խոսքի ու ձևի, որ «Տլառնընդառաջ»-ին կհաշորդէր «Մասիս»-ի մեջ:

Անն՝ ծըրդ, Հայր, փոխեց ոսկիս մութ պրդինձի:

Բայց քանի որ շամբուշ կուտք մը պետք էր ինձի:

Ես պրդինձով ալ պատրանքն՝ ըրս Լուսեցի:

Անն՝ ծըրդ, Հայր, դարձուց նաշի՛հըս սև հացի:

Բայց քանի որ սեղան մը շվայտ պետք էր ինձի:

Ես սև հացովն ալ հեշտ պատահու ծամեցի:

Մեծարենց այդ բանաստեղծութեան տպավորութեան տակ էր, որ Կեդրոնականն «Մասիս»-ին դրկեց Նդիշե Դուրյանի «գրական կենդանագիր»-ը, ուր, հանձին անոր, Պետրոսն էր որ կողջուներ:

Ենթեք բանաստեղծ ծնած է արդեն, ինչպէս իր եղբայրը: Եվ ի՞նչ մտերիմ, ինչ սերտ շեշտ մը, ինքնատիւ զգացման, բառի ու քացատրութեան տեսակ մը շնորհալի ու գողտրիկ քնականութիւն ունին երկու եղբայրներն ալ, որոնք կնույնանաւ մեր դատումին առջև: ... Կարծես միևնույն Դուրյանն է, որ կխոսի մեզի, միևնույն Դուրյանն է, որ սակայն կրած է տարիքին ու կոշտմէն հարկադրած փոփոխութիւնները: Եւ մեծ հաճույք մը չէ՞ միթէ տեսնել մեր վաղամեծ սիրական քերթողին շարունակութիւնը՝ իր հարազատին մեջ: Ու ո՞չ ապաքեն Նդիշե եպիսկոպոսը մեր երեակայած Պետրոսն է. հասուն տարիքին բանաստեղծը, նվազ մեկամաղձիկ, ավելի խոհուն ու հզոր, միշտ քաղցր ու միշտ խառնափառ:

Եվ անկէ հետո ալ նվիրագործվեցաւ Դուրյան: Արմաշ էր դեռ իբր քերթող հայտնըված ատեն, և Իզմիրի մեջ, ուր 1904-ին գացեր էր իբր առաջնորդ, արդեն քերթողը

սկսավ պտղաբերել, հորինելով քանի մը տասնյակ քերթվածներ, որոնք 1909-ին ամփոփվեցան «Հովվական սրինգ»-ին մեջ:



«Հովվական սրինգ»-ը նույնքան ջերմությամբ ընդունվեցավ, որքան իր առաջին երգերը: Պահ մըն էր արեւմտահայ գրականութեան մեջ, երբ ծարավը կար զեղեցիկ խոսքի: Հուրբիթի առաջին տարին էր և մըթնոլորտը լեցված էր ճառերու աղմուկով: Մեծարենց արդեն չկար, Սիպիլ լոբր էր, ու շորցեր էր թաղարը, որուն մեջ կոստանդնուպոլիս զծոյն ծաղիկներ փորձեր էր հասցընել զույգ մը տասնյակ տարիներ, Համիդի ամենն զաժան օրերուն, իսկ անոնք, որ կրցեր էին դիմանալ, տիրող աղմուկին մեջ շշմարտ, տուրք կուտային ճանորդոն: Արտասահմանը նոր կրտսար իր զեմքը մեզի, ու նոր կհայտնվեր շքեղ երրորդութիւնը՝ Սիւսմանթո, Քեքեյան և Վարուժան, որ փառքով պիտի պսակեր շուտով արեւմտահայ քերթողութիւնը:

Բնական էր, որ սիրով ողջունվեր «Հովվական սրինգ»-ը: Վկա այն օրերու մամուլը, որ խանդաղատանքով լեցուն է: Արտաշես Հարությունյան, որ այդ տարիներու պաշտոնական գրախոս էր, առաջիններէն մեկը եղավ, որ փութաց քերթող մը նկիրագործել արեւմտահայ գրականութեան մեջ: Սապես կվերջացներ ան իր գրախոսականը:

«Հովվական սրինգ» հայտնութիւն մըն է: Դուրյան սրբազան բազմաթիւ տիտղոսներուն, մաքուր եկեղեցականի մը և բազմահմուտ բանասերի մը համբավը կվայելել: Քիչեր իրեն շափ լավ գիտեն իրենց լեզվին զաղտնիքներն ու շատ քիչեր աշխարհաբարը կգրեն իրենիւ նման զեղեցկադէմ ու մաքրաճաշակ հասկացողութեան մը համեմատ: Այդ բոլորը շատ ճիշտ է միայն անշուշտ, բայց արդարութիւն ընենք իրեն և ճանչնանք նաև ղիճքն իրր մեր ամենն տաղանդավոր բանաստեղծներն մին:

Տիրան Զրաքյանը, իր կարգին, շուշացավ արձագանքելու Մայկարացի Կարոյին: Դեռ մտալը չէր կաշկանդեր իր հոգին, երբ այդ տուրքը կուտար, և դեռ հստակ մտածումներ կգտնէս զծախտ Խնտրային գրչին տակ, որ շուտով պիտի մոլորեր շփոթութեան բավիղներուն մեջ, Տրիքոն եղբայր դառնալ և աղանդավորի զառանցանքներու մեջ իր միտքը փշրելն հետո իսպառ: «Շիրակ»-ի մեջ իր ստորագրած հոգվածը «Հովվական սրինգ»-ի մասին, ինչ-ինչ բաներ մատնանշելով հանդերձ, «կհաստատեր հրճվագին, որ Նոյնը եպիսկոպոս Դուրյան ճշմարիտ բանաստեղծութեան հասած է անոր մեջ, խոր ու մեկա-

մաղձիկ բանաստեղծութեան, և առանց դուշըն բաղձանքի ու սեթեթի, ամենալոյս քնականութեամբ և հակամայս, իր իմացականութեան հատուկ ճամբաներով»:

Ոշական, որ նոր հայտնվեր, ինքն ալ իրրի արձակագիր և գրադատի առաջին մարզանքները կընէր, և պետք է ըսել, որ շատ ավելի ողջամիտ և կշռված քան ինչ որ պիտի ըլլային իր հետագա դատաստաններն շատերը, խանդավառութեամբ ողջունեց ինքն ալ երբեմն իր ուսուցիչը, ըսելով, որ «Հովվական սրինգը անակնկալ մը ու միանգամայն լուրջ հայտնութիւն մը եղավ մեզի, և որ «խորապէս բանաստեղծ, շատ զգալուն հոգիով, զարգացած, նրբացած և դիւնտանտ իր մտածումով» մեր մեջ Դուրյան Նոյնը կնեկայացնէ իդեալ տիպը գրական հսկաներուն»:

Գրողներու այն խումբն անգամ, որ «երիտասարդ կհռչակեր ինքզինք, Վահրամ Թաթուլի բերնով կհայտնէր զմայլագին, Թե Դուրյան սրբազան կպատկանէ Նարեկացիներու և Շնորհալիներու քերթողական ու խնկասուրբ ու լուսագեղ շառավիղին», և կավերցներ. «Անոր հանգամանքը մերինը չէ, իրավ, այլ աղով հանդերձ մենք կհարգենք իր բազմակողմանի իմացականութիւնը և իր արվեստին կզմայլիքը»:



Միահամուռ շափով ողջունված իր քերթողական երախայրիքին մեջ, Դուրյան ալ այնուհետե կուրք մը դարձավ: Ժիշտ է՝ իր ստեղծած պաշտամունքին մեջ դեր կատարած էին անձին հմայքը, զոր վաղուց շահեցուցեր էին տարիներու իր վաստակը մտավոր տարբեր գեղեցկներու վրա, ինչպէս նաև հմայքը, զոր իր անունն իսկ իրեն կրքեր իր արդան և մանավանդ իր հոգեկան կապին համար այն մյուս Դուրյանին հետ: Բայց իր շուրջ ստեղծված զմայլանքի այս մթնոլորտը շատ բան կպարտի քերթողական իր արժեքներուն ալ:

Նախ հոգեւոր քնարին վրա ինքնատիպ նոր յար մը կղնէր ան: Վերջին դարերուն շատեր էին նյութեր քաղեր Աստվածաշունչին հոգեվոր երդեր շարագրելու համար. բայց ոչ ոք չէր կրցեր ելլել տափակութենէն վեր: Դուրյան կուգար արվեստագետի մոգական ուժով ոչ միայն գունհիւսնէն աղատել իր ընտրած սովորական նյութերը, այլ նաև բարոյախոսի, քարոզչի, խրատողի շապիկը ուսերեն նետել հաճախ:

Հետո, արտահայտութեան բոլորովին նոր ձև մը կրքեր հայ քերթողութեան մեջ. բառերու այլադանութեան մտահոգութիւնը, որ, իրավ է, երբեմն ծայրահեղութեան կառաջնորդեր արվեստագետը, բայց նաև կողա-

տեր զայն հասարակ-տեղիքներե, բառերու
կրկնութենե, միօրինակութենե:

«Հովակիմյան սրինգ»-ն հետո ցամաքացի կարծես իր ներշնչման հողագրության ակը: Հետագային շատ քիչ եղան իր քերթողական ստեղծագործությունները: Եվ անհրաժեշտ էր իր նորությունները բերին: Սրինգը սպառնում էր իր շունը, փոքրիկ գրքուկը, զոր 1926-ին տպեց նրուստացմի մեջ «Դրվագներ մանուկ Հիսուսի կյանքին» խորագրին ներքև, մանուկներու համար գրված ուսանողներին, ու, որոնց մեջ շունը կպակսի, մինչև տաղաշափը կհամարի դիմանալ: Կործանելով ուսանողներուն ձևը գունն փրկել:

Վերստին Բաբ Գևորգ Կրկուն
 Ինչպես ժամանակին ալ զայն ընորոշեց
 այս թողորդ գրողը, Դուրյան սրբազան
 պողոթնում շունեցաւ, Ներսէն կրակ լթափեց
 Ան թողորդ, որ հոգին հաստմեա, ու լավ
 մը ճանչեա աշխարհը, Ան հոգեոր քաներուն
 կայանք իր սիրաւ ու անտանգ հուրս տեսիլք
 ճանաչցաւ, ու հոգեոր տեսիլքներուն մեջին
 դիտեց աշխարհը, որպէսզի առանց կրքի
 տեսնե, և առանց շփոթութիւն, Ան երբեք
 աշխարհ լմտաւ ինչպէս ըրեր էին մեր հին
 վանականները, և Աստուծո հետ խոստած ա-
 տեն, երգեր էին վարդն ու բլրակը և ազգորո-
 թլուրը Աստվածածնին:

Դուրյան սրբազանն ոչ իսկ մարդոց մոտեցնավ իր երգը պատմելու ատեն անոնց։ Անքաղ իսկ շունեցավ։ Ան սարի մը կատարը նստավ՝ ծառի մը շուքը ճարած։ Հետուն էին քաղաքն ու իր ժխորը և իր շուրջը ոչխարներ։ Դու հոտ մը կար միայն, որ կարածին լռիկ, շուն եկան իրեն իր տեսիլները, ու հեն շուն լովավ իր սրինգին։

Մեր հին տաղասացները լայն կրանային իրենց կամամուտը և չէին վախնար, որ աշխարհը կ'ստեն ներս: Անոնք երբեմն իրենք կերթային փնտռելու դուրսի աշխարհը: Մտքի մարզանքի պտուղ չէին ամեն ատեն մեր վաճաղաններում սանձարձակ պատկերները: Բանո՞ք կայանքին էին քաղված հաճախ: Վանքի խուցին մեջ նստած, պիտի կարենա՞ր երգել Կոստանոթին Երզնկացին կամ Գրիգորին Աղթամարցին, Չովհաննես Քրկուրյանցին կամ Ղազար Սեբաստացին այլևայն ինչպես երգած են:

ԴՈՒՐԿԱՆ ՎԱՆՔՐ ՄՆԱԳ ՄԻՂԱՌ:

Մեր հին բանաստեղծներին շատերը սիրած են հակադուրբյունը։ Մասնավանդ մեր տաղասացներուն մոտ շատ կ'անդիպինք դեմ դիմաց հանված դրախտն ու դժոխքը, այսպէս շարժի կյանքն ու անդենականը, հոգին ու մարմինը, շարն ու բարին, դիշերն ու ցեղեկը, ամառն ու ձմեռը, որում հաճախ կ'սկսին դիմառնաբար և կ'աքաղին որպեսզի զիրար ընկճեն։

Դուրյան սրբազան ևս իր քերթյաճնեբրոն
մեջ դեմ դեմի կ'անն երկու աշխարհներ, ոչ
թե հոգևորականն ու աշխարհիկը, կամ քա-
րոյականն ու անքաթոն իրենց սովորաբար
հասկցված իմաստով: Ոչ իսկ մեղավորն ու
անմեղն է, որ դեմ դիմաց կուգան միշտ ա-
նոնց մեջ, Դուրյան կ'ապագային կ'որոշեն, որ
կխլորտ մարդ էակին մեջ, ու կամքը նույն
այդ մարդ էակին, որ կփորձե իր կրթեան
ընկճել:

Ընկճելը
Աստվածաշունչը անսպառ աղբյուր էր ի-
րեն համար այդ հակադրություներն ստեղ-
ծելու, մանավանդ Ավետարանի առակները,
ինչպես ժԱնառակք-ը, ուր ան զհակադրե-
լալեհեղձ-ն ու քորոնությունք-ը:

Նմանություններ ստեղծվելու ճիգը, գործեր հին քերթողներին շատերն ունեցած են, ինչպես Նարեկացին ու Շնորհալին, Դոկտյան առանձին, Բայց անչափազանցության չի տանիր հնչական խաղերը և կգոհանա երաժրչապանն պարզ քմայքով մը, որ հաճելի է սակայն ականջներու.

Յնորակո՞ծ մըտքին հաժումովը ցիր,
Զեռքը երկնցուց քղանցքին Հիսուսի:

Հոգր հանդարտիկ՝ շուներ ելեէշ,

Հովը հանդարտիկ շունքը ցլակի:
Շունը մը չէր խաղար տերեներուն մեջ:

ԱՆԵԾՔՐԴ, Հայր, պերճ պատմունանդ
դարձուց քուրձի,

ԱՆԵԺՔՐԴ, ՀԱՅՐ, ՃՐԱԳՐԱՍ ԴԱՐՃՈՅ
ՃԱՅՐՈՒՄ ԲՈՅԻՄ

Բայց երբեմն ալ գրչի գրոսանքի տպա-
վորութիւն կ'ըողու: Ահա քանի մը տող
ժողովարի համարւորքս-են.

Անոր համարւոյրը շուներ
Շողի մը բորբ շառափր,
Որ բիրբերեն կկաթե
Հուզումներու տարափր:

Անոր համարվոր փըշեց.
Խորշակի մը խարշակը,
Փոթորկելով ոսկեփունը
Երազներու թռփակը:

Տիրականը բանաստեղծն էր գրագետ Եղիշե Դուրյանի մեջ, հոգևոր ներշնչումներով, միատիկ ապրումներով և ավետարանական պատգամներով բանաստեղծը, որ զանեղ տափակությամբ ու հասարակ տեղիքներով ցանցերեն փրկած, երգեց մտածման նոր երանգներով և ձևի կատարելությամբ մը, հանդիսանալով սմբեր օրերով Շնորհաբանի, ինչպիսի զայն որակեր է Ամենայն Հայոց կաթողիկոսին կոնդակը:

Չենք գիտե՞ք՝ իր սքեմի՞ն պետք է վերագրենք, թե փր խառնվածքին, եթե իր քերթվածները չկրնան դուրս գալ իրենց կրոնական պատյաննե՛ս: Բայց հայ գրականության պատմությունը պիտի չկարենա դալն ուրանալ իբր քանաստեղծ՝ հայ քերթողներուն հանգրվանները պատմած ատեն, որովհետեւ, թե՛ն ամփոփված կրոնական պատյանի մեջ, իր քերթվածները կրցեր էր պճնել շունչով ու խորհուրդով, և ունեցեր էր ձեռնի ալ մտահոգությունը:



Դուրյան քանաստեղծը արձակի մեջ ալ երբեմն քանաստեղծ է, մերթ ջերմ ու հաղորդական՝ ինչպես հեղասահ առվակ, և մերթ ալ զուսպ ու քանդակված՝ կիտվածանկարի մը նման:

Դուրյան գրաբարյան մըն էր առջի օրերուն, ինչպես էին իր սերունդին շատերը, ինչպես էին, օրինակ, Մամբյանը, Մեքենյանը, Սիպիլը, բոլորն ալ Սկյուդարի մեջ հասունցած իրեն պես: Գրաբարի պաշտամունքն ունեին բոլորն ալ ի սկզբան, ու քծիծաղով կնայեին նոր լեզվին վրա, որ արդեն մարմին առած, կուճանար ու կգեղեցկանար տակալով: Գրաբարի երկրպագուներն շատերը վարպետներ պիտի դառնային հետո աշխարհաբարի մեջ, ինչպես Սիպիլը, որ երբեմն գրաբարի մոլի պաշտպան՝ պիտի գար միանար աշխարհաբարը կերտողներու փաղանգին:

Դուրյանի լեզուն, ի սկզբան, Պրծեւից այն լեզուն է, ուր գրաբարի մագիլներուն մեջ դեռ կտառապի մեր նոր գրական լեզուն: Զիշտ է, շրջան մըն է, ուր պարտված են Գարազայաններն ու Գորգենները գրաբարը կյանքի կոչելու իրենց ցնորքին մեջ, բայց դեռ մարդիկ կան, որ չեն ուզեր գիշիլ դիրքերը ու դեռ կհավատան, որ կրնան հարուժույն առնել մեռյալ լեզուները: Ու երբ կգիշին աշխարհաբար գրել՝ չեն կրնար դալն չպճնել գրաբարի զարդերով:

Դուրյան տակալ աշխարհաբարի ջերմ պաշտպան դարձավ և Հակոբ Գուրգենի հորեկյանին օրը, ինչպես հիշեցինք, պանծացուն բրավ գրական մեր նոր լեզվին՝ դալն ընդունակ հռչակելով լրիվ արտահայտելու դարը:

Ճիշտ է, Դուրյանի լեզուն չկրցավ հասնիլ վերջնական բյուրեղացման, բայց ան զրտվեցավ իր խորթություններին, գրաբարի ամեն հետք թոթափեց վրային: Ինչպես ըսինք, Դուրյան մինչև վերջն իսկ չկրցավ հրաժարիլ վաղուց արդեն լքված քառեր մոռացության գրկին դուրս կորցնելու իր փորձություններն:

Դուրյան քանաստեղծ էր մանավանդ իր քարոզներուն մեջ, Հոն արդեն հոգին կքակեր իր կապանքները, — ալիք-ալիք կլայնեար, թո՛ղ չկառնէր ոլորտն ոլորտ, ու քառերը, փրենք ալ, սանձերն արձակած, կհորդեին, առանց սակայն ճիգի, առանց քրտնազքոսության:

Չույանյան, քանաստեղծ Դուրյանը պատկերած ատեն, կընդգծեր ժամանակահատվածը, որ կարտաշնչվի քարոզներին այդ եկեղեցականին, որուն խոսքը, միշտ ծանրաբեռն՝ հոծ մտածումով ու բազմակուտակ հմտությամբ, ունի նաև միշտ թրթռում մը ներքին, մտքի լայնարաց թևերու համար այլ հզոր շարժման մը շունչը: Նոր այդ խոսքն իր բոլոր ծանրությամբ միջոցին մեջ կքարձարացնե և ունկնդիրներու հոգվույն վերև դալն կառկախն՝ իբր թավ ու խոր ներդաշնակություն մը քարձրություններն իշնողա:

Դուրյան թարգմանություններ ալ փորձեց: Առաջին հերթին Շնորհալիին սկսավ վերածնել աշխարհաբարի: Դեռ Կեղորոնական էինք մենք, երբոր Բարգեն վարդապետի «Լույս»-ին մեջ, 1905-ին, լույս տեսան հաջորդաբար «Այսօր անճառ»-ը, «Աշխարհ ամենայն»-ը, «Առաւօտ լուսոյ»-ն, «Նորոգող»-ը, «Արարչական»-ը, «Աստուած անեղ»-ը, մինչ Հիվանդանոցի «Ընդարձակ օրացույց»-ներուն մեջ լույս կտեսնեին «Նորաստեղծեալ»-ը, «Նայեաց սիրով»-ը: Փառք մը չբերին սակայն իրեն այս վերածումները: Գրչի դրոսանքներ էին ավելի, որոնց կարիք ալ չունէր մեր գրականությունը: Անոնք նույնիսկ վեճի դուռ բացին, «Բյուրեղանքներ»-ի մեջ երեցավ կծու հոգված մը: Հոգվածը զավառն կուգար, ու ստորագրված էր «Պոետոսի թղթակից» (հետո միայն իմացանք, թե այդ ստորագրության տակ հայտնի գրագետ մը ծածկված է, Մեքենյան Կյուրճյանը, երբեմնի իր դասընկերը, որ Գաստեմունի աքսորված էր այն օրերուն): Հետո սկսավ բավական սուր քանակե՛մ մը երկու հին դասընկերներու միջև:

Իր վերածումներն ճշմուշ մը ահա.

Նայե՛ սիրով, ո՛վ Հայր գրթած,

Մեզի որ քու ենք ըստեղծված.

Հրեշտակներուն զունդն ու քանակ

Տրկարներուն դի՛ր պահպանակ.

Փորձանքն զմեզ փրկել վերեն,

Ու խավարի շար դներեն,

Որ թե՛ ցերեկ և թե՛ գիշեր

Քեզ անգաղար փառք տանք, ո՛վ Տեր:

Ի՛նչ թանկարժեք բան կրնային բերել նման վերածումները. մնաց որ Շնորհալիին թարգմանվելու կարիք ալ չունէր հասկնալի ըլլալու համար հավատացյալներուն: Հոգեոր

Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ*

Նշանակում է այս բոլորից հետո, որ Անթիլիասի դիրքը անկեղծ չի եղել Հունիսյան համաձայնագիրը որպես կողմերի միջև կայուն համերաշխության հիմք ընդունելու Առնվազն կարելի է կասկածել այս հարցում Անթիլիասի դիրքի անկեղծության և նրա ուղղամտության վրա: Այլապես անբացատրելի է մնում այն, թե ինչու՞ նույն Անթիլիասը և համաձայնագիրը ստորագրող Զարեհ և խորեն եպիսկոպոսները, որոնք նույնիսկ իրենց կողմնակիցների թիվը ցավը և կրած հուսախաբությունը (սեպտեմբեր 1959 թ. ռոմա-սեպտ., էջ 302) հրավիրելու շափիլիթկոտություն են ցուցաբերել համաձայնագիրը ստորագրելու, դրանից 15 օր առաջ, Հունիսի 9-ին, և ապա Հունիսի 22-ին շեն ընդառաջել Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջարկին:

Հետագայում միայն տեղապահ խորեն եպիսկոպոսը ինքնապաշտպանության էր դիմում այն անուրջ պատճառաբանությամբ, թե Մայր Աթոռի Հունիս 22 թվականի հեռագիրը ուղղված էր ոչ թե իրեն, խՈՐԵՆԻ եպիսկոպոսին, այլ ՓԱՌԵՆԻ եպիսկոպոսին:

Ստում է տեղապահ խորեն եպիսկոպոսը: Մայր Աթոռի հեռագիրը ուղղված էր իրեն: Եթե նույնիսկ անունների մեջ կատարվել էր հեռագրական սխալ, որի համար մեղավորը Մայր Աթոռը չէր, հեռագրի բովանդակությունը պաշտոնապես պատկանում էր խորեն և՛

պիսկոպոսին: Մի՞թե տեղապահ խորեն և՛ պիսկոպոսի հասցեին չէին ուղարկվել նախկին բոլոր պաշտոնական հեռագրերը, որոնց թվում նաև Հունիս 9-ի և ապա Հունիս 22-ի հեռագրերը, ինչպես նաև ռոմա-սեպտ. 20-ի և այլ հեռագրեր: Հեռագրերի այս տարափի մեջ կարող էր մի հեռագիր ուղարկված լինել Փառեն սրբազանին, այն էլ այնքան կարևոր մի հարցով, և որը միաժամանակ պատասխան էր Տ. խորեն եպիսկոպոսի 16 Հունիս թվականի հեռագրին, ուղարկված Մայր Աթոռ:

Նորից մի պահ ընդունենք, որ հեռագրական պաշտոնյայի մեկ սխալի հետևանքով խՈՐԵՆԻ փոխակերպվել էր ՓԱՌԵՆԻ: Մի՞թե անունների այս շփոթությունը շատ կարևոր պատճառ պետք է դառնար համերաշխության ձախողման մեջ, եթե իրապես անկեղծ էր Անթիլիասի դիրքը:

Ահա թե ո՞ւր է իջել Անթիլիասի բարոյական հասկացողության մակարդակը:

Եվ վերջապես, եթե իրոք Անթիլիասը անկեղծ և ուղղամիտ էր իր վերաբերմունքի մեջ, կողմերի միջև համերաշխությունը դուրս էր գնալու իր ցանկության մեջ, և չէր հետապնդում հետին մտքեր և թաքուն հաշիվներ, ինչու՞ համար հետագայում էլ ոչ միայն ընդառաջեց, այլ նորից նույնիսկ թխուսքի նստիլը լուզեց, Վեհափառ Հայրապետի րացատրությամբ, այն պաշտոնական եկեղեցական ու աշխարհական անձնավորությունների հետ, որոնք, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Անթիլիաս դիմեցին՝ Հունիսյան

* Շարունակված «Էմիթիոն» ամսագրի 1959 թվականի Ը-Թ, Ժ, ԺԱ, ԺԲ և 1960 թվականի Բ համարներից:

Վեհափառ Հայրապետը իր օգոստոս 7 թվակիր հեռագրով, ուղղված տեղապահ հաղ արքեպիսկոպոսին, խոր վշտով դատապարտում էր Անթիլիասում օրը-ցընեկով կատարված բռնությունները և հորդորում էր միաբանությանը՝ ի շահ Աթոռի գոյության և հեղինակության, համբերությամբ տանել ամեն զրկանք և բռնություն.

«Մեր խոր վշտակցությունը կհայտնենք Անթիլիասի մեջ պատահած դեպքերուն համար, որոնք ժխտումն իսկ են հոգևոր կյանքի և անպատվարներ մեր Ազգի համար: Դուք, սրբազան եղբայր, կողմած եք պատմական դեր կատարելու և ապահովելու ձեր Ս. Աթոռին գոյությունն ու հեղինակությունը ձեր իմաստությամբ, համբերությամբ և վճռականությամբ, զի Աստված ընդ ձեզ է և Մենք ազդեցող ձեր գործի հաջողության համար: Մայր Աթոռը և մեր ամրոցը Եկեղեցին ու ժողովուրդը ձեր կողքին են ի սեր մեր սուրբ հավատքի և Ազգի (սեղմիածին», 1957 թ. հուլիս, էջ 12):

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, ընթացք տալով Անթիլիասի միաբանության մեծամասնության անունից ստացված հուլիս 27 թվակիր հեռագրին և ներկայացված խընդրանքներին, ինչպես նաև Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե սրբազանի օգոստոս 2 թվակիր հետևյալ հեռագրին, «Միաբանության կողմեն հորհրդի պաշտոնազրկումեն հետո, հորհրդ իշխանությունը հանձնեց Ջարեհին, որ բունի ապօրինի որոշումներ կպարտադրե միաբանության անդամներուն: Գործը հանված է արդարության առջև, բայց առանց մեծ հույսի: Որոշված է օծումը կատարել երկու եպիսկոպոսով: Անհրաժեշտ կհամարենք Ձեր միջամտությունը շտապ կարգադրության համար: Գնորդ Կաթողիկոսի միջամտության նման, Կապասենք Ձեր շտապ հրամանին», Մայր Աթոռ Ս. էջմիածնի Գեղարգուն Հոգևոր Խորհրդի առաջարկով (1956 թ. օգոստոսի 10-ի նիստի արձանագրությունը, տն՝ս սեղմիածին», 1956 թ., № 8—9, էջ 27), իրավունք և պարտք համարեց 1956 թվականի օգոստոսի 13-ին հեռագիր հղել Լիբանանի Հանրապե-

տություն նախագահ Նորին Վսեմություն Պր. Փամիլ Եսմունին Անթիլիասի վերջին իրադարձությունների առնչությամբ:

Լիբանանի Պր. Նախագահին ուղղված իր հեռագրում Վեհափառ Հայրապետը գրել էր.

«Թույլ տվեք ողջունել զՁեզ և հայ ժողովուրդի հավատքի դարավոր կեդրոն Ս. էջմիածնեն բերել Մեր բարեմադրությունները և հայրապետական օրհնությունը Ձեր ժողովուրդին և Ձեր աջքան գեղեցիկ երկրին:

Մանթ ին Ձերդ Վսեմության այն ներքին հակամարտությունները, որ սկսած էին ծավալ ստանալ վերջին տարիներու ընթացքին Անթիլիասի միաբանության և Լիբանանի և Սուրիո հայ ազգաբնակչության ծոցին մեջ, նոր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ:

Որպեսզի կանխենք խորացումը այդ հակամարտություններուն, Մենք անձամբ եկանք Անթիլիաս անցյալ փետրվարին, հույս ունենալով, որ Մեր ներկայությունը կրնա կրքերը մեղմել և ընտրությունը կատարել տալ օրինականության, համեմատության և քրիստոնեական սիրո մթնոլորտի մեջ:

Դժբախտաբար հուսախար եղանք և վշտահար մեկնեցանք Ձեր հյուրընկալ երկրեն, որովհետև գտնվեցան մարդիկ, որոնք չկարողացան հասկնալ Մեր հոգին և ոչ ալ Մեր գործի քրիստոնեական ոգին, անխղճորեն քաղաքական վերագրումներ ընելով Մեզի:

Մեր մեկնումեն հետո, փետրվար 20-ին, Անթիլիասի մեջ կատարվեցավ ոչ օրինական ընտրություն մը Ջարեհ եպիսկոպոսի վրա, որ Հայ Եկեղեցվո Նախկոպոսներու ժողովը հռչակեց անընդունելի, որով և մերժվեցավ անոր օծումը և Ջարեհ եպիսկոպոս չկրցավ կաթողիկոս դառնալ: Այդ օրեն սկսյալ Մենք ըզմիցս կոչ ըրինք նախկին տեղապահ հորհրդ եպիսկոպոսին՝ հրավիրելով, որ օրինականության մեջ մտնեն և ենթարկվին Հայ Եկեղեցվո հոգևոր հեղինակության և միության ոգիին, սակայն ամեն անգամ գտնվեցանք մերժումի կամ լուռության առջև:

Որպես հետևանք այդ աննախընթաց հորհրդ հակակարգապահական կեցվածքին, հորհրդ եպիսկոպոսի դեմ կրողոքեն և Ջարեհ եպիսկոպոսի ընտրությունը ոչ օրինական և անընդունելի կգտնեն Անթիլիասի Աթոռի մնացյալ հինգ եպիսկոպոսներեն շորսը և միաբանության մեծամասնությունը, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո հայոց Պատրիարքական Աթոռները, Հայ Եկեղեցվո բոլոր 27 եպիսկոպոսները բացի մեկեն, և

* Անկարկությունը վերաբերում է Գեղարգ Զ. Կաթողիկոսի 1950 թվականի 7 նոյեմբեր թվակիր հեռագրին, ուղղված Թուրքիայի Հանրապետության նախագահին, Կոստանդնուպոլսի հայոց նոր պատրիարքի ընտրության հարցում Ստամբուլի կուսակալի արձակած հակասահմանադրական նոր հրահանգի դեմ:

վերջապես գրեթե ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը:

Այս բոլորն հետո տեղեկացանք, թե Կիլիկիո Աթոռին միաբանական ժողովը 23 հուլիսին օրինական մեծամասնությամբ նոր տեղապահ՝ ընտրած է գերաշնորհ Տ. Խաղարքեպիսկոպոսը: Մակայն անհնազանդները և ոչ օրինականները բռնի ուժով և վայրագ միջոցներով, շարք մը միաբաններ մարմնապես ալ վիրավորելով, սարսափի մթնոլորտ մը ստեղծած են Անթիլիասեն ներս, որպես-դի նորընտիր տեղապահը չկարողանա իր իշխանությունը գործադրել, և այս բոլորին իբրև հետևանք, ոստիկանությունը ստիպված է եղած միջամտելու և խնդիրը հասած է պետական արդարադատության առաջ:

Տեղեկանալ այս բոլորի մասին Մեզ համար մեծ վիշտ է:

Որպես Մայրաքույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Մենք իրավունք և պարտականություն կնկատենք Ձերդ Վսեմության բարձր ուշադրության հանձնել,

ա. որ գերաշնորհ Խաղարքեպիսկոպոսը Մենք կհանչանք որպես օրինավորապես ընտրված տեղապահ Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին:

բ. որ Զարեհ եպիսկոպոսը ոչ կաթողիկոս է և ոչ ալ տեղապահ, և գուրկ որևէ հոգևոր վարչական իշխանությունն Կաթողիկոսի իշխանությունը և շնորհը կբխին միայն Աստուծո ողորմութենեն Ս. Հոգվո ներգործությամբ, կանոնական ձեռնադրությամբ և Սրբալույս Մեռուի օծումով: Ընտրությունը, նույնիսկ եթե օրինական պայմաններու մեջ եղած ըլլա, ուրիշ բան չէ, եթե ոչ թեկնածություն մը առաջադրությունը՝ ներկայացված Եկեղեցվո նվիրապետության հոգևոր իշխանություն:

Միաժամանակ կոչ կընենք պետության ղեկավարի Ձեր բարձր գիտակցության, որ Ձեր հեղինակությամբ և արդար ու բարյացակամ աջակցությամբ օգնեք Հայ Եկեղեցիին և հայ հավատացյալ ժողովուրդին, որ հնարավոր չափով շուտ Անթիլիասի Հայոց Կաթողիկոսության Աթոռին մեջ վերահաստատվին տեղապահ Խաղարքեպիսկոպոսը և միաբանության օրինական իշխանությունը և ներքին խաղաղությունը:

«Շնորհք և խաղաղութիւն Ձեզ ի Տեառնէս:

1956 թվականի փետրվար 20-ի թիւրի և անընդունելի ընտրությունից հետո, հակառակորդ կողմը, որը ազանցակցականներու ազդեցության ներքե էր, ըստ Հայության Անթիլիասի դպրեմանքի դասախոս Բ. Եղիայանի (սեպտեմբեր, 1959 թ. օգոստոսական, էջ 321), աշխատում էր բոլոր միջոցներով «մի կերպ» կատարել նաև «օծում»-ը: Այս բո-

լորից հետո Տ. Խաղարքե, Տ. Զարեհ և Տ. Ղևոնդ եպիսկոպոսները, փոխանակ անդրադառնալու իրենց հետևողականորեն բացասական և մերժողական դիրքին, որով վտանգվում էր Հայ Եկեղեցու միասնությունը, իրենց համախոհ գործակիցների ձեռքում կույր գործիք դարձած, փորձեցին «օծում»-ը կատարել սեպտեմբերի 2-ին, ուսմահարելով եկեղեցական կարգ ու կանոն, ավանդություն և Ձեռնադրության Մաշտոց:

Օգոստոսի 27-ին գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոսը հեռագրում էր Մայր Աթոռ սեպտեմբերի 2-ին կատարվելիք կաթողիկոսական օծման մասին:

«Վեհափառ Զարեհ Կաթողիկոսի օծումը պիտի կատարվի սեպտեմբեր 2-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մեջ»:

Օգոստոսի 30-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, միշտ լավատես և ցանկացող խաղաղության, համերաշխության ձեռք էր երկարում նորից Անթիլիասին և նախատեսելով մեծ վտանգը, Տ. Խորեն, Տ. Զարեհ և Տ. Ղևոնդ եպիսկոպոսներին հայրաբար զգուշացնում էր հեռու մնալ հակականական նոր արարքներ գործելուց, Հայ Եկեղեցու ժողովը պառակտում և հերձուխ ստեղծելու մտադրությունից և կոչ էր անում սրտից բխած ջերմ խոսքերով և հորդորներով՝ հետաձգել սեպտեմբեր 2-ի արարողությունը, և խոստանում էր իր հայրապետական հեղինակությունը ի գործ դնել նոր ու զորձեակալ առաջադրվող, ուղի գտնելու համար ի շահ Կիլիկիան Աթոռին և Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսական օծման:

Մինչև սեպտեմբեր 2-ի արարողությունը հաշտության մի ելք գտնելու բոլոր հնարավորությունները կային և վեհափառ Հայրապետը մի քանի պատվարներ առաջարկներ կատարեց, ինչպես նշվեց, բայց այդ բոլորը մերժվեցին:

Վեհափառ Հայրապետը, ի պատասխան Տ. Խորեն եպիսկոպոսի օգոստոս 27 թվակիր հեռագրի, օգոստոսի 30-ին հեռագրում էր հետևյալը:

«Մեր միակ ցանկությունն է, որ Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օծումը կատարվի կանոնական և համազգային համերաշխության պայմաններու մեջ, եթե այդ երկու պայմանները չստեղծվին, կհորդորենք դժեգ հետաձգել սեպտեմբեր 2-ի արարողությունը, որ կրեա անդամանելի բարդություն և վերջնական հերձված առաջացնել, ձեզ քանակով Եկեղեցիին ու Ազգին նպոփին տակ:

Փորձենք անգամ մը ես միացյալ ձիգերով ստեղծել ըզձալի պայմանները ի սեր մեզ սուրբ հավատքի ու Ազգի միության:

Մենք ոչ մեկ անհաղթահարելի արգելք չենք տեսներ:

Զեր կողմն դրական պատասխանի մը պարագային ձեզ ներկայացնելիք ետ առաջարկներ ունինք ի շահ ձեզ և ձեր Աթոռին:

Երևարար սուրբ գործի համար քնա՛վ պետք չէ հուսահատիլ կամ խռովիլ: Պատասխանատու ենք Աստուծո և մեր պատմութեան առաջը:

Վեհափառ Հայրապետի այս հեռագիրը ի գիտութիւն հաղորդվեց նաև մեր նվիրապետական Աթոռներին և առաջնորդական թեմերին, ազգային կազմակերպութիւններին և մամուլին:

Վեհափառ Հայրապետը վստահ էր, որ կլսվի իր այդ վերջին կոչը, և իր լավատեսութեան մէջ նա նույնիսկ խմբագրել էր հաջորդ հեռագիրն եւս, հղելու հորինեց եպիսկոպոսին, անմիջապէս որ Անթիլիասի կողմից դրական պատասխան ստացվեր:

Ահա՛ այդ հեռագրի բովանդակութիւնը.

«Առաջնորդված միեւնոյն սիրո և միութեան ոգիով, կառարարկենք գերագույն ճիշդով համաձայնութեամբ գոյացնել կողմերու միջև, կազմելով հանձնախումբ՝ բաղկացած Զերդ Սրբազնութենէն, խաղ արքեպիսկոպոսն և կողմերու մեկական աշխարհական ներկայացուցիչներն: Վերստին կոչ կրնենք բոլորիդ՝ գործել իմաստութեամբ, հեռատեսութեամբ և շինարար ոգիով»:

«Այդ հեռագիրը կյանքի չկոչվեց սակայն, Եւ կրկին հարց ենք տալիս՝ ինչո՞ւ այդքան համառ գտնվեց մյուս կողմը: Որպեսզի հարկադրեն մի օժտում, որ աննախընթաց է մեր պատմութեան մէջ, Եւ ինչքան թեթեւամտութեամբ անթիլիասականները համակիր թերթերն սկսեցին ձեռնադրութեան և օժտան խորհրդի մասի նոր բանաութիւնները հայտնել ու պաշտանել, այն նկատելով պարզ ծիսակատարութիւն, ձեական արարողութիւն և այլն, ձեռնադրութեան և օժտան սուրբ խորհուրդների նկատմամբ մեր Եկեղեցու կարավոր ըմբռնումն ու ոգին իջեցնելով աշխարհական մի բնորոշութեան հաջորդող որոշ ձեական արարողութեանց աստիճանին» (Շէշմաթին, 1957 թ. փետրվար, էջ 11, «Խոսք տիար Հ. Խաշմանյանին»):

Խոր վրդովմունքով, շասնելու համար վրշտով, պետք է այստեղ արձանագրել պատմութեան համար այն փաստը, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օգոստոս 30 թվակիր շինարար և վերջին կոչն էլ անլսելի մնաց:

Օգոստոսի 31-ին գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոսը հեռագրում էր Մայր Աթոռ.

«Ստացանք ընտրյալ կաթողիկոս Զարեհ Ա-ի և մեր անունով Զերդ Վեհափառութեան

30 օգոստոսի հեռագիրը: Սրտագինս բաղձացող ենք երկու Աթոռներու համերաշխութեան ի շահ Եկեղեցիի և Ազգի: Մեր այդ բաղձանքին պատճառով էր, որ հետաձգեցինք օժումը մինչև այսօր, որով մեր խիղճը հանդարտ է Աստուծո և Եկեղեցիին և Ազգին առջև: Ներկայիս ետ հետաձգում բաղձաթիվ պատճառներով անկարելի է այլևս:

Կիսկրենք արտունի Զեր եպիսկոպոսներուն մասնակցիլ սեպտեմբեր 2-ի օժտան՝ իբր դրական փաստ սիրալիք հարաբերութեան և քրիստոնեական ոգւով: Օժումն վերջ Կիլիկյան Աթոռ տրամադիր է, ինչպէս միշտ, բարացակամորեն քննելու որն է նոր առաջարկը:

1956 թվականի սեպտեմբերի 2-ին, Անթիլիասի Մայր Տաճարում Տ. Զարեհ եպիսկոպոսի վրա կատարվեց հակականոնական մի արարողութիւն, մասնակցութեամբ միայն 2 հայ եպիսկոպոսներ և հակորդկյան ասորի Տ. Սենքիոս եպիսկոպոսի:

Սեպտեմբեր 2-ի դեպքով այրվեցին հաշտութեան կամուրջները և շքացան համերաշխութեան հույսերը: Այդ առթիվ հայ ժողովուրդը արտահայտեց իր ազնիվ և արդար ցասումը. «Ինչո՞ւ գիտակցորեն այնպիսի մի օժում կատարվեց, որի հետեանքով հնարավոր հաշտութեան բոլոր կամուրջները քանդվեցին» («Խոսք տիար Հ. Խաշմանյանին», Շէշմաթին, 1957 թ. փետրվար, էջ 10):

Կիլիկյան միաբանութեան մեծամասնութիւնը, Լիբանանի և Սիրիայի հայ ժողովրդի ջանքախիշ մեծամասնութեան հետ, մամուլը, ազգային կազմակերպութիւնները, ի վերջո հասարակական կարծիքը վրդովմունքով դատապարտեցին սեպտեմբեր 2-ի ակտը, որն է՛լ ավելի էր բորբոքում կրքերը, խորացնում տարակարծութիւնները: Խաղ արքեպիսկոպոսը, թարգմանը հանդիսանալով հասարակական վրդովմունքի, սեպտեմբեր 3 թվակիր հեռագրով գրում էր Վեհափառ Հայրապետին.

«Սրտի ցավով կհաղորդենք Զերդ Ս. Օժութեան, որ այսօր, սեպտեմբեր 2-ին, տեղի ունեցավ Զարեհ եպիսկոպոսի օժումը Անթիլիասի մէջ, մասնակցութեամբ Խորեն և Ղենդ եպիսկոպոսներու և ասորի հակորդկյան եպիսկոպոսի մը: Աթոռիս միաբանութեան մեծամասնութիւնը, հաստատ մնալով Կահիրէի ժողովի որոշումներուն, թերի և անընդունելի նկատելով փետրվար 20-ի բնորոշութիւնը, լմասնակցեցավ արարողութեան: Կանոններու և ավանդութեան խախտումը կհանձնենք նվիրապետական Աթոռներու ուղարկութեան, սպասելով օրինավոր կարգադրութեան՝ ի պաշտպանութիւն Եկեղեցւոյ օրենքներուն»:

Սեպտեմբեր 6 թվակիր Վեհափառ Հայրապետին ուղղած իր հեռագրով, հանուն Կահիրեի Եպիսկոպոսական ժողովի և համայն հայ հոգևորականության, նմանապես բողոքում էր ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքը՝ սեպտեմբեր 2-ի արարողության դեմ և դատապարտում այն, որպես հակակառնական արարք։

Անթիլիասի սեպտեմբեր 2-ի արարքը, իբրև ոտնակոխում եկեղեցական օրինաց և բարոստացում Եկեղեցվո բարձրագույն հեղինակության դեմ, ըստ մեզ բարոյական մահվան դատալիքին է օժտվողին և օժողնորում, մեծ ցավ պատճառելով բոլորիս։

Վեհափառ Հայրապետը, իսկ արքեպիսկոպոսին ուղղած իր սեպտեմբեր 8 թվակիր հետևյալ պատասխան հեռագրով, արտահայտելով իր խորունկ վիշտը և հոգեկան խռովքը, դատապարտում էր եղածը որպես ոչ օրինավոր ձեռնադրություն և օժում և շեշտում էր, որ հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին երբեք չեն կարող հանդուրժել նման արարողություն, Հայ Եկեղեցու դարավոր օրենքների և ավանդության լույսի տակ։

Մարտունով կարգացինք Ձեր հեռագիրը Անթիլիասի Տաճարին մեջ Ձարեհ Եպիսկոպոսի վրա կատարված արարողության մասին սեպտեմբեր 2-ին Կողբանք կացությունը, որ ստեղծված է Ձեր Աթոռն ենթա և լիովին կրածնենք Ձեր և Ձեր միաբանության վիշտն ու հոգեկան խռովքը։

Մենք ամեն բան փորձեցինք վեց ամիսն ի վեր, բոլորին ներշնչելու համար մեր սուրբ հավատքի ու Ազգի միության և անբաժանելիության ոգին։

Այժմ ցավով կհաստատենք, որ փետրվար 20-ի թերի և անընդունելի ընտրությունն հետո, սեպտեմբեր 2-ին Ձարեհ Եպիսկոպոսի վրա կատարվել է արարողություն մը, որ կարելի չէ ձեռնադրություն և օժում համարել, վասնզի կատարվածը հակառակ է մեր եկեղեցական սուրբ կանոններուն և ավանդությանը և բոլորովին խորթ Հայաստանյայց Եկեղեցվո ազգային նկարագրին և ոգվուն։

Հայ Եկեղեցին ու հայ ժողովուրդը երբեք պիտի չհանդուրժեն, որ հայ հոգևորական մի իր իշխանությունը ստանա ոչ հայ հոգևորականներու ձեռնադրությամբ, այլապես մահացու ըլլալու աստիճան վտանգավոր նախընթաց մը ստեղծված պիտի ըլլա մեր Եկեղեցվո ապագային համար։ Մենք վստահ ենք, թե պիտի չգտնվի Հայ Եկեղեցվո ճշմարիտ սպասավոր մը, պիտի չգտնվի հայ հավատացյալ մը, որ հաշտվի սեպտեմբեր 2-ին գործված արարքին հետ։ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սեպտեմբեր 2-ի արարողությունը կնկատե Ձեր Աթոռի մեջ տեղի ունեցած ան-

դարմանելի հակաօրինականություն մը, որով խորեն. Ձարեհ և Ղևոնդ Եպիսկոպոսները դժգոհ են իրենց հանձնված սուրբ ավանդները անվթար պահելու և պահպանելու ուխտը։

Ձեզ և Ձեր հավատարիմ օրինապահ միաբաններուն կմաղթենք իմաստություն, համբերություն, ուժ և հռակ, որպեսզի Աստուծո օգնությամբ կարողանաք վերահաստատել Ձեր Աթոռն ենթա օրինավոր իշխանություն, հոգևոր հեղինակություն և խաղաղություն, առաջնորդված Հայ Եկեղեցվո միության փրկարար ու շինարար ոգիներ։

Սեպտեմբեր 2-ի օժումը-ը դուռ բացավ նոր վեճերի ու պայքարի Օժումը-ից հետո Եսիրո նոր ոգուն փոխարեն հանդես եկավ աստելության հաղթական ոգին և պառակտումը ոչ թե շքացավ, ինչպես կարծում էին մի շարք ազնիվ մարդիկ, այլ խորացավ։

Միև յայդ հույս կար, որ Բիլիկիի Հայրապետության շուրջ ստեղծված տխուր կացությունը շուտով պիտի գտներ իր բանավոր լուծումը՝ կողմերու փոխադարձ զիջողությամբ, զոհողությամբ և հասկացողությամբ (սեպտեմբեր 2, 1959 թ. № 10, էջ 385, Ա Մանուկյանի 1957 թ. փետրվար 25 թվակիր անձնական նամակը ուղղված Անթիլիասի աթոռակալին)։

Միաբանության մեծամասնությունը, ժողովրդի հոծ զանգվածի և մամուլի մեծամասնության հետ, իրավացի կերպով մերժում էր սեպտեմբեր 2-ի օժումն վավերականությունը, ըստ մեր Եկեղեցու պատմության, կանոնների և ավանդության։ Իսկ անթիլասականները ոտնահարել փորձեցին թե՛ առաքելական կանոնները, թե՛ տիեզերական ժողովի և թե՛ հայ կանոնագրքի սկզբունքները, արդարացնելու համար սեպտեմբեր 2-ի արարողությունը և առաջ քաշեցին նույնիսկ աստվածաբանական, կանոնական անհեթեթ տեսություններ։

Ոտնահարել մեր Եկեղեցու կանոնները, անարգել փորձել Եկեղեցու խորհուրդները նշանակում է իմաստազրկել Հայ Եկեղեցուն որպես աստվածահիմն կրոնա-բարոյական հաստատություն։ Այսպես կարող էին մտածել միայն կրոնական ոչ մեկ մտահոգություն և հավատ չունեցող մարդիկ։ Բայց ցավալին այն է, որ սեպտեմբեր 2-ի 1959 թվականի հունիսի համարում (էջ 228), լուրացնելով նման անհեթեթ տեսություններ, տխուր փաստարանի դերն է ստանձնել, արդարացնել փորձելով սեպտեմբեր 2-ի արարքը։

Սեպտեմբեր 2-ի 1959 թվականի 6-րդ համարում, սպիտակի վրա սև մեծատառերով գրել է. «Կարողիկոսությունը ընտրությամբ

է: Ոծումը եկեղեցականորեն նվիրագործումն է ժողովրդական կամփի» (ընդգծումը «Հասկա»-ին է):

Այս տողերը կարգալիս մարդ նախ մտածում է, որ 1956 թվականի փետրվարի 20-ին Անթիլիանում ընտրվել է մի որևէ աշխարհիկ կազմակերպության նախագահ, և ոչ թե Հայ Եկեղեցու նվիրապետական մասնավոր մեկ Աթոռի՝ Կիլիկյան աթոռի Գլուխ Հայրապետ:

Ցուրահատուկ է «Հասկա»-ի փաստարկումը ի պաշտպանություն իր տեսակետի: «Հասկա»-ը, շփոթված եպիսկոպոսական դասի դիմադրությունից և հայ հավատացյալ ժողովրդի համատարած վրդովմունքից, այդ անօրինակ «օծում»-ից 2 տարի անց փորձում է ապացուցել, որ կառեռն ու էականը կաթողիկոսական ընտրությունն է, իսկ ձեռնադրությունը և օծումը՝ «նետաժուտ սովորություն է միայն Հայաստանյայց եկեղեցվո ճատուկ» (ընդգծումը խմբագրությանն է), և հետևաբար դա զուտ ձևականություն է, կարող է և չկատարվել:

Մի պահ համաձայնվենք «Հասկա»-ի այս տեսության հետ, ժալենք և մի կողմ թողնենք առաքելական և տիեզերական ժողովների կանոնները, Հայ Եկեղեցու պատմությունը, ավանդությունը, աստվածաբանությունը և հարց տանք, որ եթե օծումը ձևականություն և հետսամուտ սովորություն է և կաթողիկոսական ընտրության մեջ էականը միայն ընտրությունն է, ապա ինչու՞ համար Տ. Խորեն եպիսկոպոսը փետրվարի 20-ից մինչև սեպտեմբեր դիմեց ամեն տեսակ միջոցների, ինչպես փաստերը վկայում են, բավարար թվով հայ եպիսկոպոսների մասնակցությունը ապահովելու համար օծման, և ապա միայն, հուսահատ հայ եպիսկոպոսական դասի արի և մերժողական կեցվածքից, դիմեց մի օտար եպիսկոպոսի:

Այս առթիվ ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքը, իր 11 հունվար 1957 թվակիր պաշտոնական մեկ նամակում գրում էր հետևյալը. «Պատմականորեն և իրավաբանորեն ունինք կաթողիկոսական կարգ ձեռնադրությամբ և օծումով, հոգ չէ թե օծումը վերջամուտ եղած ըլլա՞ր, ժամանակի ընթացքին մուտք գտած է այն մեր եկեղեցվույն մեջ, հավանաբար Կիլիկյան շրջանին, տարբերելով, այսպես, մյուս եկեղեցիներին»՝ որոնք պահած են հին սովորությունը կամ ավանդությունը: Կարգերու տվյալիս էական և շնորհատու պայմանը և առաքելական ձևն է ձեռնադրությունը միայն, ուր ոգեկոչումը կրկն շնորհաբաշխ Ս. Հոգվույն: Նկատեցեք այս միայն, եթե կուզեք, աստվածա-

բանական: Բայց ձեռնադրությունն ալ ունի իր կանոնական պայմանները, որոնց գլխավորն է վկայությունը «ամենայն ժողովրդեան»:

«Ջարեհ եպիսկոպոսի ձեռնադրությունը չէ լրացուցած այս պայմանը: Ամբողջ ժողովուրդը չէ վկայած անոր արժանավորության և հակառակն ալ է ըրած: Ավելին ալ, չէ հարգած եկեղեցվո կանոնը, հոգ չէ թե հին եղած ըլլա՞ր: Օտարադավան եպիսկոպոս մը մասնակցած է արարողության, Այնպես որ ոչ ձեռնադրությունը, ոչ ալ օծումը վավերական կարելի է նկատել, որով և Ջարեհ եպիսկոպոսի կաթողիկոսությունը կմնա անվավեր: Թողունք այն ծանրակշիռ պարագան ալ, ըստ որում ան դժբախտաբար ընտրելին է եղած կուսակցության մը՝ որ հոգեկան ոչ մեկ կապ ունի եկեղեցիին հետ և գիտենք, թե ինչ անխոստովանելի մտահոգություններ և առաջնորդված է: Ջարեհ եպիսկոպոս հանդուրժած է ասոր»:

Անա թե ինչու ձեռնեմա և իրավասու հայ եպիսկոպոսական դասը, Կանխիկ Եպիսկոպոսական ժողովի ռզով, հրաժարվել է մասնակցելուց ձեռնադրության և օծման: Եկեղեցական կանոնների և կանոնական սկզբունքների լույսի տակ, սեպտեմբեր 2-ի ակտը օրինական չէ: Ժողովրդական ընտրությունից հետո, կաթողիկոսական շնորհը և պաշտոնը տրվում են ձեռնադրությամբ և օծումով: Կաթողիկոսությունը Հայ Եկեղեցում վարչական պաշտոն չէ միայն, այլ մանավանդ հոգևոր գերագույն իշխանություն:

Ըստ մեր եկեղեցու կարգ ու կանոնի և դարավոր ծիսական կառույցի, որն ամփոփվել է Մաշտոցում, ձեռնադրությամբ և օծմամբ է միայն, որ շնորհվում է հոգևոր աստիճան և իշխանություն թե՛ սարկավազին, թե՛ քահանային, թե՛ եպիսկոպոսին և թե՛ կաթողիկոսին: 1800 թվականի մայիսի 8-ին Հովսեփ արքեպիսկոպոս Արղունյացը ընտրվել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս և այդ հանգամանքով Պետերբուրգից ճանապարհվել էր դեպի Մայր Աթոռ Փիֆլիսում: 1801 թվականի մարտի 8-ին մահացավ էջմիածին անգամ լհասած, որով և իրավամբ լմտավ կաթողիկոսական զավազանագրթի մեջ որպես կաթողիկոս, որովհետև ընտրությունից հետո չէր ստացել ձեռնադրություն և օծում:

1884 թվականի մայիսի 9-ին կաթողիկոս ընտրվեց Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանը: Ցարը վավերացրեց նրա ընտրությունը: Վարժապետյանը հրաժարվել էր իր հիվանդության պատճառով: Ազգը մերժեց սակայն նրա հրաժարականը: Նույն տարվա հոկտեմբերի 26-ին մահացավ Վարժապետ-

յանը, բայց լանցավ կաթողիկոսական գավազանագրքի մեջ որպես կաթողիկոս: «Ավանդական և ծխական կանոն է,— գրում է Օրմանյան սրբազանը («Ազգապատում», հատ. 3, էջ 3776),— և որքան տիր կաթողիկոսներուն անունը նկեղեցական պաշտամանի մեջ հիշատակելու համար, սպասել անոնց ոծվելուն, որ իրենց գահակալության իսկական նվիրագործումն է: Այսպես կգրե նաև կաթողիկոսական օծման Մաշտոցը»:

«Ընտրությունը,— ինչպես նշվել է ճիշտ կերպով Վեհափառ Հայրապետի՝ Լիբանանյան Հանրապետության նախագահ Շամունի նուղված օգոստոս 13 թվակիր նամակում,— եռյնիսկ երե օրինական պայմաններում մեծ եղած բլլա, ուրիշ բան չէ, երբ ոչ թեկնածույան մը առաջադրությունը՝ ներկայացված նկեղեցվո նվիրապետության հոգևոր իշխանությունն»:

Կանոնագիտական տեսակետից կաթողիկոսական ընտրությունը երբեք էլ Հայաստանյայց Նկեղեցում չի ունեցել մի ճշգրիտ ձև, թեև պահվել է ընտրության ժողովրդավարական սկզբունքը:

Ընտրության ժողովրդավարական այդ սկզբունքը գործադրվում է նաև մեր նվիրապետական ավելի փոքր աստիճանների թեկնածուների ընտրության հարցում: Այսպես, օրինակ, քահանայի և եպիսկոպոսը ընտրվում են ժողովրդի կողմից և ապա ըրծալությամբ գրով՝ կամ համախառնակներում՝ ներկայացվում հոգևոր իշխանության՝ ձեռնադրության միջոցով ստանալու համար յուրաքանչյուրը իրենց համապատասխան հոգևոր աստիճանի լիակատար իշխանություն: Այս է Մաշտոցի կանոնը: Ոչ ոք չի փախել իրենից միայն ընտրությամբ: Ոչ ոք չի կարող եպիսկոպոս լինել միայն ընտրությամբ: Եթե մեր նկեղեցին այսպիսի կանոնական սկզբունք է նախանձախնդրություն է հանդես բերում նվիրապետական ավելի փոքր աստիճանների համար, որքան առավել կաթողիկոսի համար, որը Գերագույն Պետն է Հայ Նկեղեցու և Գլուխը նվիրապետության:

Զգետք է մոռանալ նաև մի այլ հանգամանակ, որ այն է, որ լպետք է երբեք չփոխել կաթողիկոսական աստիճանը պատրիարքի պաշտոնի հետ, որ զուտ վարչական իշխանություն է, կատարված ընտրությամբ, ինչպես մեր, այնպես էլ այլ նկեղեցիների մեջ:

Բայց կաթողիկոսը պատրիարք չէ: Կաթողիկոսը մարմնավորում է Հայ Նկեղեցու հոգևոր և վարչական գերագույն իշխանության լիությունը, և այդ պաշտոնին հղովում է Ս. Հոգու միջնորդությամբ և նկեղեցու նվիրապետական ամբողջությունը և լիությունը ներկայացնող եպիսկոպոսների ձեռնադրությամբ և օծումով. աստուածաբանալ Քահա-

նայապետ, որ աստուածատիպ գազաթան օծություններ, ինքնիշխան զուրիս Նկեղեցու է կարգեալ»:

Օրինավոր կաթողիկոսական ընտրությունը կատարվում է ահամօրէն ժողովրդով հայակատարվում է հանգիստ հանգիստ ժառանգաւորօք Նկեհեո Ազգիս հանգիստ (Մաշտոց), որից հետո մատուցեցուցին (Մաշտոց), որից հետո պատարագ, ընծայալը, եպիսկոպոսների և եկեղեցական դասի և համայն հավատացյալ ժողովրդի առաջ և առաջի Սրբոյ Սեղանոյն ընթեռնու զթուղթ ուխտիս: Այսպէս ընծայալը, որ ընտրեցաւ և հոգեւոր կարգ պաշտաման և ի պատիւ կաթողիկոսութեան հայրապետական...», եպիսկոպոսների ձեռնամբ, «ի ձեռն այսր կոչման և ձեռնադրութեան առեւ զընդհան և զգործութիւն հայրապետի, որով և իրավունք է ստանալու եպիսկոպոս ձեռնադրելու և Ս. Մեռն օրհնելու կաթողիկոսը ձեռնադրվում է և օծվում ինչպես եպիսկոպոսը, բայց այս անգամ չի եպիսկոպոսութենէ ի կաթողիկոսութիւն, իստ վկայութեան անձին իրոյ և ամենայն ժողովրդեանս», որից հետո «եպիսկոպոսութեան ձեռնադրութեանս, որից հետո կատարում են ձեռնադրութիւնը: Կաթողիկոսական ձեռնադրության և օծման կանոնը ենթադրում է կաթողիկոսի վրա մասնավոր կարգի իշխանություն, որն ավելի բարձր է եպիսկոպոսական պարզ իշխանութիւնից, և որը նորից շնորհվում է ձեռնադրությամբ և օծմամբ (տե՛ս «Մաշտոց ձեռնադրութեան և օծման կաթողիկոսի»):

Ձեռնադրությունից և օծումից հետո միայն, ըստ նույն Մաշտոցի («Կանոն ձեռնադրութեան և օծման կաթողիկոսի», Վաղարշապատ, 1876, էջ 19), ընտրյալը սելոյի... կաթողիկոս...», և սկսվում է նրա անվան հիշատակությունը նկեղեցում:

Այս ճշմարտությունների լույսի տակ, սեպտեմբերի 2-ին Տ. Զարեհ եպիսկոպոսի վրա կատարված արարողությունը, երկու հայ և մի ասորի եպիսկոպոսների ձեռքով, իրավաբանորեն և պատմականորեն վավերական չէ, ըստ Հայ Նկեղեցու կանոնների և ավանդության: Զեռնաբար Տ. Զարեհ եպիսկոպոսը ոչ միայն զուրկ է կաթողիկոսական իշխանությունից, այլ նաև Տ. Խորեն և Տ. Ղեկնի եպիսկոպոսների հետ պատասխանատու Հայ Նկեղեցու նվիրապետության առաջ՝ իրենց հանձնված սուրբ ավանդները պահպանելու ուխտը դրժած լինելու և ներքին հերձված առաջ բերելու համար, ինչպես նշել է Վեհափառ Հայրապետը:

Մայր Աթոռ, Վեհափառ Հայրապետը և Հայ Նկեղեցու ողջ եպիսկոպոսական դասը երբեք չէին կարող հաշտվել նման մի արարքի հետ: Եվ Վեհափառ Հայրապետը դատապարտեց սեպտեմբեր 2-ի ակար:

1956 թվականի նոյեմբեր 25 թվակիր նամակով Վեհափառ Հայրապետը գրում էր ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքին։

«Ինչպես ծանոթ է Ձերգ Ամենապատվության, մեր տեսակետն ու իդէն էր, որ Անթիլիասի տաճնապը կերպով մը վերջ գտներ, կողմերու փոխադարձ վիշումներով, Կահիրեի Համաձայնագրի ոգին պահելով։ Մենք հետևողականորեն հետապնդեցինք, որ ելք մը գտնվի։ Եթե օրը-օրին տեղյակ ըլլայինք կողմերու բանակցությանց արգյունքներուն, յետահ հնք, թե հարցը ուրիշ վախճան կունենար։ Բայց հետո միայն տեղեկացանք— շատ ուշ—, թե Նիդիլ արքեպիսկոպոս ինքզինքը տեսակ մը Մեր լիազորը և բանազնացը ցույց տալով, վճիռներ է արձակեր, թե «Վեհափառը այս կետին համաձայն չըլլար», «Վեհափառը չընդունիր» և այլն, առանց նույնիսկ Մեզ տեղյակ պահելու այդ բանակցությանց ընթացքին, ճիշտ է, թե Մենք զայն բանազնաց նշանակեցինք Մեր Անթիլիաս գտնված ատեն, բայց իր այդ պաշտոնը հոն ալ վերջացավ։ Հետագային Մենք իրեն ոչ մեկ լիազորություն չենք տված։ Փարիզին իրեն գրած մեկ նամակնուս մեջ, 4 ապրիլ թվակիր, միայն այսքան ըսեր էինք իրեն. «Հետեւեցե՛ք Անթիլիասի տաճնապ ընթացքին և տեղյակ պահեցե՛ք Մեզ»։ Ուրիշ ոչինչ։ Մինչև սեպտեմբեր 2-ի արարողությունը Մենք Մեր լավատեսությունը բնավ չէինք կորսնցուցած և վստահ էինք, թե ելք մը պիտի գտնվի։ Ավելին. տրամադիր էինք Մայր Աթոռի հեղինակությունը ի գործ դնել զժողովը մեղմելու համար՝ ի խնդիր Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսանալուն։ Այդ մտադրությանը է, որ Մեր վերջին հեռագիրը հզեցինք խորեն եպիսկոպոսին։ Մեծ սխալ մը գործեցին անապարելով։ Բայց այժմ եղածը իդատ է։ Եվ եղածը այնպիսի հակաօրինակաւություն մըն է, որ չենք տեսներ ինչպես կարելի կրնա ըլլալ ընդունելի դարձնել։ Անձնապես Մեր մեջ ամեն բարյացակամություն կա, սակայն կատարվածը բարյացակամությանը կարելի չէ լուծել։ Պարզ է, որ որեւէ Ամենայն Հայոց Կաթողիկոս, որեւէ հոգևոր պատասխանատու իշխանություն պիտի չկրնա վավերացնել մեր սուրբ կանոններուն և անհրաժեշտ հակառակ եղած օծում մը, այն ալ օտար եպիսկոպոսի մը մասնակցությամբ։ Ձեր առաջարկը երկրորդ օծում մըն է իսկության մեջ, և վստահաբար պիտի յթողուն, որ Զարեհ եպիսկոպոս այդ նպատակով Ս. Էջմիածին ուխտի գաւ Եվ հետևաբար ինչ պիտի ըլլա հետևանքը... Ստացված տեղեկություններն և մանավանդ թերթերն կհասկցվի, թե միաբանության օրինական մեծամասնությունը իր գլուխը ունենալով հաղ արքեպիսկոպոս, կհետապնդեն նոր կեղ-

րոն մը ստեղծել և զայն հռչակել օրինավոր Աթոռ Մեծի Տանն Կիլիկիոյ Մեզ կհալածտիացնեն, թե ժողովուրդի մեծամասնությունը այդ կողմն է և եթե պեհական իշխանությունը արգելք չհանդիսանա, այդ ծրագիրը արագ կերպով իրականություն կրնա դառնալ։ Անկեղծ ըլլալու համար պետք է խոստովանինք Ձեզի, որ Մեր ներսեն ձայն մը Մեզի կթելագրե, թե այդ ալ ճիշտ չէ։ Այնքան ուրիշ ցավեր և հոգեր ունինք, որ քամանում Եկեղեցիք և Ազգի միայն վնասարեկ կրնա ըլլալ Մեզ համար։ Բայց մյուս կողմն ալ, ինչպես կարելի է հաշտվիլ ստեղծված կացության հետ։

Երկու ծանրակշիռ պարագա կա՝ նախ սեպտեմբեր 2-ի ապօրինի օծումը և երկրորդ՝ ժողովուրդի զանգվածային ղեկավարությունը, մեջը ըլլալով միաբանության մեծամասնությունը։ Արդյոք Աստուծո ապավինելով, թողունք, որ ժամանակը լուծեն կնճիղը։ Մեր Գերագույն Հոգևոր խորհուրդը անհրաժեշտ կդնեն, որ հատուկ կոնգակով մը ի գիտություն մեր ժողովուրդին ներկայացնենք՝ ա. Անթիլիասի տաճնապը և իրադարձությունները։

բ. ի խնդիր համերաշխության և միության Մայր Աթոռի՝ գործ դրած ճիշդերը։

գ. Սեպտեմբեր 2-ի արարողությունը մեր Եկեղեցվո կանոններու և ավանդությանց լույսին տակ։

դ. Հրավիրել Աղգային-Եկեղեցական ժողով, առաջիկա տարի, վերջնական վերաբերմունք ճշտելու համար հանուն Եկեղեցվո։

Այս սկզբունքների լույսի տակ, պոռթկացնալ Ազգի խղճմանը, ընդվզեց արգային-Եկեղեցական գիտակցությունը անթիլիասականների դեմ։

Համատարած համազգային վրդովմունքի և հասարակական կարծիքի արտահայտությունն էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանի ճառը, արտասանված Միության Ամերիկայի մասնաճյուղերի համագումարի փակման ճաշկերույթին, 1958 թվականի հունիսի 15-ին, ուր ասում էր։

«Ձեզի անձանոթ չեն այն շարք մը մեղադրանքները, որ հաճախ ուղղված են մեր Միության դեմ մեր Ազգին մեջ գործող կազմակերպված ուժի մը կողմի։ Վերջին քանի մը տարիներու ընթացքին, Բարեգործականի հասցեին նետված անվանարկություններու թիվը անհամեմատորեն բարձրացած է և տեսակը անհանդուրժելի դարձած, այն աստիճան, որ այս օրերուն մենք բոլորս ալ— կազմակերպություն, վարչություն, պաշտոնություն և անդամակցություն— կամբաստանվինք իրր հայ ժողովուրդի թշնամիներ

և Սփյուռքի մեջ մեր ապրած երկիրներու օրենքներուն դժմ մեղանշողներու:

Եվ այս բոլորը անոր համար, որ մենք իբրև հայեր և Բարեգործականը իբր կազմակերպություն՝ մեր անվերապահ հավատարմությունը հայտնած ենք Հայաստանյայց Եկեղեցւոյ Մայր Աթոռին, կեդրոնական խարխալ հայուն հավատքին, և որդիական ակնածանքով ընդունած ենք Ամենայն Հայոց Հայրապետին հոգեւոր առաջնորդությունն ու հայրական խորհուրդները:

Մեր այս դիրքը բնականաբար պիտի շեշտեր մեր վերապահությունը հանդեպ Մեծի Տանն Կիլիկիոյ այսօրվան իշխանավորներուն և մենք պիտի վարանենք շարունակելու մեր նյութական ու բարոյական օժանդակությունը, երբ համոզվեցանք, որ Հայաստանյայց Եկեղեցւոյ գերագույն շահը կանտեսվեր ու կատարադասվեր հատվածական շահերու և նախասիրություններու:

Այն օրը, երբ, խոսվահույզ ընտրութենէ մը վերջ, Հայ Եկեղեցւոյ կանոններուն և նվիրաբերած ավանդությանց հակառակ կաթողիկոսական օծում պարտադրվեցավ մեր ժողովուրդին, մեզի համար պարզ էր այլևս, թէ Կիլիկիոյ նվիրապետական Աթոռը և Անթիլիասի Գաբրիէլները, որոնց ներկութիւն համար ալ մեզմէ շատերը անձնապէս և Բարեգործականը իբր կազմակերպություն կարևոր զոհողություններ ըրած էին, ենթարկված էին հատվածի մը գերիշխանության և պիտի ծառայէին միայն քաղաքական նպատակներու:

Կատարված դեպքը բնական պարագաներու հետևանքով և խաղաղ միջոցներով տեղի ունեցած փոփոխություն մը չէր: Եթէ այդպէս եղած ըլլար, կրնայինք դժգոհելու պատճառ ունենալ, քայց ոչ գանգատելու: Սակայն գործի գլուխ անցած էին մարդիկ, որոնք երկար տարիներու ընթացքին անբարեխղճորեն պայքարած էին բոլոր այն կազմակերպությունց դէմ, որոնք Անթիլիասը իբր նվիրապետության մը Աթոռ և իբր լուսավորության կեդրոն քաջալերած ու հովանավորած էին:

Գաբրիէլները, լուսահոգի հիմնադիրները, երջանկահիշատակ Շահն արքեպիսկոպոս Գասպարյան և հավատ որդացյալ Բարգեն Ա Աթոռակից կաթողիկոս ու անոնց արծանավոր հաջորդները, կվայելեին անվերապահ վստահությունը եկեղեցասեր ու ազգասեր բազմաթիւ ազգայիններու և կազմակերպությունց: Կիլիկիան Աթոռին վերջին Գահակալը, Գարեգին կաթողիկոս, իր անգերազանցելի նվիրումով և հմտությամբ, մեծապէս բարձրացուցած էր Գաբրիէլների վարկը և սիրտ, վստահության և հարգանքի վրա հիմնված հարաբերությանց զորավոր կապ մը ստեղծած էր Մայր Աթոռին և իր գլխավորած

Աթոռին միջև, Փոխադարձ վերապահություններն ու կասկածները փարատած էին և Մայր Աթոռի հոգեւոր գերագահությունը անվիճելիորեն հստակ ընծայված էր:

Գարեգին վեհափառի վախճանումը առիթ հայթայթեց պատեհապաշտ կազմակերպության մը, որ միջոցներու մեջ խտրություն չդրավ իր ազգեցության ներքէ առնելու համար Կիլիկիան Աթոռը: Նպատակը որոշ էր: Հայաստանյայց Եկեղեցին ամենեւն ազդեցիկ միջոցն էր տիրելու Սփյուռքի հայ համայնքներուն և Կիլիկիոյ թափուր Աթոռը լավագույն ճամբան էր այդ նպատակին իրականացման առաջնորդող:

Ոչ ոք իրավունք ունի մեղադրելու մարդիկ, որ ազնիւ գաղափարներու իրականացման համար պայքարելու կորովը, քաջությունն ու վճռականությունը ունին, պայմանավ, սակայն, որ իրենց պայքարի զենքերը թունավոր լրլրան և իրենց գործածած միջոցները բարոյապէս անառարկելի ըլլան, զերծ մօլեռանդութենէ, կիրքէ և փառաստենությունէ:

Կիլիկիոյ Աթոռին ամեն գնով տիրելու համար ի գործ դրված միջոցները, դժբախտաբար, զուրկ եղան բարոյական հիմունքներէ: Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայրական խրատները, խորհուրդներն ու կոչները արհամարհվեցան, եպիսկոպոսական դասուն կողմէ գրեթէ միաձայնությամբ բանաձևված հաշտարար առաջարկները ծաղր ու ծանակի առարկա եղան և Սահակներու, Բարգեններու և Գարեգիններու Հայրապետական Աթոռը դուրս հանվեցավ Հայ Եկեղեցւոյ միութենէն ու ամբողջականութենէն:

Մեզի համար կարևորը և ողբալիս Կիլիկիան Աթոռին ներկա գահակալին անձը չէ, այլ անոր զլխավորած հաստատության անկախությունը կորուստն ու շահագործումն է հօդուտ հատվածական նպատակներու: Զարեհ եպիսկոպոս հաղիւ բարձրացած էր Կիլիկիոյ նվիրապետության Աթոռը, երբ պարտավորվեցավ իր իշխանության սահմանները ընդարձակել և տարածել իր իրավասութենէն դուրս գտնված համայնքներու վրա:

Եթէ անկարկված քաղաքական կուսակցությունը ի՞նչ դեր ունեցած է այս գործողություններուն մեջ, հստակորեն կպարզվի իր Ամերիկայի Կեդրոնական կոմիտեին անունով գրված և ստորագրված ամսական մը, որ վերջերս հրատարակվեցավ ռազմական ամսականում: Եւ կուսակցական թերթին մեջ:

Ահա թէ ինչ կգրէ Կեդրոնական կոմիտեին քարտուղարը.

«Նոր գարմանքով կարդացինք ձեր սեպտեմբեր 4 թվակիրը: Կշեշտեց, որ մեր թեմի Անթիլիասի միացման հարցը գերազանցորեն Բ-ի (այսինքն Բյուրոյի) գործն է: Կատարելապէս, բացարձակորեն ու տառա-

ցիորեն ճիշտ: ...Այդ նախաձեռնությունը դուք ստանձնած էիք անցյալ դեկտեմբերին մեզի հղած ձեր գրավոր հրահանգ-ծրագրով, որուն գործադրության անցանք, կատարեցին մեր վրա դրված գործին բաժինը և պարզապես հետապնդեցինք անոր— ձեր մատնանշած և հրահանգած բնական լուրով: ...Ամեն կերպ, ամբողջ հոգիով ու լարված ջանքով հետամուտ եղանք, որպեսզի գործադրվի Անթիլիասի պատմական վերածնունդի մեզի վերապահված գործի բաժինը, եվ միշտ հավատացինք ու կհավատանք, որ այս գործի տերը, անմիջորեն ամենատեղյակ աղբյուրը և միակ վարիչը դուք եք»:

Տարակույս կա՞, որեմն, թե որո՞նք եղան զխաղվոր պատասխանատվությունը, որ Անթիլիաս դուրս ելլե իր սահմաններեն և աններելի ոտնձգություններ կատարե պատմական անվիճելի ավանդությունը ու իրավունքով էջմիածնական համայնքներու մեջ:

Առաջին ոտնձգությունը կատարվեցով Ամերիկայի մեջ: Անցյալ տարվան հոկտեմբեր ամսուն սկիզբները Ամերիկա հասավ Կիլիկյան Աթոռի նվիրակ եպիսկոպոսը և միանգամ ընդմիջու հավերժացուց բաժանումը անջատյալ տարրին, քանդելով իրավախոհության բոլոր կարելիությունները և մերձեցման կամուրջները:

Այս պահուս նման բաժանումներու սպառնալիք կատարածվի Սփյուռքի այլ համայնքներու մեջ և արտասահմանի հայություն գոյության և կյանքի տևականացման միակ աղբյուրը հանդիսացող Հայաստանյայց Եկեղեցւոյ ձողին մեջ կստեղծվի հերձված մը, որ չարաղետ է և սպառնալի:

Մենք պիտի բավականանալինք այս ցավալի կացության հանդեպ արձանագրելով մեր վիշտը և այլևս պիտի չհետաքրքրվինք տնջատյալ տարրով, եթե ան գոհանար իր ձեռք ձգած հաշտությունով և ամեն աններելի միջոցի լղիմեր մեզ վարկաբեկելու հայտայն կառավարությունը, որոնք քարեխնամ ասպնջականությունը կվայելեն Քարեգործականի անդամներն ու բարեկամները և էջմիածնի հոգևոր առաջնորդությունը ընդունող ամբողջ հայ հասարակությունը:

...Քարեգործականի սրբադան նպատակն է տարաշխարհի մեջ մեր ազգային ինքնությունը անեղծ պահող տղաղներուն վրա գուրգուրալ և գորացնել զանոնք: Այդ ազգականիտուն մեջ առաջին տեղը կգրավե մեր Մայրենի Եկեղեցին, երկրպագունքի ամենեն հեռավոր անկյունները ցրված հայության բոլոր թեկնները անխզելի կերպով իրարու կապող գերբնական ուժը: Մենք էջմիածինը կընդունինք իր Եկեղեցւոյ միութեամբ, կենսունակութեամբ ու փառքով: Եվ այս փառքով, ու շնք կընառ փառքով այս

իրականությունը միտող և ուսացող ուրեմն մտածումի ճեռ» (Հուշարար-Միություն, 1958 թ., № 391, էջ 21—25) — Ընդգծումը խմբագրության է):

Այս բոլորից հետո վեհափառ Հայրապետը, թեև սրտաբեկ, բայց ոչ հուսահատ և միշտ տոգորված քրիստոնեական լավատեսությամբ, 1957 թվականի փետրվար և ապրիլ ամիսներին, իր օրհնության հետ պաշտոն էր հանձնում Կոստանդնուպոլսի ամենապատիվ Տ. Գրեգորի պատրիարքին և Հայկական Քարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ա. Մանուկյանին՝ որոնելու հաշտության երեւոյթներ, ի շահ Եկեղեցւոյ և Ազգի:

Այսպես չէր մտածում սակայն Անթիլիասը: Փետրվարին այդ նպատակով Անթիլիաս դիմեց պր. Ա. Մանուկյանը և մերժվեց: Ապրիլին երկու անգամ վեհափառ Հայրապետի հավանությամբ անձամբ Անթիլիաս դիմեց Գրեգորի պատրիարքը և մերժվեց: Հունիսի 13-ին վեհափառ Հայրապետը առաջարկեց Գրեգորի պատրիարքին՝ շարունակել հաշտության փորձերը և հուսահատվել:

Փետրվար 20-ի ընտրությունից և սեպտեմբեր 2-ի «օծում»-ից հետո Անթիլիասը հետևողականորեն գործադրում էր ժամանակավորապես քղաքական մի ծրագիր, որն իր սուր ծայրով ուղղված էր Մայր Աթոռի դեմ:

Սեպտեմբերի 2-ից հետո Անթիլիասը իր ձեռքերը երկարեց դեպի մեր սրբությունները, դուրս հայ ժողովրդի նվիրական իրավունքները:

1957 թվականի հոկտեմբերին Մայր Աթոռում վրդովմունքով և ցասումով իմացվեց ԱՄՆ-ում Ամենայն Հայոց Հայրապետության ենթակա թեմերում եկեղեցական կանոնական իրավասությանց սահմաններից ներս Անթիլիասի գրգռիչ և հափշտակիչ ոտնձգությունից փորձի մասին:

Ինչպես հայտնի է, 1933 թվականի սեպտեմբեր ամսի առաջին օրերին, Նյու-Յորքի հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցւոյ գումարվում է Ամերիկահայ երեսփոխանական ընդհանուր ժողով, ընտրելու Ամերիկահայ կենտրոնական վարչություն: Ժողովում մի շարք երեսփոխաններ, առաջնորդված կուսակցական ևնո շահերից, աշխատում են իրենց ալղեցությունը ենթարկել երեսփոխանական ժողովը: Բայց այդ երանց լի հաջողվում, ժողովականների շախախիչ մեծամասնության թվեներով ընտրվում է Ամերիկահայ թեմի կենտրոնական վարչությունը, որն զբաղվում է թեմի առաջնորդի ընտրության հարցով:

Ժողովում փոքրամասնություն մնացած երեսփոխանների այդ խմբակը, սակայն, համառում է մնալ իր դիրքերի վրա և միտում է հանաչել և՛ սահմանադրապես

ընտրված Ամերիկահայ կենտրոնական վարչությունը և՛ առաջնորդարանը, Ամերիկահայ ժողովրդի ծոցում ահա այդ ձևով սկիզբ է առնում եկեղեցական պառակտում: Փոքրամասնություն մնացած և ընդդիմադիր երեսփոխանների այդ խմբակը, ազգային-եկեղեցական սահմանադրության ակնհայտ բռնարարումով, կազմում է Ամերիկահայ ազգային թեմի կենտրոնական վարչությունը և ապստամբության դրոշ պարզած նաև Ամենայն Հայոց Հայրապետության դեմ, եկեղեցական պառակտում է ստեղծում Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմում, իր ազդեցության տակ առնելով մի շարք եկեղեցիներ:

Ահա այսպիսի ցավալի պարագաների տակ կազմված այդ ինքնակուլ Վարչությունը, երկար տարիների լուսթյունից հետո, 1957 թվականի փետրվարի 24 թվակիր գրությունը մի նոր ու ապօրեն որոշում է ընդունում, այն է՝ դիմել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության անունով գործող աթոռակալին, որպեսզի նա իր Վեհաճառությունների տակ՝ վերջինի 1933 թվականից ի վեր անշատված մի քանի եկեղեցիները և կազմակերպի նրանց՝ այսպես կոչված Ամերիկահայ ազգային թեմն անվան տակ:

Անթիլիասի աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոսը 1957 թվականի հոկտեմբերի 12 թվակիր հետևյալ գրությամբ, ուղղված Ամերիկահայ ազգային թեմի կենտրոնական վարչությանը, առաջին ուսնագրությունները կատարում է ԱՄՆ-ում Ամենայն Հայոց Հայրապետության ենթակա թեմերում:

«Հասարակաց հոր և հայու մեր սիրտը չէր կրնար անտարբեր մնալ պարունակությանը հանդեպ ձեր 24 փետրվարի 1957 թվակիր նամակին, որ դիմում մը ըլլայն ավելի, կոչ էր մեր ղեկավարներուն, և թախանձադին հիշեցում մը մեր հայրապետական պարտականությունաց, զորս Ազգը զրալ մեր տկար ուսերուն վրա, և խղճի մտոք և կամով կատարել հանձն առինք առաջի Աստուծո, մեր օծման ժամանակ: Զեր գրությունը սրտաճմլիկ մեկ նկարագրությունն էր անտիրական այն կացություն, որուն մատնված եք հովիվք և ժողովականք, որպես հետևանք պատճառներու, որոնք կապ չունին քրիստոնեական մեր սուրբ կրոնին և Հայաստանյայց Եկեղեցւոյ էության հետ: Անցավոր և երկրային նկատումներ մեր Ս. Եկեղեցւոյ ոգեկանութենէն գերիվեր դասված են: Գործադրված է խտրական աններելի եղանակ, որով Հայաստանյայց ՄԻ և ՆՈՒՅՆ Ս. Եկեղեցւոյ մեջ արվեստակցալ քաժանութ հառաջ բերված և գիտակցաբար շահագործված է: Ի հիմանք խախտել փորձված

է այն հոյակապ բարոյական շենքը Հայաստանյայց Եկեղեցւոյ, արմատացած՝ Ս. Ավետարանի աստվածադիր սկզբունքներուն վրա և պայծառազարդված մեր հավատավոր պառակտու առաջնորդներու պատվական պետու և սուրբ նահատակներու պատվական արյամբ: Վնասակար այս տեսակետին հետևանքով փակ մնացած են բազմաթիւ հայ տաճարներ, Սրբալույս Մուսուսէն զրկված են նույն Եկեղեցւոյ զավակները, մինչև իսկ մերժված է թաղումը, եկեղեցական կարգով, հավատացյալ հայ քրիստոնյաներու, որոնց հանցանքը եղած էր ծառանալ Հայ Եկեղեցին նյութական շահագիտումներու ծառայել փորձողներու դեմ, թույլ շտաղով, որ անոր հոգևոր և ազգային նկարագիրը եղծվի: Իրկար և ծանր եղան մեր զոհողությունները, տառապանքներ, կյանքը, այլ սակայն աննահանջ՝ ձեր պայքարը, ներքին և արտաքին թշնամիներու դեմ: Հայաստանյայց Ս. Եկեղեցւոյ անկախ անդամակցության ի պաշտպանություն, մեր բոլոր ձեռնարկները ի դերն ելան: Հաց ուցեցիք, քար ներկայացուցին, ձուկ խնդրեցիք, քար մատուցվեցավ ձեզի: Արգանք և ձեզի հետ կապրինք այն բոլոր դառնությունները, զորս կրեցիք հանիրառի: Կհրճվինք սակայն, ի տես և ի լուր մեր վճռական կեցցվածքին ու դարերու ընդմեջն և մեր միջոցավ անգամ մը ևս ի հայտ եկած ոգևորւն, որով Հայաստանյայց Եկեղեցիին զմեզ պոկելու ուղղորդներուն արիւթյամբ պատասխանեցիք: «Մայնմ հաւատոց զմեծ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակի, ոչ մարդիկ, ոչ հուր, ոչ ջուր, և ամենայն զինչ և են դառն հառաւածք»: Քրիստոնեական մեր աստվածային կրոնն ու Հայաստանյայց մեր Ս. Եկեղեցին, հոգեկան մեր անկապտելի ժառանգությունն են և կմնան անխախտ ու գործուն, ի փրկություն հոգւոց մերոց: Թույլ ենթադրություն էր, թուր իբրև հանդերձ կարծէր ունել մեզ գրիստոնեութիւնն, առ իբրև զգայն մտմեզ՝ չկարէ շրջել, բերել և ոչ ալ կարացել մինչև ի կատարած: Հակառակ ուրեմն մեր բոլոր գաղութաց, հավատարմությամբ մը գերիվեր քան զբնութիւն մարդկան, զուր, պատվական զավակներ Հայաստանյայց Եկեղեցւոյ և աննահանջ պահակներ ազգային մեր գեղեցկագույն առաքինությանց, անքակ սիրով փարած մնացիք և՛ Հայաստանյայց Եկեղեցւոյ բարձր և ազգային գաղափարականին, և՛ Ազգիս սքանչելի լեզվին, զոր խոսիլն ու հետնորդ սերունդներու ուսուցանելը նկատած եք, և պետք է շարունակեք նկատել մեր անդրանիկ պարտականությունը:

Եվ ահա, մեր կրած բոլոր դառնությունաց և հուսախարությունաց փոխարեն, և ի պսակումն մեր հույսին, թուր ոչ երբեք ամաչեցուցանէ:

Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետական Աթոռներեն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը կրան ձեռքի. «Ընկալայց զմեացորդս ժողովրդեան իմոյ յամենայն երկրէ... և յարուցից ճովիւս որ ճովուեսցեն նոցա և ոչ ևս երկիցսն և ոչ ևս զարհուրեսցին և ոչ ևս լիցին անտես» (Երեմ. ԻԳ 3—4)։ Եվ մենք, որպես պետ այս բազմաշարժար Աթոռին, մեր հոգևորականի պարտականությանց կատարման առթիվ, խոր հավատաբով ու գիտակցությամբ, միշտ ըսած ենք, և պիտի ըսենք, «Հնդի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիո, անտարանելի ազգատաց առաքեաց զիս. բժշկել զբեկնայս սրտիմ, բարոզել զերեսաց զթողութիւն և կուրաց տեսանելի կոչել ամ Տեառն ընդունելի և օր հատուցման Աստուծոյ մերոյ, մխիթարել զամենայն սգաւորս» (Նսալի ԿԱ 1—2)։ Ուրեմն, «Փոխանակ ամօրոյ ձերոյ՝ կրկին ուրախութիւն, և փոխանակ անարգանաց ձերոց՝ ցնծութիւն» թող ըլլա. որովհետեւ Կիլիկիո Կաթողիկոսությունը զձեզ կանեն իր հովանիին ներքեւ, ըստ ամենայնի։

Ի հետևումն մեր այս որոշման, մեր առաջին խոսքը ձեզի է, արժանապատիվ քահանա հարք, Կհիշեցնենք ձեզի սրբույն Պետրոս առաքյալի պատվերը. «Լեռանցէք որ ի ձեզ հօգ է Աստուծոյ, վերակացու լինել մի իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ, մի զօշաբաղութեամբ, այլ յօժարութեամբ» (Ա Պետր. Ե 2)։ որովհետեւ հիմն Եկեղեցվո քահանայությունն է, և հոգւոց փրկութեան կամ կորստյան առիթը դուք կրնաք ըլլալ։ Միտն և համերաշխության քարոզիչ, Հայաստանյայց Եկեղեցվո և հայոց լեզվի պահպանության անդու մշակներ եղեք, Հոգ տարեք հայ ընտանեկան սրբության և ազգային ավանդությանց պահպանման։ Ձեր բարի հովիվի խոսքն ու գործը օրինակ ըլլան բոլորին։ Մեր Ս. Եկեղեցվո աստվածագիր ու հայրապետահաստատ խորհուրդները մատակարարեցեք բոլորին, անխտիր։ Ձերի առէք, ձեր տուք, որպեսզի «չլերելի Հովնապետին ընդունիչիք զանթառամ փառաց պսակն» Աստուծոյն, և արժանանաք Ազգին երախտագիտության։

Հարգո ժողովականացդ կապովիրենք մտադրութեամբ զգացումներով, խանդավառութեամբ, օրենքի հասկացողությամբ, այլ մասնավորապես Հայաստանյայց Եկեղեցվո և հայոց ժողովուրդի շահերու խոր գիտակցությամբ կառավարել, ձեր թեմն ու լուծել ձեր առջև դրված բոլոր խնդիրները։ Հայաստանյայց Եկեղեցին մայրն է բոլորին. լկան իրեն համար «Պողոսյանն» կամ «Ապողոսյանն», այլ հարազատ զավակներ, ուրախակից կամ ցավակից իրեն և ժառանգորդ այն հոգեւոր գանձին, որ իր միջոցով փոխանցված է մեզի։

Իսկ համայն հայ հավատացյալներուդ, մեր սիրելի որդւոց, կապովիրենք ըլլալ հավատարիմ քաղաքացիներ ձեր երկրին, հարգել անոր օրենքներն ու կանոնները, սակայն և երբեք չմոռնալ ձեր պարտականությունները առ Աստված և առ Ազգն մեր։ Ապրեցեք սիրով, գործեցեք համերաշխությամբ, որպեսզի աշխարհ ամենայն ձեզմե յուրաքանչյուրին միջոցով ճանշնա հայ ժողովուրդը, Հայաստանյայց Ս. Եկեղեցին, գնահատու և զովի պանծնէ։ Նախանձավոր զգուշությամբ ու գիտակից զոհողությամբ ոգիով պահեցեք հայ լեզուն ու մշակութիւնը, մեր անկապտելի ժառանգությունն ու ազգապահպանման անկաճելի մեր միջնարբերը։

«Ողջ լերութ օրհնեալք յանտ յԱստուծոյ և ի մէնջ և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանսդ, ամէն» («Հասկ», № 11, Նոյեմբ., 1957 թ., էջ 377—379)։

Անթիլիասի աթոռականի այդ գրությունը, ըստ էության, անիրավ և շարամիտ զրպարտություն է Մայր Աթոռի հասցեին։ Մայր Աթոռը ե՛րբ է արդյոք մոռացել, հոգեւոր մխիթարությունից զրկել էլ միաժանի իր տիրախնամ թեմի ժողովրդին։ Սուտ է և անճիշտ Անթիլիասի մեղադրանքը. «Շաց ուղեցիք՝ քար ներկայացուցին, ձուկ խնդրեցիք՝ քարը մատուցվեցավ ձեզի»։ Դեռևս 1937 թվականին լուսահոգի Տ. Թորգոմ պատրիարքը, ցույց տալով նման շարամիտ զրպարտություններին և մեղադրանքներին անճշտությունը, խոր վրդովմունքով գրում էր. «Տեղն է հիմակ հարցնել, քե իշմածին ցարդ ե՛րբ թուլացավ մատնանշված այդ պարտականությանց մեջ՝ հանդեպ իր արեւմտանայ վիճակներուն, և մասնավորապես անոց, որոնց առիթով է, որ կտրվի այդ հարցը։ Ոչ ոք պիտի կարենա հաստատական պատասխան տալ այս հարցովին. զի ակներև են և բացառությամբ անկարող էլ իշմածին գործն ու ընթացքը այս մասին» («Միտն», 1937 թ. հունիս, «Անհարկի փութկոտություն»։ Ընդգծումը խմբագրությանս է)։

Մայր Աթոռը միշտ հետաքրքրվել է ԱՄՆ-ի հայոց մի քանի անջատված Եկեղեցիներին հարցով ու բոլոր հնարավոր միջոցներով և առաջարկներով կամեցել է վերահաստատել հոգեւոր միությունը։ Մայր Աթոռի թեկադրությամբ, 1937 թվականից սկսյալ, Մայր Աթոռի Հայրապետական նվիրակ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, ապա ԱՄՆ-ի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսիսյանը և գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը կատարել են բոլոր հնարավոր աշխատանքները։ Վեհափառ Հայրապետը իր անդրանիկ կոնդակում կոչ արեց անջատյալներին՝ վերա-

դառնալ Մայր Եկեղեցու գիրկը։ Հետո էլ Վեհափառ Հայրապետի ցուցմունքներով շարունակվեցին հաշտարար աշխատանքներ, և ինչպես նշվել է Վեհափառ Հայրապետի 1957 թվականի դեկտեմբեր 20-ի հայրապետական կոնդակում՝ «նպաստավոր օրոշ գծերն մը սկսած էր ստեղծվիլ և հասունցած էր սիրո ոգին, և հուսով էինք Մենք՝ թե վերջապես հեռաւոր պիտի դառնա ըզնալի միությունը վերաճաստաւել միացյալ ջանքերով» (ընդգծումը խմբագրությանն է)։

1956 թվականի ապրիլին, երբ Վեհափառ Հայրապետը գտնվում էր Փարիզում, ԱՄՆ-ի հայոց թեմական խորհրդի նախագահ պր. Տատուր Տատուրյանը այդ հարցի մասին առում է հետևյալը Վեհափառ Հայրապետին. «Արդեն տրամադիր էին (խոսքը ԱՄՆ-ի հայոց անջատված մի քանի եկեղեցիներին մասին է) հաշտության և այդ ոգիով դիմած էին պաշտոնական թեմական խորհուրդին, զղջալով անցյալի ղեպքերու վրա, և պատրաստ էին վերադառնալու Մայր Եկեղեցիի գիրկը։ Բայց հանկարծ Կիլիկյան Աթոռն ներս արհեստականորեն ստեղծված տագնապը և երկփեղկումը անհայտ և մութ ճանապարհներով պարտադրեց անջատվածներուն փոխել անմիջապես իրենց վերաբերմունքը ղեպի Ս. Էջմիածին և օրինավոր առաջնորդարանի ազգային իշխանությունը»։

Ամերիկահայ գաղութը, որպես հոգևոր համայնք, առաջին անգամ կազմակերպվել է 1889 թվականին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության կարգադրությամբ, և 1898 թվականին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հուլիս 2-ի սրբատառ կոնդակով՝ որպես առաջնորդական վիճակ, Մայր Աթոռի հոգևոր իշխանության տակ։

Այդ թվականից մինչև այսօր ամերիկահայ եկեղեցական համայնքները ապրել են և զարգացել Մայր Աթոռի իշխանության տակ։

Ամերիկահայ երկու թեմերի 63 եկեղեցիներից այսօր միմյան 13 եկեղեցիներն են, որ բաժանվել են Մայր Աթոռից։ Մնացած եկեղեցիները, թվով 50, թեմական ու վարչական մարմինները, հոգևորականությունը, ժողովրդի ջախջախիլ սեփականությունը հետ, միշտ հավատարմի են մնացել և մնում են Մայր Աթոռի հոգևոր իշխանության։

Վեհափառ Հայրապետը, որպես Գերագույն Պետ Հայ Եկեղեցու, Աստուծո և Ազգի առաջ որպես պահպան և պաշտպան մեր ազգային-եկեղեցական իրավասությանց, հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռից հետևյալ հեռագիրը հղեց Անթիլիասի աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոսին.

«Մենք, Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, տեղեկացած ըլլալով հոկտեմբերի

սկզբի մամուլի հաղորդումներեն՝ ձեր որոշումի մասին՝ Ամերիկահայ էջմիածնական շումի շարք մը եկեղեցիներ Կիլիկյան Աթոռի թեմի շարք մը եկեղեցիներ Կիլիկյան Աթոռի իշխանության ներքև առնելու, Մեր վրդուկումը և վիշտը կհայտնենք այս անախընթաց ոտնձգության և պատմականորեն ստեղծված կանոններու և իրավասությանց սահմաններու խախտման համար։

Հանուն Հայաստանյայց եկեղեցվո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայ հավատացյալ ժողովուրդի, այսու վճռապես կհրավիրենք ձեզ հետս կոչել ձեր այդ որոշումը ի սեր Աստուծո և Ազգի։

Հետևողական մեր խաղաղասիրական և միասնության ոգիին և վերջ տալու համար ներքին անխառն հերձուներուն և ազգակործան պատակություններուն, միաժամանակ վերստին կառաջարկենք ձեզ անհապաղ կերպով բանակցություններ սկսիլ որնէ հարմար տեղ, վերականգնելու համար հոգևոր միությունը և խաղաղությունը մեր նախնայաց լույս հավատքով և դարերու հերոսական մաքառումներով ստեղծված ու պահպանված Ս. Եկեղեցվու։

Կսիրենք հուսալ, որ ձեր դրական պատասխանը պիտի ստանանք հառաջիկա տասնհինգ օրերու ընթացքին»։

Վեհափառ Հայրապետի այս հեռագիրը ըստ էության մի նշանակում էր թի սեր Աստուծո և Ազգի, ուղղված Անթիլիասի աթոռակալին, հետս կոչելու իր որոշումը և դրամանելու գործված ճակատագրական սխալները, և միաժամանակ մի նոր առաջադեպ՝ անհապաղ կերպով վերսկսելու բանակցությունները Անթիլիասի հետ՝ համեմելու համար ըզնալի խաղաղության և միասնության և կանոնականացնելու ոչ օրինավոր օժուր Տ. Զարեհ եպիսկոպոսի։

Նոյեմբերի 2-ին Մայր Աթոռում ստացվում էր Անթիլիասի հետևյալ հեղինակական պատասխան հեռագիրը, ստորագրված մի պարզ միաբանի կողմից.

«Կիլիկյան Կաթողիկոսության ուղղած Ձերդ Սրբության 22 հոկտեմբերի հեռագիրը ստացված է։ Կհայտնենք, թե Կիլիկիո Կաթողիկոսության եպիսկոպոսական դատուն մեջ Ձավեն կամ Զարեհ անունով եպիսկոպոս գոյություն չունի։ Կիլիկյան Աթոռը եղած է և կմնա նախանձախնդիր Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի միության և համերաշխության»։

Անհավատալի, բայց իրավ...

Հ. Բ. Բ. Միության Կենտրոնական վարչության նախագահ պր. Ա. Մանուկյանը շատ հատկանշականորեն պատմում է իր մեկ տեսակցությունը Տ. Խորեն եպիսկոպոսի հետ, որտեղ ճշգրիտ գույներով պատկերվում են Անթիլիասի տխուր դերը և դիրքը։

«Մեր ինկեղեցվո պատակտումին ամբողջ ողորդությունը ինձի համար ցավագինորեն բացատրելի դարձավ, երբ տարի մը առաջ իր խնդրանքով տեսակցություն մը ունեցա Կիրիկիո Աթոռին նվիրակ եպիսկոպոսին հետ: Իր արտահայտությունը, հանդեպ ովստապահ միաբանության, Հայ Եկեղեցվո միասնականության նախանձախնդիր ժողովուրդին, ուժգնորեն ցնցեց ու խռովեց զիս: Իմ զեմս ունեի ոչ թե սիրո, բարության և խաղաղության պաշտոնյան, այլ անկարեկիր, կարծրասիրտ իշխանավոր մը, որ սոսկում պատճառող լեզվով մը ցարդ գործադրված բռնական միջոցներու մասին իր շարախինդ գոհունակությունը հայտնեի և ա՛յ ավելի ծանր սպառնալիքներու հռոմեակարը կընդացներ՝ ընագրված տիրակալությունը մարդկայական ընելու համար: Այդ օրեն, ինձի համար այլևս բացահայտ էր, թե ինչ մթնոլորտ, ձգտում և ոգի կտիրեր Կիրիկյան Աթոռեն ներս:»

Այդ Աթոռին պաշտոնաթերթը, «Հասկա», որ եկեղեցական պատակտումին պատմությունը կշարահյուսե իրողությունաց ըստ կամս մեկնաբանությունը, անմարդկային կորակե Բարեգործականի ընթացքը, Կաթողիկոսարանին որեւէ գումար շտրամագրելուն համար:

Իսկապես անմարդկային և հակազգային շարժումի մը մեղսակիցը պիտի ըլլայինք, ընդհակառակը, այդ Աթոռին հետ գործակցելով, մեր անձամբ տեսա մեր խեղճ Ազգն ու Եկեղեցին բաժան-բաժան ընող պայքարին պարագլուխը և անսահման տրամաբան մը լսեցի իր անողորմ խոսքերը, այլևս ոչ մեկ տարակուսանք ունեի, թե որո՞նց հետ էր մեր գործը և ի՞նչ պետք էր ըլլար Բարեգործականին գիրքը» («Շուշարար-Միություն», 15 հունվարի 1959 թ., № 397, էջ 26):

Նոր Անթիլիասը իր գոյությունը կարող էր իմաստավորել միայն Մայր Աթոռի հետ լեզու գտնելով, նրա բարոյական և հոգեկոր հեղինակության բերած իր նպաստով: Անթիլիասում գործող այսօրվա առեկտորույսներն-ի գոյություն օրինավոր արդարացումը կլինեի նրանց բերած նպաստը Ս. էջմիածնի բարոյական և հոգեկոր հեղինակության բարձրացման՝ Հայ Եկեղեցու միության ոգու պահպանմամբ: Սակայն դժբախտաբար Անթիլիասը բնորոշ ոչ թե հաշտության, այլ երկփեղկումը խորացնելու ճանապարհը, Ս. էջմիածնին հակադրվելու և նրան հարվածելու ճանապարհը, դրանով իսկ կորցնելով ինքնաբերաբար իր գոյության ամբողջ իրավունքը: Ահա և Ս. էջմիածնի նույնիսկ ինք Անթիլիասը նման է ավազի վրա շինված տունի, — ինչպես գրում էր Վեհափառ

Հայրապետը իր 1957 թվականի դեկտեմբեր 20 թվակիր կոնդակում:

Մինչ այդ, Ամբրիկա էր հասնում Անթիլիասի «նվիրակ»-ը, պաշտոնականացնել փորձելու համար մի քանի եկեղեցիների հափշտակությունը:

Անթիլիասի այս ոտնձգությունը նրա դաշնակից մամուլի կողմից որակվում է «արի և համարձակ որոշում մը, որ զաշնակ սրտերը կըցնեն անսահման ուրախությամբ մը, և որ ոսկի տառերով պիտի արձանագրվի մեր տարեգրությանց մեջ» («Հայրենիք», հոկտեմբեր): Անթիլիասի այդ բռնագրավումը, Գարեգին պատրիարքի բացատրությամբ «սահմանազանցություն»-ը, որակվեց նույնիսկ մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ՝ նոր գարաշրջանի մը սկզբնավորությունը: Այսօր արևի լույսի պես պայծառ է դառնում շարաշուք այն նպատակը, որ իրագործվելու է Անթիլիասի միջոցով, քաղաքական գետնի վրա: «Հայրենիք»-ը նոյեմբեր 2-ի համարում գրում է. «Ուրախ ենք, որ Հայ Եկեղեցվո սրբազան դատը կձանշվի իր էության մեջ, ոչ միայն բուն իսկ պայքարին մոտ եղող պետական իշխանություններու կողմն, այլև կըմբռնվի ազատ աշխարհի առաջնորդ այս մեծ երկրի հեղինակավոր պաշտոնյաներուն կողմն»:

Վաշինգտոնում խորեն եպիսկոպոսն այցելում է ԱՄՆ-ի փոխ նախագահ պր. Ռիչարդ Նիկսոնին, որը հայտարարում է նրան. «Միութենային դեմ զինվորական ու տնտեսական ուժերով պայքարը բավական չէ: Անհրաժեշտ է պայքարել հոգեկան միջոցներով, և ուրախ եմ, որ դուք ձեր եկեղեցիներուն մեջ տարած եք այդ աշխատանքը: Ազդր համար մասնավորապես կշնորհավորեմ ձեզ» («Այգ», 17 նոյեմբերի 1957 թ.):

Վեհափառ Հայրապետը միշտ աշխատել է Հայ Եկեղեցին հեռու պահել քաղաքական ազդեցությանց շրջանակներից, «կողմերի թելադրանք»-ից: Ինչո՞ւ քաղաքական այդ պայքարը կապվում է մեր Եկեղեցուն: Եկեղեցին գործ չունի քաղաքականության հետ: Եվ եկեղեցին իր էությանը, իր կոչումով, իր առաքելությամբ, չի կարող և չպետք է ունենա երբեք որևէ քաղաքական հանգամանք, ձգտում կամ դիրքավորում, միջկուսակցական պայքարներում: Հայ Եկեղեցու գիրքը գեպի կուսակցությունները՝ նույնպես շատ հստակ և պարզ կերպով քանաձևվել է 1957 թվականի փետրվար-մարտ ամիսներին «էջմիածին» ամսագրում հրատարակված «Խոսք տիար Հ. Խաչմանյանին» հոդվածում, Վեհափառ Հայրապետի հրահանգով և ցուցմունքներով («էջմիածին», 1957 թ. փետրվար, էջ 12):

Մայր Աթոռի գործը չէ երբեք միջամտել քաղաքական կուսակցությանը պայքարներին, Քայց Մայր Աթոռի սրբազան պարտականությունն է՝ թույլ չտալ, որ Հայ Եկեղեցին նման տխուր պայքարների թատերաբեմ հանդիսանալ:

Եկեղեցին աստվածահիմն հաստատություն է, և սրբապղծություն կլինե՞ր այն խառնել նման պայքարների մեջ:

Ահա թե ինչու՝ Մայր Աթոռը չէր կարող լռել և շուրջ, քովանդակ ճշմարտությունը աւելու համար իր հավատացյալ ժողովրդին, հեր զուտ եկեղեցական բնույթի մի հարց, ինչպիսին էր Անթիլիասի կաթողիկոսական ընտրության հարցը, դուրս գալով ազգային շրջանակից, դառնում էր միջազգային հարց՝ քաղաքական բնույթի:

Այս մտածումների լույսի տակ և հետևողականորեն քննելով 1956 թվականի փետրվարյան օրերից մինչև 1957 թվականի դեկտեմբերը Անթիլիասի կողմից առնված հակա-էջմիածնական քայլերի և որոշումների տակ թաքնված վտանգը, Վեհափառ Հայրապետը, պարտի և պարտախնայության խոր գիտակցությամբ, և առաջնորդված միայն ու միայն Հայ եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահերից, Իր 20 դեկտեմբեր թվականի սրբատառ կոնգակով, Եկեղեցու և Ազգի առաջ էյ Աթոռոյ» դատապարտեց Տ. Զարեհ եպիսկոպոսին և նրա գործակիցներին, առոնք իրենց հակականոնական արարքներով և Ամեն իրկայի մեր թեմերու մեջ կատարած ոտնձգություններով ենթակա պիտի դառնան Եկեղեցիի և Ազգի նզովքինս:

Երկար և հետևողական խաղաղասիրական հորդորներից, միասնության կոչերից, հաշտության առաջարկներից և նույնիսկ հանուն համեմատելիության կատարված մի շարք գիշումներից հետո, Վեհափառ Հայրապետը, 1957 թվականի դեկտեմբերի 20-ին, խորունկ վշտով և ծանր սրտով, արձակեց Իր Հայրապետական վճիռը:

ՔՐԻՍՏՈՍԱՆԱՆԻ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՄԻ ՏԱՆԵ ԿԻՒԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱԿՈՒՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԿՈՒՆ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՒՍԱՑ, ԵՊԻՍԿՈՒՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՑԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՒՄՈՒԿԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱՒ ՀԱՄԱՑՆ ՀԱՒԱՏԱՑԵԱՒ ԺՈՂՈՎՐԻԵԱՆ ՀԱՅՈՑ:

Հայ եկեղեցով պատմության մեջ առաջին անգամ ըլլալով, մեր նվիրակետեղան մասնավոր Աթոռներին՝ Տանե Կիլիկիո կաթողիկոսության տնունով գործող Անթիլիասի Աթոռակալը իր իշխանությունը կփոխե տարածել Ամերիկայի Միացյալ Նահանգներու

մեր Հայրապետության երկու թեմերուն շարժ մը եկեղեցիներուն վրա:

Ամերիկահայ գաղթականությունը հախ իբրեկ հոգևոր հովվություն կազմակերպված և հանձնված է 1889 թվականին Կոստանդնուպոլսո մեր Պատրիարքության կարգադրությամբ և առաջնորդական վիճակ դարձած Ս. Էմիլիանի հոգևոր իշխանության հերքել, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Ա-յին հայտնի 2-ի թվականի կոնդակով: Այդ թվականեն մինչև մեր օրերը, Մայր Աթոռի հոգևոր իշխանության տակ ապրած ու զարգացած են ամերիկահայոց բոլոր եկեղեցական համայնքները՝ կազմակերպված եպիսկոպոսական մեր երկու Աթոռներուն շուրջ:

Դժբախտ և հույժ ցավալի պարագաներու հերքել և բաշտումին անկախ Մայր Աթոռի կամքին և ընդդեմ Մայր Աթոռի նվիրական շահերուն, 1933-ին շարժ մը եկեղեցիներ անջատվեցան Միացյալ Նահանգներու հայոց Արևելյան թեմեն և տարիներ շարունակ մերժեցին ընդունիլ հոգևոր իշխանությունը իրենց բեմակալ առաջնորդներուն: Վշտահար քայց միշտ գործվալի, Մայր Աթոռը կամեցավ ու հետապնդեց, որ վերահաստատովի հոգևոր միությունը ամերիկահայության ծոցին մեջ, և իր ցանկությամբ և հրահանգներով բազմիցս փորձե՛ր կատարվեցան այդ նպատակով, Մայր Աթոռի Հայրապետական նվիրակ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի՝ Մեծի Տանե Կիլիկիո հետագա երջանկաբնական կաթողիկոսի և Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսիսյանի՝ Ս. Երուսաղեմի այժմյան հայոց պատրիարքի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներու հայոց Արևելյան թեմի առաջնորդության տարիներուն:

1955-ին, Մեր քննությունեն անմիջապես հետո, այդ ուղղությամբ Մեհմ ևս մտածեցինք ու բարի ծրագրեր հրապարակեցին, և Մեր առաջնիկ կոնդակով միությանը կոչ մը րիճեմ անջատված եկեղեցիներուն: Քայք Ժանաք էր Մեհ, որ նպաստավոր որոշ գեմեր մը սկսած էր ստեղծվիլ և հասունցած էր օրոհգին, և հուսով էինք մեհմ, թե վերջապես հնարավոր պիտի դառնար ըզմալի միությունը վերահաստատովի միացյալ շահներով:

Ան սակայն, սույն տարվան հոկտեմբերի սկզբին, Անթիլիասի ափ մը հոգևորականներ, մոռցած իրենց ուխտը և իրենց հանդիսավոր խոստումները, հոգեպես կտրված մեր տարբ հավատքի Մայր Աթոռներ և Հայոց Աշխարհի Մայր Հողին, անցիտակից եռանդով մը լծված են Սփյուռքի Մեր հոտը ցրվելու և եկեղեցիներ հափշտակելու աշխատանքին:

Մեհմ, տեսնելով ճշանները գալիս վտանգներուն, անցյալ տարի փետրվարին անձամբ գացինք Անթիլիաս՝ հորդորելու համար Կի-

լիկյան միաբանությունը և ժողովրդական հոսանքները, որպեսզի համագգային համերաշխությամբ և միասնության ոգիով կատարվեն Տանն Կիլիկիո կաթողիկոսի ընտրությունը և օծումը:

Այդ օրերուն Մեզ հասկցան բոլորը, բացի Կիլիկյան երեւ հայրականություններն և որոշ քվով ժողովականներէ: Այսպիսով կատարվեցավ—1956 փետրվար 20-ին— միակողմանի և քերի ընտրություն մը Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասլյանի վրա, ընդդէմ Կիլիկյան Աթոռի միաբանության մեծամասնության, ընդդէմ ժողովրդական մյուս հոսանքներուն և հավատացյալներու հոծ զանգվածներու կամքին:

Ի տես ազգային այս աղետին, Կահիրէի եպիսկոպոսական ժողովը (1956 մարտ 5—8) հաշտարար որոշ առաջարկներ ենդկայացուց Անթրիասին, որ ոչ միայն մերժեց, այլ շնոժարեցավ նայեիսկ խոսքի նստիլ, առ ոչինչ համարելով հոգևոր հեղինակությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Երեսադեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքական Աթոռներու և ամբողջ մեր եպիսկոպոսական դասուն:

Մայր Աթոռը, նաև այնուհետև, շարունակեց իր հաշտության և խաղաղության ծայրը լսելի դարձնել, 9 հունիս 1956-ին առաջարկելով, որ փոխադարձ գիշումներով հաշտություն մը գոյացվի կողմերու միջև և Տ. Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսական օծումն ալ կատարվի Ս. Էջմիածնի Մայր Տանարին մէջ: Մերժում ստանալով, 22 հունիս 1956-ին հեռագրով Մեր համաձայնությունը հայտնեցին, որ օծումը կատարվի Անթրիասի Տանարին մէջ: Պատասխան չստացանք: Եւ սեպտեմբեր 2-ին Անթրիասի մէջ տեղի ունեցավ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասլյանի վրա աւարտություն մը՝ երկու հայ և մեկ ոչ հայ եպիսկոպոսներով՝ որ մեր սուրբ կանոններու և ավանդությանց լույսին տակ, հետո չէր կաթողիկոսական ձեռնադրություն և օծում ըլլալն: Հիշյալ ոչ հայ եպիսկոպոսը մասնակցած է միայն ձեռնադրության, իսկ օծման՝ ոչ:

Մեր Ս. Եկեղեցվո պատմության մէջ երբեք չէ պատահած, որ նման աւարտություն մը վավերական և օրինական օծում համարվի:

Իբրև հետեւեմ այս բոլորին, առսվել խորացավ երկփեղկումը Կիլիկյան Աթոռի մէջ, և միաբանության մո ժողովուրդի մեծամասնությունը համախմբվեցավ գերաշնորհ Տ. Կաղարքեպիսկոպոս Արապաճյանի շուրջ, աշտպանելու համար Տանն Կիլիկիո Աթոռի անկախությունը, մեր բազմադարյան սուրբ կանոններն ու ավանդությունները, ինչպես նաև Հայ Եկեղեցվո ու ժողովուրդի միության սուրբ և փրկարար ոգին:

Այնուամենայնիվ Մենք մնացինք լավատես և շարունակեցինք Մեր եղբայրական ձեռք մեկնել Անթրիասին՝ ի սեր Աստուծո և Ազգի, կամենալով տագնապին դարման մը գտնել՝ կանոնականացումովը Տ. Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսության և հաշտության մը երկփեղկված միաբանության: Մեր օհնությունը, սույն տարվան փետրվարին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն նախագահը այս նպատակով դիմեց Անթրիաս և մերժվեցավ: Ապրիլին, Մեր հավանությամբ, Կոստանդնուպոլսո պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս երկու անգամ անձամբ դիմեց Անթրիասի արքեպիսկոսին և պատասխան իսկ չստացավ: Մեր 13 հունիս 1957-ի գրությամբ առաջարկեցինք Գարեգին պատրիարքին՝ վերստին դիմել Անթրիաս՝ խափանելու համար շարք: Դարձյալ անօգուտ: Վերջապես 22 հոկտեմբերին վերջին փորձ մը ըրինք, անձամբ ուղղակի դիմելով Անթրիասի արքեպիսկոսին: Նոյեմբեր 2-ին ստացանք մերժման հեռագիր մը, հեզնական շեշտով խմբագրված և ստորագրված Անթրիասի միաբանի մը կողմից:

Քիչ անգամ պատահած է, որ հոգևորականներ և հասարակական գործիչներ այս աստիճան հեռացած ըլլան պատասխանատրության զգացումն Աստուծո, Ազգի և պատմության առաջ:

Եվ անհայտ Անթրիասն է, որ գլխավորությամբ Տ. Զարեհ և Յ. Խորեն եպիսկոպոսներու, ռեալիստիկ ամեն նվիրակներու, ձեռք կրործեցան Ս. Էջմիածնի դիմ և անօրինակ ու ողբալի համարձակությամբ կհարձակի Մեր հոտին վրա, պառակտելու և առավել ցրվելու համար գայն, իրեն միակ զենք ընտրած ըլլալով՝ Ս. Էջմիածինը և մեր հավատացյալ ժողովուրդը և հոգևորականությունը ցույց տալ քաղաքականորեն անվստահելի և վտանգավոր՝ հաշս օտար պետությանց:

Այսօր անխղճություն մեր հավատքի բազմադարյան սուրբ կեդրոնին հանդեպ՝ անհավատալի կրվի: «Ձժողովուրդս քո, Տէր, խոնարհ աւարին և զծառանգութիւն քո շարչարեցին» (Սաղմ. ԳԳ 5):

Տե՛ր Աստված, ինչքան օտար, ինչքան հեռու են անոնք հայ ժողովուրդի նշմարիտ ապրումներէն, հույզերէն և տեսիլներէն... Նույն նիկոլ Թորոսովիչներն են նույն տխուր հոշակով, երեկ և այսօր:

Անշափելի է ողբերգության անդունդը, դիպի ուր կգահավիժի Անթրիաս իր գործակիցներով: Ու հետզհետ առավել ականբեր պիտի դառնան նշմարիտ իմաստը և ավերիչ հետեւանքները անոնց գործերուն: Երբ այս րե-

բացի շարունակեն, պիտի գա օր մը, երբ այսօրվան ճեղքվածի ճեղքեակները երբ կամենան իսկ, պիտի չկարողանան սրբաբնի իրենց ազգաբանը սխալը: Առանց Ս. Էջմիածնի հուշիսկ ինչ Անթրիքաս նման է ավագի վրա շինված տունը:

Սփյուռքի հայության մանու և կենաց ինքիբը՝ ազգապանդանուր կարելի է կենսագործել մանավանդ՝ պանդանելով մեր ցիրուցան ժողովուրդի հոգևոր միությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնով: Անթրիքասի խմբակը սուրբ փառած կփորձեմ կտրել այդ հոգևոր կապը, որ կմիացնե մեր ժողովուրդը իր հավատքի վրեժ և կյանքի աղբյուր Ս. Էջմիածնին: Այդ սուրբ աղբյուրն է Սփյուռքի հայ ժողովուրդի սրտին:

Մենք այլևս Անթրիքասին ըսելիք չենք գտնել: Հայաստանյայց եկեղեցիին ու Մայր Աթոռին համար Ս. Զարեհ եպիսկոպոս է և կմնա գուրկ կաթողիկոսական իշխանութենե, որ իր հետևորդներով միառիւթ ենթադրած մը ստեղծեցին և շին ենեկյացներ Տանն Կիլիկիա նվիրապետական Ս. Աթոռը և Կիլիկյան հավատացյալ հայ ժողովուրդը:

Իրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, եկեղեցիի և Ազգի առաջ «Աթոռոյ» կցատապարտեմք Ս. Զարեհ եպիսկոպոսը և իր գործակիցները, որոնք իրենց հակակառնական արարքներով և Ամերիկայի մեր թեմերում մեզ կատարած ռոնձգություններով ենթակա պիտի դառնան մեր եկեղեցիի և Ազգի նզովքին: Չենք հաճեալ Անթրիքասին հարած եկեղեցիներում բաժանուր Ս. Էջմիածնեն, որոնք կան ու կմնան հոգևոր իշխանության ենեւ Մայր Աթոռիս: Կոչ կընենք մեր բոլոր նվիրապետական Աթոռներում, հոգևորականության և հասայն հայ ժողովուրդին՝ որևէ ձևով չխաբարել Անթրիքասի աղեկորությունները, հետո մնալ անտեց ձեռքերեն, որոնք իրենց գործերով տխուր էջ մը բացին մեր բազմաշաղաք եկեղեցիի պատմության մեջ: Անոնք նամբա ելած են հայածելու և լացնելու Ս. Էջմիածինը: Եվ երբ Ս. Էջմիածինը կհալածվի, այդ ստույգ նշան է, որ հալածվողը ինքը ամբողջ հայ ժողովուրդն է: Այդ է մեր Ազգի փորձը ճիշտ և նորագույն պատմութենեն:

Բայց ամենահզոր է Ս. Էջմիածինը, հրաշագործ է Ս. Էջմիածինը և հաղթության գեներալը: Երբ ցերեկսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն առիթի նորա յերեսաց նորա: Ուրպէս պակասէ ծովի՝ պակասեցցին, որպէս հալի մոմ առաջի հրոյ՝ այնպէս կորիցենք (Սաղմ. Կէ 2—3):

Ս. Էջմիածինը, այսօր նոր կյանք առած ու գորացած, կանգնած է հայ կյանքի հորիզոնին վրա որպէս հավատքի և հաստ ամբողջ,

և կսպասե իր բոլոր զավակներուն՝ սիրով գրողատե և լավատեսությամբ:

Ս. Էջմիածնի աշխարհի պիտի հետապնդե իր հալածիչները մինչև այն օրը աղաք, երբ անոնք ծունկի պիտի գան ոչ թե մարդաց առաջ, ինչպէս այժմ կրենք, այլ Աստուծո առաջ, Փրկչի իշման Ս. Սեղանի աստիճաններում վրա:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, և Դուք, հոգևոր սպասավորներ մեր սուրբ սեղաններում, միացե՛ք և զորացե՛ք և ձեր սրահներ մեզ առած Քրիստոսի Ս. Ավետարանը և հայոց պատմության գիրքը, անեկյուրդ ու համարձակ պաշտպանեցե՛ք մեր եկեղեցիի սուրբ կանոնները և ավանդությունները, պաշտպանեցե՛ք մեր եկեղեցիի և Ազգի միասնությունը և ներքին խաղաղությունը:

Ո՛վ աստվածակառույց Ս. Էջմիածին մեր, «Ուրախ եկիցին ամենեւեմն ոյ՛լ յաւացեալ են ի քեզ, յաւիտեան ցնծասցեն, և քնակեսցես դու ի նոա, պարծեսցին ի քեզ սիրելի՛ անուան իռ» (Սաղմ. Ե 12):

«Այսուհետև, եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղբարք, անշարժ կացե՛ք, առանկ լեռնի ի գործ Տեառն յամենայն ժամ, գիտասցի՛ք զի վաստակե՛ն ձեր ոչ են ընդունայն առաջը Տեառն» (Ա Կորնթ. ԺԵ 58):

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Փրկչին մերոյ միասնի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսին, ամէն»:

1957 թվականի դեկտեմբեր 20 թվակիր հայրապետական կոնդակում արտահայտված մտածումներին և զգացմունքներին ձայնակցում և արձագանքում էին նվիրապետական մյուս Աթոռները, եկեղեցական թեմերը, ազգային իշխանությունները և մասնավոր՝ ջերմ հավանությամբ:

«Արժան և իրավք որակում էին հայրապետական կոնդակը Թուրքիայի հայոց պատրիարք Գարեգին արքեպիսկոպոսը և մեր առաջնորդները: Հասարակական կարծիքը ևս համաձայն էր հայրապետական դատավճռին:

Վեհափառ Հայրապետը, դատապարտելուց հետո Անթրիքասի դիրքը, իր պատմական կոնդակում նշում էր միաժամանակ, որ Մայր Աթոռը իր ամբողջ կարելին արեց՝ առաջը առնելու համար եկեղեցական այդ պառակտման: Այսօրվա եկեղեցական տագնապի միակ պատասխանատուն Անթրիքասն է: Իդուր է փորձել, օտարներին միջամտությամբ, հայ ժողովրդի սիրտը պոկել Ս. Էջմիածնից, շեղել նրա ճանապարհը սրբազան նախնիքների ուղուց և ավանդություններից:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հավատարիմ մնալով և հայոց լուսաբնակ հայրապետներին գծած լուսավոր ճանապարհներով բնթանալով է, որ հայ ժողովուրդը կարողացել է պա-

հնչի իր գոյությունը, Մեր սրբազան պապերի ավանդություններից և հոգուց հրաժարվելը մեզ կտանի դեպի այլասերում և մահ:

Հայ Եկեղեցու պատմությունը պերճախոս վիճան է այն իրողության, որ երբ Սփյուռքի մի որևէ հատված թուլացրել է իր կայսր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի հետ կորել է հայության համար: Այս էջմարտության հաստատումը նույնիսկ մեր պատմությունն է:

Ով հեռացել է Ս. Էջմիածնից, ով ուրացել է Ս. Էջմիածնի, իր Մայրենի Եկեղեցին՝ նա քնդմիշտ կորել է հայության համար:

1958 թվականի մարտ 1 թվականի նամակով, վեհափառ Հայրապետը, խորհրդածելով Անթիլիասի ոտնձգությունների առթիվ գրված 20 դեկտեմբեր թվականի հայրապետական կոնդակի մասին, ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքին գրում էր հետևյալը.

«...Կնորհիք, թե այսքան չար գործերու և եկեղեցաքանդ արարքներու առջև, Մայր Աթոռի Գահակալ մը անտարբեր չէր կրնար մնալ: Պատմության առջև դատապարտելի պիտի ըլլանք, եթե տկարանանք Ս. Էջմիածինը պաշտպանելու սուրբ գործին մեջ: Եվ այդ պաշտպանության սրբազան գործը պիտի շարունակենք և պետք է շարունակենք մեր բոլոր հոգևոր-բարոյական զենքերով և օրինական միջոցներով, արթնցնելու համար խիղճը համայն հայ հավատացյալ ժողովուրդին: Եվ չենք տարակուսիր, թե այս սուրբ աշխատանքի ճանապարհին վրա պիտի գործակցին Մեզ մեր բոլոր Աթոռները, մեր բոլոր հոգևորականները անվերապահորեն: Կիլիկյան Աթոռի տաղնապար ինչքան ատեն իր սահմաններուն մեջ էր, բնական է, որ միջամտությունը եղբայրական հորդորի բնույթի ունենար: Մեր ներկայությամբ Անթիլիաս և Կահիրեի նպակուպոսական ժողովի առաջարկություններով Մենք կամենանք մասնավոր Աթոռի մը մեջ ստեղծված վտանգավոր տաղնապար լուծել ընդհանուրով և ի շահ ընդհանուրին, իսկ երբ Մեր սիրուկոյը և հորդորները լսելի չեղան, Մենք ճարահատ քաջվեցանք: Մենք երբեք հրահանգներ տալու հովեր չառինք, Մենք երբեք դատապարտության վճիռներ չարձակեցինք, Մենք երբեք թշնամական ոգի չսնուցանեցինք Անթիլիասի և անոր զահակալին նկատմամբ և քաջալերեցինք իրենց ներքին անջատումը կամ ուրիշ Աթոռի մը ստեղծումը, այլ միշտ իրարհասկացողությամբ, միության և խաղաղության շատադուր մնացինք: Սակայն երբ Անթիլիաս մեր հայրապետական թեմերու մեջ ոտնձգություն բրայի և ուղղակի հարձակումներ էջմիածնի և էջմիածնի հավատարիմ հոգևորականներու և ժողովուրդի

դեմ, դանոնք քաղաքականապես կասկածելի և վտանգավոր տարր հռչակելով հրապարակավ (Զարեհ և Խորեն եպիսկոպոսներու հայտարարությունները, ճառերը, որոշ թերթերու խմբագրականները և այլն), և երբ նույն Անթիլիասը ծրագրերն էր կմշակ և գործադրության կդնէ Ս. Էջմիածնեն բաժնելու երուսաղեմի Աթոռը, Հունաստանի թեմը, Պարսկաստանի մեր թեմերը և նաև մեր մյուս առաջնորդական վիճակները, այդ պարագային անշուշտ Մենք այլևս ձեռնածալ չենք կրնար մնալ: Այս պահուս կացությունը հիմնովին տարբեր է: Այլևս մենք կգտնվինք ոչ թե Կիլիկյան Աթոռի տաղնապար մը առջև, այլ եկեղեցական հերձվածող ափ մը խելակորույս և մոլեգնած հոգևորականներու առջև, որոնք Անթիլիասի մեջ նստած կփորձեն աէջմիածինը տակնուվրա ընել (Խորեն եպիսկոպոսի խոսքերն են): Ոչ մեկ նկատում, ոչ մեկ կողմնակի հաշիվ, նույնիսկ ոչ մեկ ձախողանք Մեզ չեն կրնար շեղեցնել Մեր ուղիղ ճանապարհեն: Մենք ամեն զեռով և Մեր բոլոր հնարավոր միջոցներով պիտի պաշտպանենք Ս. Էջմիածինը: Անոնք ալ անշուշտ ամեն զեռով և իրենց բոլոր միջոցներով պիտի աշխատին «տակնուվրա» ընել Ս. Էջմիածինը:

Մեր հույսը պիտի ըլլա Աստուծո և հայ ժողովուրդի հավատքին ու ողջմտության վրա: Մեր պայքարը շինարար է, անոնց պայքարը քանդիչ: Մեր պայքարի նպատակն է միություն և խաղաղություն: Անոնց պայքարի նպատակն է պառակտում, հերձում, ցրում: Անոնց պայքարը քաղաքական կուսակցության մը պատվանդան դարձած է, Մեր պատվանդանը Ս. Էջմիածինն է և մեր վերածնած Մայր Հայրենիքը: Մեր պայքարը սիրո արդյունք է, անոնց պայքարը՝ ատելություն արդյունք: Ստույգ է, որ միշտ սերը կհաղթե, որովհետեւ միայն սերն է շինարար, ատելությունը երբեք ոչինչ չէ շինած: Ոչինչ չէ ստեղծած: Ան կուզա ու կանցնի մարախի ամպի մը նման, անշուշտ ավերներ գործելով: Մեր սերունդի պարտքը պիտի ըլլա հնարավոր չափով արագ հաղթահարել չարիքը ու վերահաստատել Հայ Եկեղեցւո միությունը, որպեսզի հնարավոր չափով նվազ ըլլա ցրվումը և ավերումը: Ուրիշ ճանապարհ չկա այլևս:

Տխուր է միանգամայն հաստատել այստեղ, որ Անթիլիասի և նրան գործակից միշտ քաղաքական խումբը բոլոր միջոցներով ձգտում էր իր անդեցություն տակ առնել էջմիածնական այլ թեմեր:

1958 թվականի հոկտեմբերի 5-ին, Հունահայոց թեմական ժողովը ոչ մի բանով չարդարացված, անհիմն մեղադրանքներով և զրպարտություններով, և ոտար ուժերի վրա

հետևած, նախ Ե կետերից քաղկացած մի քանակն էլ անպատշաճ հետևյալ որոշումն էր ընդունում: Հունաստանի հայոց թեմի միացման մասին Անթիքիայի կաթողիկոսության հետ:

«Առ նորին Ս. Օծոթյուն Ս. Տ. ԶԱՐԵԶ Ա արժանեցնտի կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո»

ՏԱՆՆԻՔԻ

Վեհափառ Տեր.

Հունահայ թեմական ժողովը, 5 հոկտեմբեր 1958-ի իր հերթական նիստին մեջ, հանգամանորեն քննելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ մեր թեմի փոխհարաբերությանը հարցը և այն յուրահատուկ պայմանները, որոնք Ս. Էջմիածնի անտեղի ու վնասակար միջամտությանը հետևանքով ստեղծված են Հունահայ գաղութին մեջ, մասնավորաբար վերջին մեկ տարվան ընթացքին, թեր ու դեմ վիճաբանություններն ետք, որոշեց խզել իր ձևական և վեց ամիսների ի վեր բոլորովին ընդհատված կապերը Ս. Էջմիածնի Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհուրդի հետ և դիմել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, խնդրելով իր հովանավորության տակ առնել Հունահայ թեմը:

Առ այդ, մեր այս դիմումագրին կցելով թեմական ժողովին կողմն այս ուղղությամբ քվեարկված և ժողովի մայր դիմանին կողմն ստորագրված բանաձևը, Աղգային կեդրոնական վարչություն, հանուն թեմական ժողովին, խոնարհաբար կիսնդրեք Զերդ Վեհափառությանն ընթացք տալ հունահայ գաղութի ներկայացուցչական գերագույն ժողովի միահամուռ ցանկության և ըստ այնմ, իր քարձր իշխանությունը տարածել նաև Հունահայ թեմին վրա:

Աղգային կեդրոնական վարչությունը ջերմորեն կհավատա, որ Զերդ Վեհափառությունը պիտի քարոհաճի ընդունել մեր այս դիմումը, ապահովելով մեր գաղութի ապագա քարգավաճման համար նոր և այնքան օգտակար շրջանի մը սկիզբը:

Կանխելով այս առթիվ մեր երախտագիտական ջերմ շնորհակալությունները Զերդ Վեհափառության և մատչելով ի համբույր Ձեր Ս. Արույն,

Մենաք որդիական ակնածանոր ի դիմաց

Հունահայ Աղգային կեդրոնական վարչության Ատենադպիր՝

ԺԻՐԱՅՐ ՃԱՆԿՑԱՆ

Փոխ-առնակալելով՝

ԳԱՐԻԲԵՆՆԻ ՎԱՐԺԱՊԵՏՏԱՆ

Աթենք, 7 հոկտեմբեր 1958 թ.

(«Հասկա» № 10—11, հոկտ.—նոյեմբ., 1958 թ., էջ 407):

Իսկ բանաձևում նշված վեց կետերը ոչ մի բանով չարդարացված վեց անհիմն մեղադրանքներ և զրպարտություններ են Ս. Էջմիածնի հասցեին, Հունահայ թեմի հափը: Երկուսը արդարացնելու միամիտ ցանկություն մը, այնպիսի մարդկանց կողմից առաջ քաշած, «որոնք ոչ մեկ հոգևոր իշխանություն չունին Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո և անոր հավատացյալ ժողովուրդին վրա», — ինչպես արդարորեն նշել է Վեհափառ Հայրապետը, Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Ս. Արմենակ-Մեսրոպ ավագ քահանա Տեր-Հակոբյանին ուղղված 1959 թվականի հունվար 7 թվակիր հայրապետական կոնդակում:

«Հասկա» մասագրի 1958 թվականի հոկտ.—նոյեմբ. համարում տպվել է Անթիքիայի աթոռակալի Հունաստանի հայոց թեմի հափը շտապությունը արդարացնել փորձող նոյեմբեր 6 թվակիր հետևյալ գրությունը, որտեղ ևս կան Մայր Աթոռի հասցեին ուղղված նոր անմիջական մեղադրանքներ:

«Այսու հայրապետական կոնդակով կհայտնենք ձեզ, հարգատից Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, թե ստացած ենք թեմիդ պատկանելի Աղգային կեդրոնական վարչություն 7 հոկտեմբեր 1958 թվակիր և 196 թվահամար պաշտոնագիրը, որով մեզի կփոխանցեիք թեմիդ պատկանելի թեմական ժողովո քվեարկած բանաձևը, ձեր թեմը կիլիկյան Ս. Աթոռին հովանավորության և հոգևոր իշխանության տակ դնելու մասին:

Ի հեռուստ հետևեցանք Հունահայ թեմիդ ներքին արևելակողմյան և խռովքին, որոնք մեծապես կվնասեն հայ ժողովուրդի պատվական համբավին ու վարկին: Ու այս՝ բարեկամ երկրի մը մեջ ու իշխանությանը ներքե քարոհանք կառավարության մը, որոնք հիմնապես կապված են քրիստոնեական մեր սուրբ կրոնքին և խոր հարգանք կմատուցանեն հոգևոր իշխանության արժանավոր ներկայացուցիչներուն, Ականատես և ականջալուր էինք ձեր բոլոր ճիգերուն, ի խնդիր օրենքի գործադրության և Հայաստանյայց Եկեղեցվո հիմնավոր ու ժողովրդավար ոգիի պահպանման, ծավալող սրտի կնկատներնք, սակայն, թե Հունահայ թեմիդ կպարտադրվեք վարչական նոր կերպ մը, որ հակառակ է և խորթ հիմնովին՝ Հայաստանյայց Եկեղեցվո ըմբռնումներուն, դարերու սովորույթին և աղգային-եկեղեցական համադրամարներով հաստատված օրենքներուն, որոնք այս պարագային կամովին մոռացության կտրվին շահախնդրի և անխոստովանելի նպատակներով: Դուք, սակայն, սիրելի

և հարազատ դավաններ Հայաստանյայց Եկեղեցվո, բոլոր դժվարությանց հաղթահարեցիք ձեր համբերատար ոգիով և գագութից օժտեցիք պատգամավորական ժողովով, 30 մարտ 1958-ի ժողովրդական ընտրությամբ ու այնուհետև թեմի ունեցավ իր սահմանադրական և ընտրյալ առաջնորդը հանձին մեր սիրելի հարազատին և որդւնւն, Տ. Սահակ եպիսկոպոս Ավագյանի, 6 ապրիլ 1958-ին: Ու, որպեսզի այսուհետև ձեր խաղաղությունը չխոտովի անտեղի ու ապօրին միջամտություններով, ահա կդիմեք մեղի, որպեսզի ձեր թեմն ևս առնենք մեր բարոյական հովանավորության և հոգևոր իշխանության ներքև:

Ուրախ ենք ի սրտե, որ միաբանության երիտասարդ անդամներն գործունյա, նվիրյալ և գիտակից Տ. Սահակ եպիսկոպոսը ձեր թեմի առաջնորդ ընտրեցիք: Խորապես հավատացած ենք, որ նորապսակ սրբազանը, ինչպես անցյալին մեջ, նույնպես հետագային պիտի ծառայե ամենայն նվիրումով, դժարերությամբ և գիտակցությամբ թեմիդ, դոր ներկա կոնդակով կառնենք մեր հովանավորության և հոգևոր իշխանության ներքև:

Սիրելի դավաններ Կիլիկյան Ս. Աթոռիս և հարազատներ Հայաստանյայց Ս. Եկեղեցվո, մեր պատվերն է բոլորիդ, հոգևորականներուդ և աշխարհականներուդ անխտիր, ըլլալ հավատարիմ հպատակներ հրկրին, որում բարեքները կվայելեք ամենայն ազատությամբ: Մի՛ մոռնաք, թե պատմական և պատվական Ուլաղան ասպնջական է ու իր սիրտը լայն կրանա իրեն բոլոր դիմողներուն: Սիրեցե՛ք զայն ու անգամ մը ևս թող փաստվի, թե հայ ժողովուրդը երախտամոռաց չէ և հավատարմորեն կհպատակի իր ապրած երկրի օրենքներուն: Աշխատեցե՛ք, քահանայք և ժողովուրդ, վերականգնել ձեր բարի համբավը, որ լարամիտներու կողմից կասկածի տակ դրվեցավ: Զիրար սիրեցե՛ք, զիրար հարգեցե՛ք և քրիստոնեական սուրբ կրոնքի ուսուցումներն ըլլան ձեր առաջնորդները: Հայաստանյայց Եկեղեցվո և հայ ժողովուրդի դավաններն ենք, նույն ցեղին ժառանգորդներն ու արմենական նույն աշուղները կրողներ: Խաղաղությամբ ապրեցեք, բարեխանձ Հունական պետության և հույն ազնվական ժողովուրդին ձեր բոլորի հանդեպ տածած գուրգուրանքին ու համակրանքին միշտ արժանի մնացե՛ք: Ձե՛ւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեւեանդ, ամէնէն:

(«Հասկ», № 10—11, հոկտ.-նոյեմբ. 1958 թ., էջ 369—370):

Անթիլիասի աթոռակալը այս անգամ փորձում է մեղադրել Մայր Աթոռին Հունաս-

տանի հայոց թեմում որպես սվարչական նոր կերպ մը պարտադրողի, շահախնդրի և անխոստովանելի նպատակներով: Հայաստանյայց Եկեղեցու կարգն ու կանոնը, Եկեղեցու սահմանադրական օրենքները, դարերի ավանդությունները սկսածովին մոռացության տվողի:

Միծաղելին այն է, որ Անթիլիասի աթոռակալը Մայր Աթոռի հոգևոր օրինավոր կապը Հունաստանի հայոց թեմի հետ որակում է որպես աստեղի և ապօրին միջամտություն: Թեմի գործերին:

Ինչպես հայտնի է, Հունաստանի հայոց թեմը կազմվել է 1890-ական թվականներին, երբ Կոստանդնուպոլսի 1895—1896 թվականների հայկական տխուր կոտորածներից հետո գաղթականության մի նոր հոսանք սկսվում է դեպի Հունաստան: Առաջին գաղթականները հաստատվում են Աթենքում, Պիրեայում, Սալոնիկում, կազմելով Հունաստանում հայ նոր համայնքի առաջին կորիզը, որին ապա գալիս են միանալու տասնյակ հազարավոր նոր գաղթականների խմբեր 1921—1922 թվականներին:

Հունահայ գաղութը ժամանակավորապես ղեկավարվում է Կոստանդնուպոլսի Պատրիարքարանից ուղարկված այցելու հոգևոր հովիվներով:

1908 թվականի սեպտեմբեր 22 թվակիր արքայական հրովարտակով պաշտոնապես հաստատվում է Հունաստանի հայ համայնքը որպես «Աթենքի և Պիրեայի արևմտյան օրթոդոքս հայերու հասարակություն»: Բայց Հունաստանի հայ գաղութը, չկազմելով օրինական փոքրամասնություն, ղրկվում է քվեարկության և կազմական կանոնագրի իրավունքից: Այս պատճառով Հունաստանի հայոց առաջնորդները և նրա խորհրդականները միշտ եղել են նշանակովի, 35 տարիներից ի վեր:

1923 թվականին Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի կողմից Հունաստանի առաջնորդ և Պատրիարքարանի պատվիրակ է նշանակվում Կարապետ արքեպիսկոպոս Մաղլըմյանը, որը Հունաստանի հայոց թեմը ղեկավարում է մինչև իր մահը՝ 1951 թվականը:

Մաղլըմյան սրբազանի առաջնորդության տարիներին նրա զվիսավոր գործակիցներն են հանդիսանում Նշանակված կենտրոնական վարչություններ, խորհրդակցական բնույթով:

Մաղլըմյան սրբազանի մահից հետո, Մայր Աթոռի կարգադրությամբ և նշանակումով, որպես էջմիածնի թեմի, Հունաստանի հայոց թեմը ղեկավարում է Եգիպտոսի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբ-

րե արքեպիսկոպոս Սիրուեանը՝ այցելու թեմակալ առաջնորդի հանգամանքով, մոտավորապես երկու տարի:

1958 թվականին Նրուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներից հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղաղարյանը ստանձնում է Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը, Աթենքի հայոց Կենտրոնական վարչության հրավերով:

1957 թվականի հուլիսի 7-ին, Հունաստանի հայոց թեմական խորհրդին ուղղված Վեհափառ Հայրապետի սրբառառ կոնդակով, առաջնորդ է Հայրապետական պատվիրակ է նշանակվում Տ. Իսահակ վարդապետը: Այդ առթիվ Վեհափառ Հայրապետը գրում էր.

Ենկատի ունենալով հունահայ թեմը առաջնորդով մի օծտելու անհրաժեշտությունը՝ ի շինություն և ի պայծառություն ձեռնկողնական կյանքի, և ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պետականորեն իբրև առաջնորդություն (մետրոպոլիա) ճանաչված ձեռն թեմը անհարմար է և ոչ օգտակար՝ երկար ժամանակ թողուլ առանց հոգևոր պետի, և հաստատելով, որ վերջին մեկ տարվան ընթացքին ձեռն առաջնորդական տեղապահը իր կենդանի խոսքով և գործով, իր նվիրումով և ժողովրդասիրությամբ արդյունավետ դարձուց իր հոգևոր աշխատանքը ձեռն թեմին մեջ, Մենք Մեր այս գրով հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղաղարյանը Հայրապետական պատվիրակ կնշանակենք հունահայոց թեմին, որպեսզի իբրև առաջնորդ ղեկավարե ձեռն թեմը և այդ հանգամանքով ճանաչվի նաև պետական իշխանության կողմից՝ համաձայն ձեռն քառնական երկրի օրենքներուն:

Քանի որ մինչև վերջերս Հունաստանում չկար մի թեմական կանոնադրություն առաջնորդ ընտրելու մասին, շատ բնական էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական նվիրակ կամ առաջնորդ նշանակեր Հունաստանի հայերի համար, առաջնորդ՝ որ միշտ ճանաչվել էր պաշտոնապես հույն կառավարության կողմից որպես «հայոց միաբնակից»:

Այս պարագային էլ, 1957 օգոստոս 26 թվակիր պաշտոնադրով, Հունաստանի թագավորության Կրթական և կրոնական գործոց ազգային նախարարության նախարար պր. Ա. Նրոզոստոպոլոսը «Հունաստանի ուղղափառ հայոց առաջնորդը հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետին հայտնում էր իր խորին գոհունակությունը և հրճվանքը այս բարձր և սուրբ պաշտոնի ստանձնման առթիվ և իր հավանությունն էր տալիս Վեհափառ Հայրապետի կողմից Իսահակ վար-

դապետի Հունաստանի հայոց թեմի առաջնորդ նշանակմանը (պրոտոկոլ N 77650):

Գերապատիվ Տ. Իսահակ Ղաղարյան Հունաստանի ուղղափառ հայոց առաջնորդ 72 Հիպոկրատոս փողոց, աստ:

Ձերդ գերապատվություն.

Այսու կծանուցանենք, թե ռապած ենք ձեր հունիս 20 1957 թվակիր նամակը, որով մեզ կտեղեկացնեք, թե ուղղափառ հայոց Մայրաքույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի 10 հունիս 1957 թվակիր կոնդակով նշանակված եք Հայրապետական պատվիրակ և առաջնորդ Հունաստանի ուղղափառ հայոց, այդպիսով՝ պաշտոնապես ստանձնած հունահայության թեմի առաջնորդությունը:

Ձերդ գերապատվության այս բարձր ուսուրբ պաշտոնի ստանձնումը մեզ տեղեկացնելուդ առթիվ կհայտնենք մեր խորին գոհունակությունը և հրճվանքը ու կծանուցանենք, թե Հելլեն կառավարությունը, որ միշտ բարյացակամ եղած է, կշարունակի այսուհետև ևս միևնույն բարեկամական տրամադրությունը տածել հանդեպ հայ եկեղեցական համայնքին:

Ա. ՆՐՈԳՈՍՏՈՊՈԼՈՍ

Նախարար

(Կնիք Կրթական և կրոնական գործոց ազգային նախարարության)

26 օգոստոս 1957

Աթենք:

Հունաստանի թագավորության Կրթական և կրոնական գործոց ազգային նախարարությունը իր պաշտոնական գրության պատճենն ուղարկել էր նաև Օտար դավանությանը բաժնին, ներքին գործոց նախարարության ընդհանուր տնօրենության, ներքին գործոց նախարարության Օտարների սպասարկության բաժնին և Արտաքին գործոց նախարարության Կրոնական գործոց տնօրենության՝ ի գիտություն:

Այս առթիվ հրապարակում ենք նաև Հունաստանի թագավորության Կրթական և նախարարության և կրոնից ընդհանուր տեսչության անօրեն Վ. Յուանիդիսի 1958 թվականի նոյեմբեր 20 թվակիր պաշտոնական գրությունը, ուղղված ներքին գործոց նախարարության և Ոստիկանական ընդհանուր տնօրենության, նյութ՝ «Օրթոդոքս հայերու առաջնորդ Սահակ Ավագյան» և այլն:

Ահա այդ գրությունը, N 140 724ա.

«Անդրադառնալով 11 515—168—3571 համար 1958 թիվ ձեր պաշտոնագրին, և ի մասնավորի անոր վերջին հատվածին, ի մասին հայոց այժմուս առաջնորդ Սահակ

Այվազյանի և այլն մեր կողմն ճանաչվելուն կամ ոչ... ձեռքի կտեղեկացնենք, թե քնավ իրավասու չենք այս նկեղեցվու ներքին հարցերուն վերաբերյալ, անոր գործերուն օրինավորության կամ ոչ օրինավորության մասին որոշում կայացնելու Այդ գործերը դատելու և վավերացնելու իրավասու է Ամենայն Օրենսդրության Հայոց Ստանդարտի Պատվարի, որ հաստատված է ի Ս. էջմիածին:

Այս պատճառներով վերջերս իրեն 524 884 համար 31—7—1958 թվականով տված որոշումը, որով հայ քահանա Մեսրոպ Տեր-Հակոբյան, հոգևոր հովիվը հին կոկի-նիո II, Հակոբ Նկեղեցվու, անարժան նկատված է իբր քահանա և հոգևոր հովիվ, և անոր արգելք կրլլա կղերական սքեմ կրել, պատարագ կամ ուրիշ կրոնական արարողություն կամ մկրտություն, հարսանիք, հուղարկավորություն և այլն կատարելու, վերջականապես պետք է բնկի էջմիածնի մեջ նստած Օրենսդրության Հայոց Ստանդարտի Պատվարի կողմն, համաձայն Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի 901 համար 29—10—1926 պաշտոնագրի, և հետևաբար չեղյալ է, քանի որ Ստանդարտի Պատրիարքին այս հարցին վերաբերյալ որոշումով չէ վավերացված իր որոշումը:

Վերոգրյալ պաշտոնագրին պատճենը կցյալ կուղարկենք ձեզի:

(Բոլոր ընդգծումները խմբագրությունն են):

Կրոնից բեղմանու տնօրեն՝
Վ. ՅՈՒԱՆՆԻՍՅԱՆ

Պետական այս երկու փաստաթղթերի հրատարակությունը հստակ կերպով ցույց է տալիս Հունական պետական իշխանությանը վերաբերմունքը Ս. էջմիածնի և Հայրապետական նվիրակ և Հունաստանի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղազարյանի նկատմամբ: Մեկնությունները ավելորդ են, Քաղաքական արտաքին միջամտություններով և զրպարտություններով միայն ստեղծված հունահայ եկեղեցական տաճնապը քաջ հայտնի է բոլորին: Մանոթ է, թե ինչպիսի լար ձեռքեր հաղորդեցան շփոթության մատենի Հունական պետական իշխանությունները և երկրից արտաքսել տալ Մայր Աթոռի ներկայացուցչին: Մանոթ են նաև այն կուսակցականներն ու գործիչները, որոնք այդ տաճնապը ստեղծելու նպատակով, Եգիպտոսից և Լիբանանից շտապեցին Աթենք և ամիսներով աշխատեցին այդ ուղղությամբ և նպատակով, բացահայտորեն հենված օտար ուժերի վրա, օգտագործելով նաև Լիբանանի նախկին նախագահ պր. Ք. Շամունի աղբյուրությունը Աթենք:

Հունաստանի հայոց թեմի Կենտրոնական վարչությունը, որն արգեն 15 տարուց ավելի է, ինչ պահում է իր գոյությունը, նշանակված լինելով Մազլումյան սրբազանի առաջնորդության օրերին, մոտ մեկ տարի աշխատելուց և համագործակցելուց հետո առաջնորդի հետ, ճիշտ այն պահին, երբ Մայր Աթոռը հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետի պաշտոնը օրինականացնում էր՝ նրան նշանակելով Հայրապետական պատվիրակ, Մայր Աթոռ ուղարկված իր 1957 թվականի հունիս 28-ի հեռագրով և 1957 թվականի հունիս 29 թվակիր նամակով, առաջնորդական պատասխանատու և փափուկ պաշտոնին՝ համար անհարմար էր գտնում առաջնորդին և պահանջում Իսահակ վարդապետի հեռացումը Հունաստանից:

Վեհափառ Հայրապետը Հունաստանի հայ թեմի տաճնապի մասին 1958 մարտ 1 թվակիր Գարեգին պատրիարքին ուղղված նամակում գրում էր.

«...Գալով Հունահայ թեմի վիճակին, այստեղ ևս վերին միջամտություններն են, որ վեհական դեր կատարեցին հոգուտ անթի-խասականներուն: Կիտրհինք, թե ժանոթ են Ձեզ բոլոր մանրամասնությունները: Մենք լրիվ համաձայն ենք Ձեզ հետ, թե առաջնորդները նշանակվի ըլլալու չեն, սակայն Հունաստանի պարագան բացառիկ էր, տրված ըլլալով, որ՝

ա. Թեմը որևէ կանոնադրություն չունի, որուն հիման վրա կարելի ըլլար առաջնորդ ընտրել:

բ. Հին Կեդրոնական վարչությունը որևէ օրինական հիմք չունի և ընտրված մարմին չէր, այլ 15 տարի առաջ նշանակված մարմին մը նախկին առաջնորդի կողմն:

գ. Նախկին առաջնորդը ևս ընտրված չէր, այլ նշանակված իր ատենին Պոսո պատրիարքին կողմն և ճանչցված իբրև հունահայոց առաջնորդ Հունաստանի կառավարության կողմն:

Ահա այս բոլորը ի նկատի ունենալով, մենք Հայրապետական պատվիրակ և առաջնորդ նշանակեցինք Իսահակ վարդապետը այն համոզումով, որ երբ մոտ ապագային հնարավոր կրլլա կանոնադրություն մը մշակել, տեղի կունենան ընտրություններ թե՛ առաջնորդի և թե՛ օրինավոր Կեդրոնական վարչության մը:

Սակայն այս ոգիով Մեր բոլոր կոչերը անտեսվեցան նախկին Կեդրոնական վարչության կողմն: Մենք ամեն գնով Իսահակ վարդապետը պարտադրելու մտադիր չէինք, քանիցս գրեցինք իրենց, որ առ այժմ գործակցին վարդապետին հետ մի քանի ամիս և մամանակ տան, որ Մայր Աթոռը քննե այս

խնդիրը, ի հարկին Մամբրե արքեպիսկոպոս Սիրուելյանին ուղարկելով իբրև անաչառ քննիչ: Սակայն համառորեն և անխորհուրդ կերպով Մեր բոլոր հայրական ու հաշտարար առաջարկները մերժեցին և նույնիսկ իրենց նամակներով համարձակորեն ժխտեցին Մայր Աթոռի հեղինակությունը և իրավունքը Հունահայ թեմի ներքին գործերուն միջամուխ ըլլալու: Եվ այս բոլորը մարմնի մը կողմն, որուն գոյությունը որևէ իրավական հիմունք չունի: Ահա թե ինչու Մենք հետըզհետ համոզվեցանք, թե անոնց միտքը ծուռ է և իրենք ոչ թե Իսահակ Վարդապետին հետ հաշիվ ունին (զոր իրենք իսկ հրավիրած էին և մեկ ամբողջ տարի գործակցած էին առանց որևէ դժգոհության), այլ իրենց նպատակն է մերժել Մայր Աթոռի հեղինակությունը և հնար մը գտնել Անթիլիասի ճամբան բանալու: Եվ եթե այդ է իրենց մտադրությունը, անշուշտ համաձայնության որևէ եզր գտնել հնարավոր չէ: Ամեն տեղ նույն հակառակորդն է, որ նույն ոգիով, նույն նպատակներով և նույն մեթոդներով կայացարի Մայր Աթոռի դեմ, դուռ քաղաքական նպատակներով:

Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, Գերագույն Հոգևոր Խորհուրդը հանգամանորեն քննելուց հետո հունահայոց եկեղեցական տաճնապը, 1957 հուլիս 20 թվակիր նամակով պատասխանեց Աթենքի Կենտրոնական վարչությանը:

Երբ շատ ցավալի է, որ երիտասարդ մի վարդապետ, որ մոտ մեկ տարի է ինչ ձեռք բերում աշխատում է իբրև առաջնորդական տեղապահ, և որի մասին ոչ մի դժգոհություն չէիք հայտնել, հանկարծ ծանր ամբաստանություններով մեղադրվում է այն պահին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակում է նրան Հայրապետական պատվիրակ:

Անսպասելի էր այս Մայր Աթոռիս համար և անբացատրելի, վասնզի Վեհափառ Հայրապետը վստահ էր, թե դուռ ուրախությամբ պիտի ընդունեիք Իր որոշումը՝ ձեռնադրական տեղապահի մասին:

Մեզ խոր վիշտ է պատճառում նաև ձեռք այն ակնարկը, թե Մայր Աթոռը նախօրոք չի առել ձեռն համաձայնությունը և գրում եք նույնիսկ՝ «Հայտնի է Ձերդ Վեհափառության, որ գաղութի հոգևորս ենթակա ըլլալով հանդերձ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և անոր Հայրապետին, ի վարչական ենթակա է Ազգային Սահմանադրության ժողովրդական սկզբունքներուն և տրամադրություններուն»:

Մեր կարծիքով այս ոգիով չէ, որ պետք է խոսեիք Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ՝

Մայր Աթոռը ամբաստանելու դիրքի մեջ դնելով ինքենոր ձեռք:

Թյուրիմացության մեջ եք ընկնում կարծելով, թե Հունահայ թեմը միայն ի հոգևորս ենթակա է Մայր Աթոռին: Այդ բանաձևը վերաբերում է Մայր Աթոռի հարաբերություններին: Մայր Աթոռը լրիվ իրավունք ունի Հայրապետական պատվիրակ նշանակելու և առաջնորդ իրավունքները որևէ թեմի համար, ինչպես արվել է շատ հաճախ անցյալում: Մրանով քնալ չեն խախտվում սահմանադրական ժողովրդական սկզբունքները, որովհետև այդ առաջարկությունից հետո ժողովուրդը օրինավոր ընտրությամբ կարող է ընտրել կամ լքնտրել տվյալ թեմականին: Բայց ոչ մի դեպքում որևէ թեմական խորհուրդ կամ Կենտրոնական վարչություն իրավասություն չունի ի հառաջագունեմ մերժելու հայրապետական որոշումը Իր պատվիրակի նկատմամբ:

Այնուամենայնիվ, հակառակ այն իրողության, որ Մայր Աթոռում բազմաթիվ հեռագրեր ստացվեցին հունահայ զանազան եկեղեցական և ազգային կազմակերպություններից, որոնք ամբաստանում էին Աթենքի Կենտրոնական վարչությանը՝ հունահայ գաղութի ծոցում այսպիսի արվեստականորեն և այլ նպատակներ հետապնդող կաթողիկոս ստեղծած լինելուն համար, Մայր Աթոռը շարունակեց գործակցել և բանակցել վարչության հետ, նրա առաջ երբեք չհանեց իրավական-կանոնական դժվարություններ, աշխատեց հաշտարար և անկողմնակալ ոգով վարչության հետ, և երբ որոշ անհամաձայնություններ ծագեցին առաջնորդական տեղապահի և Կենտրոնական վարչության միջև, Մայր Աթոռը կամեցավ հարցը քննել անկողմնակալորեն և այնուհետև հանգել առարկայական եզրակացության, ապա անելու համար համապատասխան կարգադրություններ, ի հարկին նույնիսկ ետ կանչելով Իսահակ Վարդապետին, եթե Կենտրոնական վարչության՝ նրա դեմ կատարած ամբաստանությունները առարկայական և օրինավոր քննությամբ ճշտվեին: Բայց Կենտրոնական վարչությունը Մայր Աթոռի բոլոր առաջարկները և կոչերը մերժեց և փորձեց ժխտել Մայր Աթոռի՝ հարցը քննելու իրավունքն իսկ: Կենտրոնական վարչությունը կտրուկ ասում էր. «Մենք բացարձակապես չենք ճանաչում որևէ հոգևոր առաջնորդ, որ նշանակված լինի Ս. Էջմիածնից»:

Այսպես, հունահայ տաճնապի առիթով էլ դժբախտարար «ծայն բարբառոյ յանապա-

տի» մնացին հայրապետական հաշտարար ու խաղաղասիրական ողով գրված հորդորներն ու կոչերը:

«Ի սեր Աստծո, ե՛րբ և ի՛նչպես,— գրում էր Վեհափառ Հայրապետը 1957 հուլիս 13 թվակիր նամակով Գարեգին պատրիարքին,— Մայր Աթոռ Բաղնիքի տեսակետներ է պարտադրած կամ առաջադրած սերնդի հայրապետական Աթոռներուն և կամ բնականաբար: Երեսուցեի և Կոստանդնուպոլսոյ Աթոռները և մեր առաջնորդութիւնները ի՛նչ աշխատիք են հրահանգներ են ստացած և ինչո՞ւ, և ի՛նչպէս Մայր Աթոռը կաշկանդած է անոնց ներքին վարչական-կազմակերպական ինքնավարութիւնը: Փաստաբանները այդ իմաստով, բոլոր մեր արտասանման Աթոռները և բնակիչ ինքնավար և անկախ, և կողմէն համաձայն սահմանադրական կանոններու և տեղական պետական օրենքներուն և պայմաններուն: Եվ կզարմանան, թե այս արեւի լուսի պես պարզ ճշմարտութիւնը ինչպիսի շտեմել կ'ընեն ումանք: ... Այո, մեր եկեղեցին սփռնչի կառուցվածք մըն է, այդ սփռնչիութիւնը կ'ընեն միութեան և ներքին ներդաշնակութեան ոգիին մը, զավանաբանական կանոնակալութեան, հոգևոր բարոյական և ազգային տեսակետներէ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ ենթակայութիւնը գոյտ կանոնական և հոգևոր բարոյական ենթակայութիւն մըն է, ամբողջած ազգային գիտակցութեամբ: Մանավանդ այսօր, երբ Ս. Էջմիածինը նախկին օգնչելով իր առաքելութեան ուղիղ ճամբուն վրա կ'գտնվի, ինքնակամ և անկաշկանդ, տարբեր պիտի մտածէր և տարբեր ոգիով պիտի գործէր»:

Այս գաղափարները լուսի տակ, Մայր Աթոռը, Վեհափառ Հայրապետը վստահ են իրավունքի և արդարութեան վերջնական հաղթանակին և մանավանդ հունահայ կարգապահ և օրինավոր ժողովրդի արթնամտութեան և կորովին:

Այս րոտորից հետո շարունակվեցին ունեւորութիւնները: Անսպասելի կերպով, նույն դավադիր ձեռքը երկարվեց դեպի Իրան:

1958 թվականի մայիսին Մայր Աթոռում ստացվեց Թեհրանի հայոց թեմական խորհրդի մարտ 29 թվակիր հետեւյալ նամակը, որով հաղորդվում էր, որ Թեհրանի թեմի պատգամավորական ժողովը, փետրվարի 26-ին գումարած իր հերթական նիստում, քննելով 1949 թվականի հուլիս 25-ի Նախարարաց խորհրդի որոշումը ի մասին Իրանի փոքրամասնութեանց կրօնական պետերի և պատվիրակների, և Թեհրանի թեմի ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հարաբերու-

թիւնները, գտել է, որ այդ հարաբերութիւնները 1949 թվականից հետո ունեցել են միայն ձեւական և անվանական բնույթ...», և որոշել է «դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած ձեւական կապն եւ խնդրամատուց լինելը Անթիքիս»՝ «Թեհրանի թեմն առնելու իր հովանու ներքո»:

«Նորին Սուրբ Օմութեան Ս. Ս. ՎԱԶԳՆՆ և Մայրապետը Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Վեհափառ Տե՛ր.

Այսու որդիական պարտք ենք համարում Ձերդ Վեհափառութեանը խոնարհաբար հաղորդելու, որ Թեհրանի թեմի պատգամավորական ժողովը, սույն թվականի փետրվարի 26-ին գումարած իր հերթական նիստում քննութեան առնելով Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Թեհրանի թեմի փոխհարաբերութիւնները խնդիրը, հանգեց այն եզրակացութեան, որ Իրանի փոքրամասնութեանց կրօնական պետերի և պատվիրակների նկատմամբ, Իրանի Նախարարաց խորհրդի 1949 թվականի հուլիսի 25-ի, Ձերդ Վեհափառութեանը ծանոթ, որոշումից ի վեր, Թեհրանի թեմի և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հարաբերութիւններն ունեցել են միայն ձեւական և անվանական բնույթ: Միաժամանակ, նկատի ունենալով Թեհրանի թեմի համար ստեղծված խիստ բացառիկ պայմանները և մեր եկեղեցու անվտանգութեանը կապված որոշ մտահոգութիւններ, ինչպէս և մի շարք այլ հիմունքներ, պատգամավորական ժողովն իր վերահիշյալ նիստում միաձայնութեամբ որոշեց՝ դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած կապն եւ խնդրամատուց լինելը Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռին՝ Թեհրանի թեմն առնելու իր հովանու ներքո:

Մտաշնելով ի համրույր Ձերդ Վեհափառութեան Ս. Աջույն, մնամք խորին հարգանքը՝

Թեհրանի հայոց թեմական խորհրդի
ատենապետ՝
դոկտ. Ա. ԲԱԲԱԼՅԱՆ

Թեհրան,

20 մարտի 1958 թ.

№ 105/25»:

Վեհափառ Հայրապետը իր ապրիլ 24 թվակիր հեռագրով Թեհրանի թեմական խորհրդին հաղորդում էր, որ Մայր Աթոռը չի կարող երբեք համաձայն լինել այդ անօրինական որոշման, որովհետեւ, եղբայրացնում էր Վեհափառ Հայրապետը, պատգամավորական ժողովը ոչ մի իրավասութիւն չունի հայ եկեղեցիների և ժողովրդի հոգեւոր կապը խզելու Ս. Էջմիածնից:

«Թեհրանի հայոց թեմական խորհրդին
Քեհրան

Ապրիլի 22-ին ստացանք ձեր 29 մարտի
նամակը:

Մայր Աթոռ ըի կարող համաձայն լինել
ձեր որոշման: Ոչ ոք իրավասություն չունի
ձայն եկեղեցիների և հավատացյալների հո-
գևոր կապը կտրել Ս. էջմիածնից: Մենք պի-
տի գրենք ձեզ, Մեր խոսքը ուղղելով թեմա-
կան ժողովիդ և իրանահայ ժողովրդին:

Ի հարկին Մենք պիտի դիմենք նաև Իրանի
քարեխնամ կառավարության:

Մինչ այդ, մնացե՛ք խաղաղ և լավատես և
մի՛ կատարե՛ք որևէ ձեռնարկ՝ դիմելու այլ
եկեղեցական կենտրոնի:

Մենք վստահ ենք, թե ամեն դժվարությու-
ն կհաղթահարվի և Ս. էջմիածինը, իբրև հո-
գևոր կենտրոն, իր դարավոր հովանին կպահ-
պանե Իրանի դրացի և քարեկամ պե-
տության մեջ գործող հայ եկեղեցիների վրա,
հարգելով իրանական պետական օրենքներն
ու շահերը:

Իրանի հայ թեմերը, ինչպես անցյալում,
դարեր շարունակ, կան ու կմնան նաև այ-
սուհեռու Մայր Աթոռ Ս. էջմիածնի հոգևոր
իշխանության ներքև:

Կհաղորդե՛ նամակը:

Լսեցե՛ք էջմիածնի սուրբ ձայնը և ընդու-
նեցե՛ք Աստուծո և Մեր հայրապետական
օրհնությունը:

ՎԱՋԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

24 ապրիլի 1958 թ.

Ս. ԼՋՄԱՍԻՆ:

Միաժամանակ Գերագույն Հոգևոր Խոր-
հուրդը Թեհրանի հայոց թեմական խորհրդին
և պատգամավորական ժողովին ուղղած 2
մայիս թվակիր պաշտոնական նամակով
հանգամանորեն և Մայր Աթոռի ու Թեհրանի
թեմի միջև փոխանակված րազմաթիվ նա-
մակագրությունների և այլ պատմական
փաստերի լույսի տակ, սպառիչ կերպով
պատասխանում էր թե՛ մարտ 6-ի հաղոր-
դագրության 8 անհիմն մեղադրանքներին և
թե՛ մարտ 29 թվակիր Թեհրանի թեմական
խորհրդի նամակին, հորդորելով, որ վերա-
հաստատվեն դարավոր հոգևոր կապերը
Մայր Աթոռ Ս. էջմիածնի և Թեհրանի թեմի
միջև:

«Թեհրանի ՀԱՅՈՑ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱ-
ԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏՎԱՐԺԱ-
ՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Սույն թվականի ապրիլի 22-ի երեկոյան
վեհափառ Հայրապետը ստացել և ընթերցել
է ձեր 29 մարտի 1958 թվակիր համար 165/25
նամակը, որով «որդիական պարտք եք հա-
մարումս խոնարհաբար հաղորդելու, որ

Թեհրանի թեմի պատգամավորական ժողո-
վը, 1958 փետրվարի 26-ին գումարված իր
հերթական նիստում, ի նկատի ունենալով
Իրանի նախարարաց խորհրդի 1949 թվա-
կանի հուլիս 21-ի որոշումը «Իրանի փոք-
րամասնությունաց կրոնական պետերի և
պատվիրակների նկատմամբ», ինչպես նաև
«նկատի ունենալով Թեհրանի թեմի համար
ստեղծված խիստ բացառիկ պայմանները
մեր եկեղեցու անվտանգությունը, ինչպես և մի շարք
որոշ մտահոգություններ, ինչպես և մի շարք
այլ հիմունքներ», որոշել է սղադարեցնել Ս.
էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած ձեռ-
կան կապն ևս և խնդրամատույց լինել Մեծի
Տանն Կիլիկիո Ս. Աթոռին՝ Թեհրանի թեմը
առնելու իր հովանու ներքո:

Նորին Ս. Օծությունը ապրիլի 24-ին ձեզ
հղել է հետևյալ հեռագիրը:

«Ապրիլի 22-ին ստացանք ձեր 29 մարտի
նամակը:

Մայր Աթոռ ըի կարող համաձայն լինել
ձեր որոշման: Ոչ ոք իրավասություն չունի
ձայն եկեղեցիների և հավատացյալների հո-
գևոր կապը կտրել Ս. էջմիածնից: Մենք պի-
տի գրենք ձեզ, Մեր խոսքը ուղղելով քե-
մական ժողովիդ և իրանահայ ժողովրդին:

Ի հարկին Մենք պիտի դիմենք նաև Իրանի
քարեխնամ կառավարության:

Մինչ այդ մնացե՛ք խաղաղ և լավատես և
մի՛ կատարե՛ք որևէ ձեռնարկ՝ դիմելու այլ
եկեղեցական կենտրոնի:

Մենք վստահ ենք, թե ամեն դժվարու-
թյուն կհաղթահարվի և Ս. էջմիածինը, իբրև
հոգևոր կենտրոն, իր դարավոր հովանին
կպահպանե Իրանի դրացի և քարեխնամ
պետության մեջ գործող հայ եկեղեցիների
վրա, հարգելով իրանական պետական օ-
րենքներն ու շահերը:

Իրանի հայ թեմերը, ինչպես անցյալում,
դարեր շարունակ կան ու կմնան նաև այ-
սուհեռու Մայր Աթոռ Ս. էջմիածնի հոգևոր
իշխանության ներքև:

Կհաղորդե՛ նամակը:

Լսեցե՛ք էջմիածնի սուրբ ձայնը և ընդու-
նեցե՛ք Աստուծո և Մեր հայրապետական օրհ-
նությունը»:

Թե վերոհիշյալ ձեր գրությունը վեհա-
փառ Հայրապետի սրտի և ապրումների վրա
ինչ ազդեցություն է գործել, այդ մասին
մենք չենք գրում, որովհետև գուցե չկարո-
ղանաք չափել Ամենայն Հայոց Կաթողիկո-
սի վիշտը, այս ահավոր և պատմականո-
րեն աննախընթաց ողբերգության առաջ:

Ներկա գրությամբ կամենում ենք պա-
տասխանել ձեր 29 մարտ 1958 թվակիր
նամակին՝ հանում Մայր Աթոռ Ս. էջմիածնի
Գերագույն Հոգևոր Խորհրդի, Նորին Վե-
հափառություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապե-

տի հավանություն, այն հույսով, որ դուք, ծանոթանալով նրա ընդհանրականությանը, պիտի փառատվեն բոլոր թյուրիմացությունները, պիտի լսվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորը և պիտի վերահաստատվեն դարավոր հոգևոր կապերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Թեհրանի թեմի միջև:

1. Նախ մենք պետք է նկատենք, թե դրժվար է հավատալ, որ իրանահայ հավատացյալ ժողովուրդը, հոգևոր դասը և եկեղեցական-ազգային իշխանությունները կարողանալին նման որոշման հանգեցնել, այսքան անապասելի և անբացատրելի կերպով: Եվ իրոք, այդ երևում է նաև ձեր նամակից, ուր խոսում եք Թեհրանի թեմի համար ստեղծված խիստ բացառիկ պայմանների և մեր եկեղեցու անվտանգությունը կապված որոշ մտահոգություններով մասին: Հետևաբար պետք է եզրակացնել, թե ինչ որ նոր և արտաքին պատճառներ ստեղծել են խիստ բացառիկ և վտանգավոր պայմաններ ձեր եկեղեցական կյանքում: Մնում է մեզ իմանալ և հաստատել, թե որոնք են այդ խիստ բացառիկ ու վտանգավոր պայմանները, որոնց մասին որոշակի կերպով դուք ոչինչ չեք ասում ձեր նամակում:

2. Դուք հիշում եք միայն մի օրինական պարագա, այն է՝ 1949 թվականի Իրանական կառավարության որոշումը Իրանի փոքրամասնությանը կրոնական պետերի նկատմամբ:

Այդ որոշումը ծանոթ է մեզ 18 հունիս 1958 թվականի Թեհրանի հայոց թեմական խորհրդի զեկուցագրից:

Ինչքան մենք հասկանում ենք, այդ որոշումից ընալ չի ըխում որևէ անհաշտ վիճակ կամ տրամադրություն Թեհրանի թեմի՝ Ս. Էջմիածնի հոգևոր հովանավորության սուկ լինելու նկատմամբ: Մնաց որ այն հոգևոր կենտրոնը, որին կամենում եք կապել ձեր թեմը, նույնպես օտար մի պետություն հողամասի վրա է գտնվում, և այն էլ ոչ իսկ դրացի, Ուստի ձեր ակնարկած պետական օրենքի կապակցությամբ իրական կացությունը մնում է նույնը:

Ուրեմն Գերագույն Հոգևոր խորհուրդը չի կարող ընդունել ձեր այդ փաստարկումը իրեն հիմնավորված: Եվ չենք էլ կարող մտածել, թե իրանական մեր դրացի և բարեկամ պետությունը այլ կերպ կմեկնարանի իր 1949 թվականի որոշումը փոքրամասնությանը կրոնապետերի նկատմամբ:

3. Իրանի բարեխնամ կառավարության 1949 թվականի որոշումը Մայր Աթոռի համար ոչ մի անընական որոշում չէ՝ արտասահմանյան մեր մի շարք թեմեր նույնպիսի պետական օրենքների ներքև են գործում երկար տարիներից ի վեր, ինչպես օրինակ

Ռումինիայում և Բուլղարիայում: Նման օրենքներ ընալ երբեք արգելք չեն հանդիսացել և չեն հանդիսանում, որ հիշյալ երկրների հայ եկեղեցիները հոգևոր իմաստով ենթակա լինեն բազմադարյան Ս. Էջմիածնին, որ, ինչպես ամբողջ աշխարհ գիտեն, Գլուխն է Հայ եկեղեցու և կենտրոնը հայոց սուրբ հավատի Դ զարից ի վեր:

4. Մայր Աթոռ հարգել է և հարգում է Իրանի պետական օրենքները և 1949 թվականի որոշումը, և այդ իսկ պատճառով այդ թվականից ի վեր չի առաջարկել որևէ հոգևոր պետ իրանահայ թեմերի համար, միշտ հուսալով, որ հնարավոր կլինի իրանահայության ծոցից հարմար թեմականներ գտնել, ժողովրդի հավանությամբ:

Այս ոգով առաջնորդվելով, Մայր Աթոռ ուրախությամբ հաստատեց, որ Թավրիզի թեմին իրեն առաջնորդական տեղապահ ընտրվեց տեղի վաստակավոր քահանաներից արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանը: Եվ նույն ոգով առաջնորդվելով, անցյալ տարվա փետրվարի 27-ին Վեհափառ Հայրապետը առաջարկեց թեմական խորհրդի, որ նաև Թեհրանի թեմը իրեն առաջնորդ ընտրի թեմից հոգևորականներից արժանապատիվ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանին, որ կարող էր և վարդապետական վեղար ընդունել այդ պաշտոնին կոչվելու առթիվ: Ահա թե ինչ էր գրում ձեզ նորին Ս. Օծուխյունը այդ նամակում:

«... Ահա քե ինչու Մեմբ մտածում եմ լիազորել առաջնորդական տեղապահի պաշտոնում ձեր ճոզևոր ճովիվ աբմանապատիվ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանին, քեմական խորհրդից հավանությամբ, այնպես ինչպես այդ կացությունը կա Թավրիզի բնում, մեղավ, ու մոտ աղագայում ճեղավու լիքի մի վեղեական կարգադրություն տեօրինել, ուրպեսզի Թեհրանի լեմն ունենա իւ վարդապետ կամ եպիսկոպոս առաջնորդ»:

Թեհրանի թեմական խորհրդի 1957 թվականի մարտ 25 թվականի համար 720/320 պատասխանի մեջ ասվում էր. «Ամենայն հաճությամբ ստացանք Ձեր Սրբության 27 փետրվար համար 94 թվականի օրհնարի պրությունը: Ձենք կարող մեր երախտագիտությունը չհայտնել այն բարձր հոգածության համար, որ Ձեր Վեհափառությունը, իր բազմազգաղ վիճակում, հնարավորություն է ունեցել ցույց տալ մեր թեմին»:

Վեհափառ Տեմ, շտապում ենք հայտնել Ձեր Սրբության, որ վերահիշյալ գրությունն իսկույն հղեցինք թեմիս պատգամավորական ժողովին, որի իրավասությունների սահմաններում է գտնվում առաջնորդա-

կան փոխանորդի ընտրության հարցը, համաձայն հոգեւոյս Կաթողիկոս Գևորգ Զ-ի կողմից հաստատված թեմական կանոնադրության և խնդրել, որ ամենակարճ ժամանակաշրջանում հանգամանորեն քննության առնվեն ընտրելիի և ընտրության պարագաները և արդյունքը, առաջին հերթին ներկայացնելով Ձերդ Վեհափառության Գործի ընթացքը հաղորդելով Ձերդ Վեհափառության և մի անգամ ևս ընտրակալություն հայտնելով Ձեր հայրական հոգածության և ուղադրության համար, որդիական խորին հարգանքք մատուցում ենք ի համբույր Ս. Աղույզ, խնդրելով Ձեր հայրական օրհնությունը (ստորագրողներ՝ նախագահ Վահրամ Դավիթխանյան, անգամ քարտուղար Դավիթ Փափազյան)։

Նույն հարցի կապակցությամբ Վեհափառ Հայրապետը ստացավ Թեհրանի թեմի պատգամավորական ժողովի կողմից 15 մայիս 1957 թվակիր պաշտոնագիրը, որտեղ ասվում էր.

«Թեհրանի թեմի պատգամավորական ժողովը, սույն թվականի մայիսի 7-ի իր արտակարգ նիստում, զբաղվեց Ձերդ Վեհափառության 27 փետրվար № 94 օրհնաբեր գրությունով, ուղղված Թեհրանի թեմական խորհրդին։

Պատգամավորական ժողովն իր խորին ընտրակալություններն և երախտագիտական արտահայտությունները արձանագրեց Ձերդ Վեհափառության հոգածության և ուղադրության համար։

Առաջնորդական տեղապահ ունենալու հարցը պատգամավորական ժողովը մանրամասն ու հանգամանորեն քննության առնելուց հետո միաձայնությամբ կայացրեց հետևյալ որոշումը, որ շտապում ենք հայտնել Ձերդ Վեհափառության, նկատի ունենալով, որ թեմիս պատգամավորական ժողովի, թեմական խորհրդի և հասարակական մյուս մարմինների պաշտոնավարության եռամյա շրջանը լրանալու վրա է և շատ մոտ ապագայում նոր ընտրություններ տեղի պիտի ունենան, առաջնորդական տեղապահի ընտրության խնդիրները թողնել նոր ընտրվելիք պատգամավորական ժողովին, պատշաճ տնօրինություն անելու համար։

Որդիական խորին հարգանքք համբուրում ենք Ձերդ Վեհափառության Ս. Աղը։

Դիվան Թեհրանի թեմի պատգամավորական ժողովի նախագահ՝ Պերճ Գրիգորյան, քարտուղար՝ գոկտ. Վ. Նահապետյան։

Ս. էջմիածնի կողմից այս բոլոր առաջարկությունները եղան՝ հարգելու համար իրանի կառավարության որոշումները և իրա-

նահայ եկեղեցական կյանքը համաձայնեցնելու համար տեղական պետական օրենքներին։

5. Մեղ անհասկանալի է թվում ձեր գանգատը, որով հայտնում եք, թե իրանական կառավարության 1949 թվականի որոշման պատճառով, «Թեհրանի թեմի և Ս. էջմիածնի Մայր Աթոռի հարաբերությունները ունեցել են միայն ձևական և անվանական բնույթ»։

Եթե ձեռնական և անվանական բնույթ բառերը գործածում եք կամենալով փասկանալ, որ Ս. էջմիածնի և Թեհրանի թեմի միջև որևէ կապ գոյություն չի ունեցել և թե փաստորեն արգեն իսկ իրաված են պաշտոնական փոխադարձ հոգևոր բարոյական հարաբերությունները, ապա այն դեպքում պետք է նշենք, թե այդ բնավ չի համապատասխանում իրականությանը։

Հիշենք մի քանի կարևոր փաստեր, որոնք ցույց են տալիս, թե իրականության մեջ սերտ կապ և գործակցություն է գոյություն ունեցել վերջին տարիների ընթացքում և՛ Մայր Աթոռի և ձեր թեմի միջև.

ա. Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ընտրությունից ի վեր, այսինքն վերջին երեք տարիների ընթացքում, տասնյակ հեռագրեր և պաշտոնական նամակներ են փոխանակվել Մայր Աթոռի և Թեհրանի թեմական խորհրդի միջև, միշտ թեմական խորհրդի նախագահ մեծարգո տիար Վահրամ Դավիթխանյանի և քարտուղար Արամ համ Ասատրյանի կամ Դավիթ Փափազյանի ստորագրությամբ և պաշտոնական կնիքով, իսկ երբեմն էլ փոխ-նախագահ Արտուշես Բաբալյանի և անդամ քարտուղարներից մեկի ստորագրությամբ։

Այս շրջանին ստացվել են նաև տեղեկագրեր, դեկլարացիաներ Թեհրանի թեմական խորհրդից, Թեհրանի եկեղեցական խորհրդից, թեմական հոգևոր գործակալ արժանապատիվ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանից, Ղազվինի եկեղեցական խորհրդից, բազմաթիվ նամակներ այլ քահանաներից, վիճակագրական տեղեկություններ, լուսանկարներ և այլն։ Մայր Աթոռի հետ նույնպիսի հարաբերություններ ունեցել են նաև Թավրիզի և Սպահանի թեմերը։

Մայր Աթոռում ստացված վերջին տեղեկագիրն է եղել Թեհրանի թեմի հոգևոր գործակալ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանի 28 ապրիլ 1957 թվակիր № 126 տեղեկագիրը՝ Թեհրանի ամբողջ թեմում գործող 22 հայկական եկեղեցիների և հայ հավատացյալ ժողովրդի մասին, որի ընդհանուր թիվն է կազմում 65 450 շունչ, բոլոր ներկայացված մանրամասն ցուցակի։

բ. Ձեր թեմի հոգևոր գործակալ Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանը իր 1 հոկտեմբեր 1957 թվակիր Մ 125 պաշտոնագրով խնդրել էր Սրբալույս Մեռոն ուղարկել Քեհրանի և մյուս թեմերի համար Ընդունաչելով դիմումին, Մայր Աթոռից Սրբալույս Մեռոն ուղարկվեց և հանձնվեց Քեհրանի հոգևոր գործակալին գերաշնորհ Տ. Բաթղեմեայիսկոպոսի ձեռամբ, որ Քեհրանի թեմական խորհրդի նախագահի ցանկությամբ, դեպի Կալիֆոռնիա իր վերադարձին Քեհրանից անցավ, հանձնելու համար Սրբալույս Մեռոնը և բերելու ձեր թեմին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությունը:

գ. Թեմական պատգամավորական ժողովի դիմանի կողմից Մայր Աթոռ է ուղարկվել 1954 թվականի օգոստոս 10 թվակիր Մ 4 պաշտոնագիրը, որով ղեկուցվում էր Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ թեմական պատգամավորական ժողովի գումարման և հուլիսի 3—9 իր ունեցած շրտս նիստերի և օրակարգի հարցերի մասին, ինչպես և երեք տարվա համար նոր ընտրված թեմական խորհրդի մասին՝ րադկացած 11 ազգայիններից:

Այս պաշտոնագիրը ստորագրել են Քեհրանի թեմի ներքոց պատգամավորական ժողովի նախագահ պր. Պետո Գրիգորյանը, փոխ-նախագահ պր. Աշոտ Բարամյանը և քարտուղար դոկտ. Վ. Նահապետյանը:

Նորընտիր թեմական խորհրդի նկատմամբ Մայր Աթոռը ոչ մի առարկություն չի ունեցել և օրինավոր նկատելով առ, գործակցել է սիրով, փոխադարձ սիրալիր հարաբերություններ պահպանելով մինչև օրս:

գ. Կանոնավոր կերպով Մայր Աթոռից Քեհրան են ուղարկվել Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ՝ լիցիաների ամսագիրը և օրացույցներ, որոնց հաշիվները և վճարումները ստացվել են պարբերաբար: Իր լիցիաների ամսագրի պատասխանատու ներկայացուցիչ՝ նշանակվել է Տ. Հովհաննես ավագ քահանա Հաճյանը և այդ պաշտոնի մեջ վերահաստատվել Քեհրանի թեմական խորհրդի 18 մարտ 1957 թվակեր մեզ ուղղված պաշտոնագրով:

ե. Ամուսնական հարցերի կապակցությամբ պաշտոնական թղթակցություն է տեղի ունեցել Մայր Աթոռի և Քեհրանի թեմի միջև, ինչպես, օրինակ, 1955 թվականի դեկտեմբերի 19-ին՝ տիկին Մարգարիտ Վարդանի ապահարզանի կապակցությամբ, 1958 թվականի փետրվարի 6-ին՝ Լուսիկ և Մկրտիչ Սարգսյանի հարցով և այլն:

զ. Ընդհանրաշխույժներ և պարզևատրումներ է կատարել Մայր Աթոռը, իրեն հետևյալ Քեհրանի թեմական խորհրդի միջոցով:

դուրյանց, վերջինը լինելով Քեհրանի թեմական խորհրդի միջնորդությունը՝ 29 սեպտեմբեր 1957 թվակիր Մ 196/361 պաշտոնագրով՝ ազգային քարերար սպամատների Տ. Մարգար Սարգսյանին Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրելու մասին, միջնորդություններ, որոնք սիրով հարգվել են Վեհափառ Հայրապետի կողմից:

է. Մայր Աթոռի և Քեհրանի թեմական խորհրդի հարաբերությունները առնչված են եղել նաև Ս. Էջմիածնի Հոգևոր Ժեմարանի հետ: Հիշենք Քեհրանի թեմական խորհրդի 22 օգոստոս 1957 թվակիր Մ 794/359 պաշտոնագիրը, որով Ս. Էջմիածնի Հոգևոր Ժեմարանի սան ներկայացվում էր Քեհրանահապ հայ պատանի Արամ Մնացականյանը:

Հիշենք նաև Քեհրանի թեմական խորհրդի նախագահ տիար Վահրամ Դավիթխանյանի և Քեհրանարեակ այլ ազգայինների անցյալ տարի ուղարկած նվերները Հոգևոր Ժեմարանի մեր սաների համար:

ը. Մայր Աթոռը, 1957 թվականի հունիսի 2-ին, Քեհրանի թեմական խորհրդին ուղարկել է օրհնված խաչկներ, հավատացյալներին րաժանելու համար, ստանալով թեմական խորհրդի Մ 737/336 պաշտոնագիրը՝ ստորագրությամբ նախագահ տիար Վ. Դավիթխանյանի և քարտուղար պր. Արահամ Ասատրյանի, որի մեջ գրված է. «Թեմական խորհուրդս իր հարգալի շնորհակալություն է հայտնում Ձերզ Վեհափառության, հայրական րաժար ուղարկության համար: Հիշյալ խաչերը լրաժանեցինք հավատացյալներին, որը հոգեկան սպիտակեց և մեծ րավականություն պատճառեց նրանց»:

թ. 1957 թվականի օգոստոսի 25-ին Քեհրանի թեմական խորհուրդը խոնարհաբար խնդրում էր Վեհափառ Հայրապետից՝ միջնորդել Կյուպենկյան հիմնարկության ներկայացուցիչների մոտ և հորդորել նրանց, որ Ս. Էջմիածնից վերադառնալիս անցնեն Իրանից, իրանահայ մշակութային կարիքների կապակցությամբ: Ընդառաջելով եղած դիմումին, մեր սիրելի Վեհափառ Հայրապետը ջերմությամբ է խոսել հարգելի ներկայացուցիչներին, խնդրելով, որ ընթացք տան իրանահայության հրավերին, և այդ մասին անմիջապես հեռագրել է Քեհրանի թեմական խորհրդին, 1957 թվականի օգոստոսի 26-ին:

Ահա տվյալներ և փաստեր, որոնք խոսում են հստակ և ստույգ կերպով այն մասին, թե նաև 1949 թվականի ձեր հիշատակած կառավարական որոշումից հետո մինչև մեր օրերը, Մայր Աթոռի և Քեհրանի թեմի միջև հարաբերությունները և կապերը եղել են սերտ, հարատև և արդյունավետ՝ փոխադարձ

սիրո և հարգանքի ու հոգևոր միախառնության պայմաններում:

6. Ձեր գրության մեջ ավելացնում եք նաև՝ «Ինչպես մի շարք այլ հիմունքներ» բացատրությունը, առանց որոշակի կերպով ասելու, թե որո՞նք են այդ «այլ հիմունքներ»-ը, որ պատճառ են հանդիսանում ձեր որոշման:

«Այդքան թերթի մարտ 6-ի համարում, սակայն, կարդացի՞ք մի հաղորդագրություն ձեր թեմի սեպտեմբեր 26-ի թեմական պատգամավորական ժողովի հինգերորդ նիստի և Ս. էջմիածնից ձեր թեմը բաժանելու որոշման մասին, որ լույս է սփռում ձեր այդ հիշած «մի շարք այլ հիմունքներ» անորոշ խոսքերի վրա:

Այդ հաղորդագրության մեջ հիշված են ութ կետեր, իբրև «հիմունք» Ս. էջմիածնից բաժանման:

Ա, Բ, Ե և Ը կետերը վերաբերում են Իրանական կառավարության 1949 թվականի որոշման և Ս. էջմիածնի ու ձեր թեմի իբրև թե՛ «անվանական» և ձևական կապ-ի և այդ օրինական պայմանից բխած կացության: Այդ շորս կետերին մենք վերևում անդրադարձանք արդեն, ցույց տալով, որ՝

ա. Իրանական պետական այդ օրենքից մենք որևէ դժգոհություն չունենք և ոչինչ չենք գտնում մեղադրելի:

բ. Մայր Աթոռը հարգել է այդ օրենքը և երբեք չի փորձել այն խախտել:

գ. Այդ օրենքը քնալ պատճառ չի եղել, որ Ս. էջմիածնի հոգևոր հեղինակությունը պահպանվի ձեր թեմի վրա, և որ սերտ կապ և հարաբերություն լինի մեր միջև, ինչպես ցույց տվինք վերև հիշատակված փաստաթղթերով:

դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հարգելով այդ օրենքը, անցյալ տարի առաջարկել է ձեզ իբրև առաջնորդ իրանահայատակ և թեհրանաքնակ մի հոգևորականի:

7. Հաղորդագրության մեջ հիշված երրորդ կետում նշված պարագան մեզ հայտնի չէ իր մանրամասնությանց մեջ և չգիտենք, թե ինչ ձևով և ինչ պայմանների տակ, սրանից 7—8 տարի առաջ, հանգուցյալ Ս. Տ. Գևորգ Զ Հայրապետը, Մայր Աթոռում ստացված բողոքների հիման վրա, Թեհրան է գործուղել Ատրպատականի առաջնորդական տեղապահին, քննելու համար կատարված ընտրությունները, եվ ինչքան ծանոթ է մեզ՝ Մայր Աթոռը ոչ այդ առթիվ և ոչ էլ ուրիշ առթիվ որևէ լուծարիչ որոշում չի հրապարակել: ու չի գործադրել:

Իսկ հաջորդ թեմական ընտրությունը, կատարված 1959 թվականին, ինչպես հիշեցինք վերև, որևէ տարակարծությանց տեղի չի

տվել և տևական կերպով հարաբերությունները շարունակվել են, քնականոն և ավան-ները շարունակվել մեջ, Ուստի և Դ կեդական պայմանների մեջ, Ուստի և Դ կետում հիշված պարագան ամբողջովին չի համապատասխանում իրականության:

8. Ե կետում հիշատակված պարագան՝ 1956 թվականի աշնան Տ. Հմայակ վարդապետ Խնդոյանի իբրև Հայրապետական պատվիրակ գալն է Թեհրան, Բայց թե ինչու՞ այդ պարզ և մի քանի օր տևող այցելությունը երկու տարի հետո «հիմունք» պիտի ծառայի Ս. էջմիածնից բաժանվելու, անհասկանալի է մնում:

Երուսաղեմի միաբաններից, ամերիկյան քաղաքացի, Հմայակ վարդապետին Մայր Աթոռը հանձնարարել էր այցելել պարսկահայ թեմերը, իբրև գլխավոր նպատակ ունենալով տեղում ուսումնասիրել ձեր թեմը և այն առաջնորդով օժտելու պայմանները, ձեզ հետ խորհրդակցաբար:

Խնդոյան վարդապետը, ձեզ շատ ծանոթ պատճառներով, չկարողացավ իր պարտականությունը կատարել և նույնիսկ հայոց եկեղեցում չկարողացավ ներկա լինել սրբազան արարողությանց, ու մի քանի օրից ստիպված եղավ մեկնել ձեր երկրից:

Մենք այս բոլորը շատ անբնական գտանք և 1956 թվականի մայիս 1-ի հեռագրով վեհափառ Հայրապետը դիմեց Թեհրանի թեմական խորհրդի, որ 1 հունիս Մ 635/237 և 18 հունիս Մ 645/245 ընդարձակ բացատրագրերով պարզեց առն պայմանները, որոնք ստիպել էին Հմայակ վարդապետին մեկնել Թեհրանից, առանց հեռավոր կերպով իսկ նշելու, թե այդ պարագան որևէ շահով ազդել էր կամ կարող էր ազդել Մայր Աթոռի և Թեհրանի թեմի փոխհարաբերությանց վրա: Ընդհակառակը, այդ գրությունը ոչ միայն հարգելի էր, այլև հազեցված էր հավատարմության և որդիական սիրո արտահայտություններով:

Մայր Աթոռը, ծանոթանալով Թեհրանի թեմի վերոհիշյալ բացատրագրերին, չներկայացրեց որևէ առարկություն և այնուհետև ևս մեր հարաբերությունները ընթացան իրենց քնականոն հոգով:

9. Ինչ վերաբերում է Զ կետին, ստիպված ենք հաստատել, թե այն նույնպես չի համապատասխանում իրականությանը, Ս. Բարգեն վարդապետ Վարժապետյանը, ընտրված լինելով Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ, Բեյրութից Ս. էջմիածին ժամանեց, պարզապես իբրև ճամբորդ անցնելով Թեհրանից, նա ոչ մի պաշտոնական հանդիպում չի ունեցել, ոչ իսկ հայոց եկեղեցի է այցելել, չունենալով վեհափառ Հայրապետի կողմից ոչ մի հանձնարարություն, Մայր Աթոռը նույնիսկ չէր

իմանում, թե Բաբգեն վարդապետը ինչ ճանապարհով է գալու Ս. էջմիածին, նա Թեհրանում մնացել է մեկ-երկու օր միայն, այդ առթիվ բարեկամական հանդիպում էր ունեցել թեմական խորհրդի նախագահ պր. Վ. Իսվիթխանյանի հետ, և այս վերջինը ու մի քանի այլ ազգայիններ, առիթից օգտվելով, նվերներ էին ուղարկել Ս. էջմիածնի Մայր Տաճարի և Հոգևոր Զեմարանի մեր ուսանողներին համար, նվ թեմական խորհրդի հարգարժան նախագահը ինքը խնդրել էր Բաբգեն վարդապետից, որ եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, զեպի Կալիֆոռնիա իր վերադարձին, ցանար Պարսկաստանի վրայում անցնել, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունները բերելու համար հավատացյալ ժողովրդին, նվ իրոք, Բաբգեն սրբազան հարգեց իր խոստումը և վերադարձավ Թեհրանի վրայով, Սակայն նորին Սրբազնությունը, հակառակ թեմական խորհրդի նախագահի ցանկության, չկարողացավ Ս. էջմիածնի օրհնությունը տալ ժողովրդին, որովհետև թեմական խորհրդի որոշ անդամներ փոթորիկ էին բարձրացրել թեմական խորհրդի՝ այդ հարցին նվիրված նիստում, չհանդուրժելով Բաբգեն եպիսկոպոսի ներկայությունը Թեհրանի հայոց եկեղեցում, նվ այդ փոթորկալից նիստից հետո, նախագահ պր. Դավիթխանյանը, ինք ևս դառնացած, հայտնեց իր Բաբգեն սրբազանին թեմական խորհրդի որոշումը (իբրև միջին ճանապարհ), այն է՝ Բաբգեն եպիսկոպոս կարող է եկեղեցում ներկա լինել սուրբ պատարագին, սակայն առանց խոսք առնելու:

Բաբգեն սրբազանը, արցունքը աչքերին, հեռացել էր Թեհրանից՝ առանց կիրակի որվան սպասելու:

Ահա մեր խոսքը իբրև պատասխան ձեր 29 մարտ 1958 թվակիր նամակին և մարտի 6-ին հրապարակված հաղորդագրության: Խորհում ենք, թե ճշմարտությունը և արդարությունը արևի լույսի նման պարզ են և թեմական պատգամավորական ժողովը որևէ իրավացի հիմունք չի ունեցել և չէր կարող ունենալ՝ տալու համար իր սորոշումը, որ ազգային-եկեղեցական մի դժբախտություն է, հոգևոր-բարոյական մի աղետ:

Պարսկահայությունը, Հայ աշխարհի կողմից պոկված այս հարազատ ժողովուրդը, ինչպես կարելի է բաժանել իր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. էջմիածնից:

Ո՛վ տվեց այս դժբախտ որոշումը, հարցրի՞ք արդյոք ժողովրդին:

Զե՛ք զգուշ, սիրելիք Մեր, որ լաց է լինում հայ ժողովրդի սիրտը, և որ բողոքում են նոր-Ջուղայում հանգրվող Ս. էջմիածնի բարերը:

Զէ. չեն կարող ճիշտ լինել ոչ ձեր նամակը և ոչ էլ ձեր հաղորդագրությունը: Այդ գրության ներքև լի ստորագրել և չէր կարող ստորագրել ոչ Իրանի մեր պատվական և հարազատ ժողովուրդը և ոչ էլ հայ հոգի կրող թեմական պատգամավորական մի ժողով:

Հանուն սորին վեհափառություն Տ. Տ. վազգեն Ա Կաթողիկոսին Ամենայն Հայոց, Գերագույն Հոգևոր Խորհուրդս հայտարարում է.

ա. Իրանի մեր երեք թեմերը, այդ թվում նաև Թեհրանի թեմը, իրենց եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով եղել են, կան ու կմնան Մայր Աթոռ Ս. էջմիածնի հոգևոր իշխանության ներքև:

բ. Ազգային-եկեղեցական որևէ մարմին իրավասություն չունի Հայաստանյայց եկեղեցիներն ու հավատացյալները բաժանելու իրենց դարավոր մայր կենտրոն Ս. էջմիածնից:

գ. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ուրիշ Գլուխ չունի բացի Ս. էջմիածնի Լեւոնյանական Հայրապետ Ամենայն Հայոց Կաթողիկոսից, Հայկական այլ եկեղեցական կենտրոններ, ինչպիսիք են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական կամ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռները, անդամներ են Հայ Եկեղեցու մարմնի և միակ Գլուխ Ս. էջմիածնի, և բոլորն էլ ի հոգևորս ենթակա են Մայր Աթոռին: Հետևաբար ոչ կանոնական-իրավական տեսակետից և ոչ էլ մեր սուրբ ավանդությանց և պատմական իրավասությանց լույսի տակ, հնարավոր չէ Ս. էջմիածնից բաժանվել և այլ եկեղեցական կենտրոնի կապվել: Ընթերցանահայ եկեղեցիներն ու ժողովուրդը Հայաստանյայց Եկեղեցու մեջ են գտնվում, ապա ուրեմն նրանք կարող են ունենալ միմիայն հոգևոր մի վերին կենտրոն, այն է ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. էջմիածնից, հիմնված 301 թվականին Հայ Եկեղեցու ծնունդով:

դ. Հետևաբար, կոչ ենք անում ձեզ, թեմական պատգամավորական ժողովիդ անդամներին և համայն հայ հավատացյալ ժողովրդին՝ թյուրիմացությանց արդյունք նկատելի պատգամավորական վերջին ժողովի՝ Մայր Աթոռից բաժանվելու որոշումը, հետս կոչել այն ու շարունակել հավատարիմ մնալ և հոգեպես հպատակ՝ հայոց հավատի սյուն աստվածակառույց Ս. էջմիածնին:

ա. Առաջարկում ենք Թեհրանի թեմական պատգամավորական ժողովին՝ ընտրել թեմական առաջնորդ՝ Հայաստանյայց Եկեղեցու Ս. էջմիածնի հավատարիմ հոգևորականների շարքերից, համաձայն իրանական պետական օրենքների և ձեր թեմական կանոնադրության տրամադրություններին:

Ս. Էջմիածնից ընդունեցեք նորին վեհափառության հայրապետական օրհնությունը և մեր լավագույն բարեմաղթությունները՝ ձեր քաջառողջության ու ձեր եկեղեցական կյանքի խաղաղության համար:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ
Առեմապետ՝
ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

2 մայիսի 1958 թ.
Ս. Էջմիածին:

1958 թվականի ապրիլ 23 թվակիր գրությանը, Անթիլիասի աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոսը փորձում էր իր հովանու տակ առնել Թեհրանի տիրախնամ թեմը:

«Հարգարժան դիմանք
Թեհրանի թեմի պատգամավորական ժողովի և թեմական հորհրդի

Թեհրան

Ստացած ենք ձեր 30 մարտ թվակիր և համար 161/21 պաշտոնագիրը, որով մեզի կհաղորդեիք պատկան պատգամավորական ժողովիդ որոշումը Ս. Էջմիածնի հետ թեմիդ անվանական և ձևական կապի և խզելու և խնդրամատույց լինելու մեզի, որպեսզի թեմդ առնենք մեր հովանիին տակ:

Ձեր դիմումագիրը արժանի ուշադրությանը կարդալի և համապատասխան ժողովի հետ խոր քննության ենթարկելի հետո, ու առաջնորդված Հայաստանյայց ժողովուրդի հիմնական շահերու պահպանման սկզբունքով, այսու պաշտոնագրով ձեր տիրախնամ թեմը կառնենք մեր Աթոռի հովանիին տակ: Մոտ ապագային, այս մասին կոնգակ կպատրաստենք ու կդրկենք մասնավորաբար նշանակվելիք նվիրակի հետ:

Մինչ այդ ձեզի և ձեր միջոցով թեմիդ մեր պատվական դավաններուդ կդրկենք մեր սիրո աղբյուրներն ու հայրապետական օրհնությունները:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցի ընդ ամենեսանդ, ամէնչա:

(«Հասկ», № 4, ապրիլ, 1958 թ., էջ 187):

Հունիս 12 թվակիր պաշտոնական հաղորդագրության մեջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը, դատապարտելով Անթիլիասի այս նոր սահմանազանում, հայտարարում էր:

«Մայր Աթոռը սրտի անհուն վշտով տեղեկացավ, որ Կիլիկիո Կաթողիկոսության անունով գործող հերձվածող Անթիլիասի աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասյանը 23 ապրիլ, 1958 թվակիր որոշումով փորձում

է իր հովանու ներքո առնել Ամենայն Հայոց Հայրապետության Թեհրանի թեմը:

Շատ տխուր է մի անգամ ևս արձանագրել, որ Անթիլիասի աթոռակալը հայտնի ու ծածուկ բոլոր միջոցներով, դավադիր ուժերի անխիղճ թելադրությանց ներքև, հափշտակիլ ոտնձգություններ է կատարում, կամենալով անջատել Սփյուռքի մեր եկեղեցիները և ժողովուրդը իրենց Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնից և այսպիսով ծրագրված ձեռնքանդել Հայաստանյայց եկեղեցվո հազարամյա հիմքերը:

Հերձվածող Անթիլիասի այս նոր հափշտակության փորձի առթիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը հայտարարում է ի գիտություն Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու նվիրապետական Աթոռներին, առաջնորդություններին, հոգևոր պաշտոնյաներին, ազգային-եկեղեցական իշխանություններին և համայն հայ հավատացյալ ժողովրդին, որ՝

1. Թեհրանի հայրապետական բազմադարյան թեմը հափշտակելու փորձի մեջ, մի անգամ ևս դատապարտվում են՝ Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի 20 դեկտեմբեր 1957 թվականի սրբատառ կոնդակով արդեն իսկ դատապարտված Անթիլիասի ապօրինի աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասյանը և նրա գործակիցները՝ իրենց այս նոր արարքի համար:

2. Թեհրանի թեմական պատգամավորական ժողովի 1958 թվականի փետրվար 26-ի, ինչպես նաև Տ. Զարեհ եպիսկոպոսի 1958 թվականի ապրիլ 23-ի որոշումները հակաօրինական են և հակառակ՝ Թեհրանի թեմի հավատացյալ ժողովրդի կամքին և հոգևոր-ազգային շահերին:

3. Մայր Աթոռը այդ որոշումները նկատում է շեղյալ իրանի հայրապետական երեք թեմերը, այդ թվում նաև Թեհրանի թեմը իր եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքո:

Կանոնական-իրավական տեսակետից և մեր սուրբ ավանդությունների և պատմական իրավասությանց լույսի տակ, հնարավոր չէ Ս. Էջմիածնից բաժանվել և կապվել այլ եկեղեցական կենտրոնիս (ս. Էջմիածին, 1958 թ. հունիս, էջ 17):

Վեհափառ Հայրապետին ուղղված հունիս 24 թվակիր նամակով և նման անհիմն չքմեղանքներով, Առաքապետական հայոց թեմական Խորհուրդը ևս փորձում էր թեմը բաժանել Մայր Աթոռից և այն ենթարկել Անթիլիասի սուրբ հովանուս, թեմական

պատգամավորական ժողովների հուլիս 12 թվականի որոշումով:

«Ամենայն Հայոց Կաթողիկոս
Նորի՛ն Ս. Օծուխյան Տ. Տ. ՎԱԶԳՆՆ Ա
Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր.

Այսու պարտք ենք համարում խոնարհաբար հաղորդելու Ձերդ Վեհափառության, որ թեմիս պատգամավորական ժողովը և թեմական խորհուրդը, իրենց սույն թվի հուլիս 12-ի միացյալ լիազումար նիստում, հոգևոր դասի զգալի պակասը և այդ լրացնելու ուղղությամբ թեմական խորհրդի Ս. Էջմիածնի միջոցով Ս. Նրուսահեմում տարած աշխատանքների ապարդյուն մնալու դրությունը ու ստեղծված բացառիկ պայմանները, որով թեմիս եկեղեցիները անշքանում են և ժողովրդի կրոնական ու հոգևոր կարիքները չեն բավարարվում, ուստի ելնելով այս կացությունից, ժողովը միաձայնությամբ որոշեց դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ իր ձևական կապը և թեմը ղեկել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռի հովանու ներքո, որով ներկա ստեղծված բացառիկ պայմաններում հնարավոր կլինի վերականգնել և բարելավել ստեղծված անմխիթար վիճակը:

Ներփակ ուղարկում ենք Ձերդ Վեհափառության Մեծի Տանն Կիլիկիո Նորին Ս. Օծություն Տ. Տ. Զարեհ Ա կաթողիկոսին ուղղված մեր դիմումագրի պատճենը:

Որդիական խոնարհությամբ մատչիմք և համբույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն:

Հարգանքներով՝

Ատրպատականի հայոց թեմական Խորհրդի
Ատենապետ՝ ՀԱՅԿ ՍՏՈՓԱՆՅԱՆ
Քարտուղար՝ ՎԱՐԳԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

24 հուլիսի 1968 թ.

Թավրիզ

№ 2883:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, իր վիշտը արձանագրելով այդ տխուր առթիվ, Ատրպատականի թեմական խորհրդին ուղղված իր սեպտեմբեր 1 թվականի նամակով գրում էր.

«Ատրպատականի հայոց պատվարժան թեմական խորհրդին և թեմական պատգամավորական ժողովին

Թավրիզ

Մեծարգո տիարք.

Ստացանք թեմական խորհրդիդ սույն թվականի հուլիս 24-ի գրությունը, ուղղված Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսին, ինչպես և Անթիլիասի Աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայաս-

յանին ուղղված դիմումագրի պատճենը: Գրում եք, թե թեմական պատգամավորական ժողովը իր հուլիս 12-ի նիստում որոշել է ռադարեցնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ ունեցած իր ձևական կապը և թեմը ղեկել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռի հովանու ներքո:

Մայր Աթոռի համար որքան ծանր էր ու վշտալի Թեհրանի թեմի նույնանման փորձը, իբրև եկեղեցաքանդ ծրագրի իրագործման առաջին քայլ, նույնքան անհիմն ու ցավալի է Ատրպատականի պարագան:

Նորին Վեհափառություն Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի և Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից, այսու լիազորված ենք ձեր նամակի առթիվ հայտարարելու ի գիտություն թեմական խորհրդիդ, թեմական պատգամավորական ժողովիդ և Ատրպատականի համայն հայ հավատացյալ ժողովրդին հետևյալը.

1. Միանգամայն անհիմն ու ոչ ճշմարիտ է այն հայտարարությունը, թե Ատրպատականի թեմի և Մայր Աթոռի միջև սոսկ ձևական կապ է եղել, Վերջին նրեք տարում մեր և Ատրպատականի թեմի միջև կապը եղել է սերտ և քնակաճան: Այդ մասին կարող է վկայել առաջնորդական փոխանորդ արժանապատիվ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանը, որի հետ Մայր Աթոռս միշտ էլ պահպանել է կանոնավոր հարաբերություն: Ատրպատականի թեմի և Մայր Աթոռի փոխհարաբերությունները ներկայիս զրեթե նույնն են, ինչ որ անցյալ որեք ժամանակաշրջանում: Եվ նույնքան և նույնպիսի փաստական ապացույցներ կարող ենք բերել այդ ուղղությամբ, ինչպիսի հիմնավորված փաստական ապացույցներ նշեցինք Թեհրանի թեմի պարագային մեր սույն թվականի մայիս 2 թվականի պաշտոնագրով:

2. Իբրև հիմնական միջոց թեմի եկեղեցական գործերի վճռական բարելավման, Մայր Աթոռը բազմիցս առաջարկել է Ատրպատականի թեմական խորհրդին՝ լուծել թեմակալ առաջնորդի հարցը՝ Իրանի կառավարության 1949 թվականի որոշման ոգով, իր կողմից խոստանալով ամեն աջակցություն այդ հարցում, սակայն թեմական խորհուրդը միշտ անտարբեր է մնացել:

3. Մայր Աթոռը հակադրական և շեղյալ է համարում Ատրպատականի թեմական պատգամավորական ժողովի հուլիս 12-ի որոշումը, որը հակառակ է Ատրպատականի հավատացյալ ժողովրդի և հոգևորականության կամքին ու հոգևոր-ազգային շահերին:

4. Իրանի Հայրապետական երեք թեմերն էլ, այդ թվում նաև Ատրպատականի թեմը,

իր եկեղեցիներով ու հավատացյալ ժողովրդով, եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր իշխանության ներքո և կանոնական-իրավական, մեր ազգային ավանդությունների ու պատմական իրավասությունների տեսանկյունից ոչ մի մարմին իրավունք չունի Հայաստանյայց եկեղեցիներն ու հավատացյալները բաժանելու իրենց դարավոր Մայր Կենտրոն Ս. Էջմիածնից:

Ելնելով այս ամենից և թելադրված Ազգի ու մեր Ս. Եկեղեցու շահերից, այսու Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից դիմում ենք պատվարժան թեմական խորհրդի և ձեր միջոցով թեմի պատգամավորական ժողովին՝ հետ առնել Մայր Աթոռից բաժանվելու հակաօրինական, անթույլատրելի և անտեղի որոշումը և շարունակել ավանդական հարաբերությունները, որոնք մինչև այժմ գոյություն են ունեցել Մայր Աթոռի և Ատրպատականի թեմական իշխանությունների ու եկեղեցիների միջև դարեր շարունակ, փրանական պետությունների արյացակամ հովանու ներքև:

Հաճեցեք ընդունել նորին Վեհափառության Հայրապետական օրհնությունը և լավագույն լարեմադթությունները ձեր բոլորիդ քաջաւողջության և թեմական գործոց հաջողության համար:

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատեմապետ ԳերԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

1 ապրիլի 1958 թ.

Ս. Էջմիածնի:

Վեհափառ Հայրապետին ուղղված իր 1958 թվականի հոկտեմբեր 28 թվակիր հետևյալ նամակով, այս անգամ էլ Նոր-Ջուղայի և Իսպահանի թեմական խորհուրդը փորձում էր աստեղծված քաջառիկ պայմանների հետևանքով դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած իր ավանդական և ձեռնարկյալ կապը: Շատ հատկանշական է այն, որ ամեն տեղ, իրենք են ստեղծում այսպես կոչված այդ քաջառիկ պայմանները արհեստականորեն և հետո դրանց վրա հենված, փորձում են մեր եկեղեցիները բաժանել Մայր Աթոռից:

«ՆՈՐԻՆ Ս. ՕՍՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՎԵՀԱՓԱՐԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Ի Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վեհափառ Տեր.

Այսու որդիական պարտք ենք համարում Ձերդ Վեհափառության խոնարհաբար հաղորդելու, որ Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի պատգամավորական ժողովը, գումարված տարվույս հոկտեմբերի 26-ին, իր

հերթական և լիակատար նիստում, թեմա-թեմական առաջնորդով օժտելու առնչությամբ, քննության առնելով թեմիս և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի փոխհարաբերությունները գտավ, որ 1949 թվականից ի վեր իրանահայ թեմերի համար ստեղծված քաջառիկ պայմանների հետևանքով, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Իրանա-Հնդկաստանի թեմի հարաբերությունները ունեցել են միայն անվանական բնույթ: Միաժամանակ ի նկատի առնելով կենսական նշանակություն ունեցող և անհրաժեշտություն ներկայացնող մի շարք այլ պատճառներ, հիմնավորված պատգամավորական ժողովի բանաձևի մեջ, որոշեց դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած իր անվանական և ձեռնարկյալ կապը ևս, և խնդրամատույց լինել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռին՝ իր հովանու տակ առնել Իրանա-Հնդկաստանի թեմը:

Մատչելով ի համարույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն, մնամք խորին հարգանքը

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Նախագահ՝ ԶԱՆԻ ՊԱՐԹԵՎ

Փոխ-Նախագահ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Քարտուղար՝ ԵՍԱԳՐԱՆՍՈՒՐՅԱՆ

Նոր-Ջուղա,

28 հոկտեմբերի 1958 թ.:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Սպահանի հայոց թեմական խորհրդին գրած իր դեկտեմբեր 27 թվակիր նամակով, մի անգամ ևս քննության առնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թեմերը հափշտակելու առթիվ առաջ քաշված անհիմն և ապօրինի որոշումներն ու բանաձևերը, գրում էր հետևյալը.

«ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Ապառան, Իրան

Մեծահարգ տիարք.

Նորին Ս. Օճուխյուն Տ. Տ. Վաղգեն Ա Սրբազնազույն Կաթողիկոսի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից լիազորված ենք ձեր սույն թվականի հոկտեմբեր 28-ի գրության առթիվ հայտարարելու հետևյալը, ի գիտություն թեմական խորհրդիդ և Սպահանի թեմի համայն հավատացյալ ժողովրդի.

ա. Թեմիդ պատգամավորական ժողովի կողմից՝ Ս. Էջմիածնից անջատվելու վերաբերյալ ընդունված որոշումը անհիմն է և ապօրինի, իսկ բերված փաստաթղթերը՝

կենդանի և շինծու Պատգամավորական ժողովրդի արտահայտում Սպահանի թեմի հայ բարեպաշտ հավատացյալ ժողովրդի կամքը, Այդ ժողովուրդը դարձրեց շարունակ կապված է եղել իր հավատի կենտրոնն Ս. Էջմիածնի հետ՝ անկախ հասարակական-քաղաքական պայմանների և իրադրությունների, և շարունակում է մնալ այդպիսին, Ոչ ոք իրավունք չունի մեր ժողովրդի սրտից պոկելու դեպի Ս. Էջմիածինը տածած հավատքն ու անսահման սերը:

Թեմական պատգամավորական ժողովի տված որոշումը մի մասնիկն է եկեղեցաքանդ այն ահապար ծրագրի, որը փորձում են գործադրել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահերի թշնամի, մեր ժողովրդի հոգևոր-քարոշական միասնությունը քանդող մի խումբ անհեռատես, ուղեկորույս մարդիկ, թելադրված զուտ կուսակցական մոթն պատակներին:

բ. Մայր Աթոռի և Սպահանի թեմի միջև գոյություն են ունեցել ոչ թե ձևական ու անվանական, այլ բնականորեն փոխհարաբերություններ, ինչպես անցյալ որևէ ժամանակաշրջանում: Վերջին 3—4 տարվա ընթացքում Մայր Աթոռը մահն ջանք է դրել՝ լուծելու թեմական առաջնորդի հարցը և բարելավելու թեմական խորհրդի գործունեությունը, հենց իրանի կառավարության 1949 թվականի որոշման ոգով, սակայն միշտ էլ հանդիպել է թեմի ազգային-եկեղեցական մարմինների քար անտարբերության և լուծության:

գ. Ելնելով վերահիշյալից Մայր Աթոռը հակակառնական և շեղյալ է համարում թեմի պատգամավորական ժողովի որոշումը, Ս. Էջմիածնից բաժանվելու և Անթիլիասին միանալու վերաբերյալ, որոշում, որը միանգամայն հակառակ է իրանահայության կամքին ու հոգևոր-ազգային շահերին:

դ. Իրանի Հայրապետական թեմերը, այդ թվում նաև Սպահանի թեմը եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև և կանոնական-իրավական տեսակետից ոչ մի մարմին իրավունք չունի Հայաստանյայց Եկեղեցին ու նրա հավատացյալները բաժանելու իրենց դարավոր նվիրական կենտրոնից՝ Ս. Էջմիածնից:

Աղստահար՝

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատենապետ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ:

Այստեղ մի պահ երկու խոսքով ուզում ենք անդրադառնալ 1956 թվականի մարտին Անթիլիասում անհետացած Աջերին և մասունք-

ներին, Այդ հարցին «Հասկա»-ը (1959 թ. նոյեմբ., էջ 429—440) երկար էլքեր է նվիրել, լմոռանալով միաժամանակ մեղադրել Մայր Աթոռը, որ լուր մնաց, լղատապարտեց «աջագործություն»-ը, 1957 թվականի հուլիսի 27-ին այդ հարցի մասին հրատարակվեց պաշտոնական հաղորդագրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանի կողմից, ուր ասվում է հետևյալը.

«Վերջերս ստացված արտասահմանյան թերթերից Մայր Աթոռը խոր վշտով տեղեկացավ, որ Կիրիկյան Աթոռի Ս. Աջերի հանձնումը գերաշնորհ Ս. Նորեն սրբազանին, մամուլի որոշ օրգաններ օգտագործել են՝ փորձելով արտառուց մեկնություններով դիմադրել վարկաբեկել Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետությունը, այդ սուրբ մասունքների հանձնման հետ կապելով Վեհափառ Հայրապետի վճիռը, ի մասին Ս. Եղիշե եպիսկոպոսի:

Հանուն ճշմարտության, Մայր Աթոռի դիվանը լիազորված է հայտարարելու՝

ա. Նորին Ս. Օծություն Ս. Ս. Վազգեն Ա սուրբ աշերի անհետացման առաջին վայրկյանից և մինչև նրանց հանձնումը որևէ աթոռի և որևէ ձևով ոչ մի նշանակություն չի բնծայել այդ արարքին և Անթիլիասի հանդեպ իր վերապահումների և դիտողությունների բանաձևումի մեջ որևէ կերպով չի օգտագործել սուրբ մասունքների Անթիլիասից բացակա լինելու պարագան:

բ. Երբ Փարիզում «Հառաջ» թերթի կողմից պր. Հ. Սամվել այդ մասին հարցում էր արել 4 ապրիլ 1956 թվականին, Վեհափառ Հայրապետը պատասխանել էր. «Մեզ համար անիմաստ և նշանակութենեզուրկ արարք մըն է այդ և արդյունք ժամանակավորեպ մտայնությունը»: Պր. Հ. Սամվելի երկրորդ հարցումին Նորին Սրբությունը պատասխանել էր՝ «Սուրբ Աջերի օգտագործումը անհրաժեշտ չէ կաթողիկոսական օծումի համար»:

գ. Բոլորովին անհիմն է Սուրբ Աջերի Անթիլիաս հանձնումը կապել Ս. Եղիշե եպիսկոպոսի նկատմամբ Վեհափառ Հայրապետի վճռի հետ, նկատի ունենալով, որ Նորին Ս. Օծությունը սկսած 4 նոյեմբեր 1956 թվականից իր վերաբերմունքը հստակ կերպով ճշտել է Տերությունյան սրբազանի հանդեպ բազմաթիվ նամակներով և հեռագրերով՝ ուղղված Նորսահղեմի Ս. Աթոռին, ամենապատիվ Ս. Գարեգին և Ս. Տիրան պատրիարքներին և իրեն Ս. Եղիշե եպիսկոպոսին:

դ. Կախակայման և փիլոնաղրկման վճիռը, և նույնիսկ ավելին, թղթակցությունն առարկա է եղել Վեհափառ Հայրապետի և

Գարեգին պատրիարքի միջև՝ 1956 թվականի դեկտեմբեր և 1957 թվականի հունվար-փետրվար ամիսներին ընթացքում:

Ե. Վեհափառ Հայրապետը վերջնագիր հեռագիր է հղել Ս. Նղիշին եպիսկոպոսին 10 փետրվար 1957 թվականին, Մերժում է ստացել 12 փետրվարին: Փետրվարի 13-ին Մայր Աթոռը հեռագրել է Ս. Գարեգին պատրիարքին՝ առաջարկելով՝ որ Երուսաղեմի Միաբանական ժողովը շտապի իր վերջնական որոշումը՝ տալ Նղիշին եպիսկոպոսի նկատմամբ: Փետրվարի 15-ին, Ս. Գարեգին պատրիարքը հեռագրել է Մայր Աթոռին, որ Հայրապետական թեմազորանքը հաղորդած է Երուսաղեմի Ս. Աթոռին: Մարտի 5-ին, Ս. Հակոբյանց Միաբանական ընդհանուր ժողովը որոշել է Նղիշին եպիսկոպոսի արտաքսումը միաբանության շարքերից: Այդ որոշման հաղորդման պաշտոնագիրը Մայր Աթոռ է ստացվել մարտի 24-ին: Գերագույն Հոգևոր հորհուրդը նիստ է ղումարել ապրիլի 12-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, որտեղ և տրված է ծանոթ վճիռը Նղիշին եպիսկոպոսի կախակայման և փիլոնալըկման մասին:

Կատարելով այս ճշտումները, Մայր Աթոռը սպասում է, որ Միջուղի հայ մամուլի որոշ օրգաններ հանգես կրեքեն ավելի լրջությամբ, խոհեմությամբ և հեռատեսությամբ Ս. էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության նկատմամբ:

Մայր Աթոռի պաշտոնական այդ հաղորդագրության վրա կարելի է միայն ավելացնել, որ Մայր Աթոռը ոչ մի տեղեկություն չի ունեցել Ալեքի անհետացման ակտի կապակցությամբ, ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի: Այդ մասին Վեհափառ Հայրապետը առաջին անգամ լսել է 1956 թվականի մարտ ամսում, Կահիրեում, իսկ սրբազանից, և իր զարմանքն ու ցավն է հայտնել:

Ժիշտ է միաժամանակ, որ Մայր Աթոռը մասնավոր շահագրգռվածություն հանդես չի բերել Ալեքի անհետացման ակտի վերաբերյալ (և ոչ թե սուրբ մասունքների, ինչպես շարամտորեն փորձում է պատկերել սեռական-ը), նախ՝ որովհետև Ս. Գրիգոր Լուսավորչի իսկական Աջը գտնվում է Մայր Աթոռում, և երկրորդ՝ Մայր Աթոռի այս վերաբերմունքով ղեպի անհետացած սրբազան մասունքները հնարավոր դարձավ, որ դրանք վերագործվեն Անթիլիասի Այս է ճշմարտությունը:

Անցնելով մեր եկեղեցական տաղնապի վերջին փուլերին, նշենք, որ այնուհետև ևս, Վեհափառ Հայրապետի թեմազորությամբ և ցուցմունքներով, շարունակվեցին հաշտության գոյացնելու շինարար աշխատանքները փոխադարձ զիջումներով և հատկապես Ան-

թիլիասի Աթոռի հեղինակությունը և նրա չի վարչական և բացարձակ անկախ դիրքը ապահովելու առաջադրությամբ:

Սան-Պալլոյի արժանապատիվ Ս. Ծղեհկ ավագ քահանան 1958 թվականի հոկտեմբերին որպես ուխտավոր և պատգամավոր Սան-Պալլոյի հայ դադութի ներկա եղավ Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակի և գահակալության 3-րդ տարեդարձի հանդիսություններին:

Այդ առթիվ արժանապատիվ Տեր հայրը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Սան-Պալլոյի հայոց Ազգային կենտրոնական վարչության սեպտեմբեր 20 թվակիր հետևյալ պաշտոնական զրույթյունը.

«Գաղութիս ձերունազարդ հոգևոր հովիվ արժանաշնորհ Տեր եղեհկ քահանա Վարդանյանը, որպես պաշտոնական պատգամավոր Ս. էջմիածին մեկնելուն առթիվ, ուղեցիկը օգտվիլ այդ պատեհությունն և իրեն պաշտոն տվիք խնդրելու Ձերդ Մարտիկներն, որ հաճիք Ձեր կարեկրն ընել համաձայնության ելք մը գտնելու Կիլիկիո Կաթողիկոսության հետ ունեցած ցավալի խընդիրներուն վերջ տալու և Հայաստանյայց Եկեղեցիով ու ժողովուրդին հանդեպ մասնավորապես եղբայրական սերն ու վստահությունը վերականգնելու համար: Արժանաշնորհ Տեր հայրը կվայելե գաղութիս հավաքականության բոլոր հոսանքներու կատարյալ վստահությունը: Մեր Տեր հայրը բարձրաստիճան կղերական մը չէ, բայց ազգային ու եկեղեցական լավագույն զգացումներով օժտված մեկն է և մեր դադութը մեծ համարում ունի իր վրա, ու վստահ ենք, թե Ձերդ Սրբությունը պիտի ուղե լսել ափ մը հանելու ինքնարուխ այդ խնդրանքը և ընդառաջ երթա անոր:»

Խոնարհարար համբուրելով Ձերդ Վեհաժառույթյան օծյալ Ս. Այլը, մնամք որդիական ամենախորին հարգանքը:

Ի ԴԻՄԱՑ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՅՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԱՄԵՆԱՊԵՏՈՒ
ԿԱՐԱՊԵՏ ԷՔԻԶՑԱՆ
ԱՄԵՆԱՊԵՏՈՒ
ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՍՊՈՐԿՅԱՆ
Ի ԴԻՄԱՑ ՍԱՆ-ՊԱՎԼՈՑԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՑՈՒԹՅԱՆ
ԱՄԵՆԱՊԵՏՈՒ
ԱՆԴՐԵԱՍ ՃԱՅՆՑՅԱՆ
ԱՄԵՆԱՊԵՏՈՒ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏՅՈՒՄԵՅՅԱՆ

Վեհափառ Հայրապետը սիրով կարգադ Սան-Պալլոյի Ազգային կենտրոնական վարչության նամակը և իր հոկտեմբեր 27 թվակիր նամակով պատասխանեց հետևյալը.

«Միրով ընդունեցինք ձեր պատգամաբեր արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա վարդապետներ և իր միջոցով ձեզ բոլորիդ կհղենք Մեր սիրտ ողջույնը, լավագույն մաղթանքներով հանդերձ»:

Մենք ուրախ ենք և հոգեպես մխիթարված, որ դուք և Սան-Պափյոյի մեր հավատացյալ ժողովուրդը ամբողջ, հավաքված Ս. Եկեղեցվո և իր արժանավոր հոգևոր հովիվին շուրջ, զերաշնորհ ձեր առաջնորդ հոր ղեկավարության ներքև, կապրիք ու կգործեք խաղաղ ու համերաշխ, հավատարիմ մեր սուրբ հավատքին և մեր Ազգին բոլոր ավանդներուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Մենք նույն հոգեկան⁶ մխիթարությամբ կարդացինք նաև ձեր 20 սեպտեմբեր 1958 թվակիր նամակը, որուն մեջ կանգրադառնաք արտասահմանի մեր Եկեղեցիին ներս ծայր տված ցավալի տաղանային և կրդձաք, որ վերականգնվի «քրիստոնեական ոգւոյն համապատասխան եղբայրական սերն ու վստահութիւնը» մեր Եկեղեցիին մեջ:

Վստահ եղեք, որ Մեր ալ աղոթքն է ու ամենաշնորհ մաղթանքը, որ Տերը Մեր և ձեր ձայնը լսե և շուտով թագավորեն սերը, խաղաղութիւնը և միութիւնն ոգին մեր Սփյուռքի հայութեան վրա և Հայ Եկեղեցվո կամարներուն տակ:

Արժանապատիվ Տեր Եղնիկ ավագ քահանան, որ իր կենդանի աշքերով տեսավ Ս. Էջմիածնի մեջ ծագող հոգևոր կյանքը և Մեր տարած աշխատանքը, որ լսեց Մեզ ու հասկըցավ Մեր հոգին, վստահ ենք, թե Մայր Աթոռն իր վերադարձին թարգմանը պիտի հանդիսանա Մեր մտածումներուն, Մեր ապրումներուն և Մեր եկեղեցաշէն ծրագիրներուն:

Թող ամենակարող Աստված պահե, պահպանե զձեզ քաջառողջ ու բարօր, առաքինի գործոց հաջողությամբ:

Ամենայն հայոց սուրբ հավատքի վեմ հավիտենական Ս. Էջմիածնեն ձեզ օրհնությոն հայրապետական:

«Մէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:

Արժանապատիվ Տեր Եղնիկ քահանան ղեպի իր պաշտոնատեղին վերադարձի ճանապարհին ցանկութիւն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ այցելել Անթիլիաս և որպէս հայ հոգևորական իր համեստ մասնակցութիւնը բերել Հայ Եկեղեցու արդի տաղանայի լուծման գործին: Մայր Աթոռում Վեհափառ Հայրապետը օրհնեց Տեր հոր ճանապարհը ղեպի Անթիլիաս և ասաց.

«Դուք լսեցիք Մեզ և տեսաք այստեղ Մեր կյանքը և գործը և հասկցաք Մեր հոգին: Գա-

ցե՛ք, խոսեցե՛ք նաև Անթիլիասի հետ: Փորձեցե՛ք, Մենք միշտ պատրաստ ենք հաշտութեան և ներքին խաղաղութեան վերահաստատման»:

Տեր Եղնիկ քահանան Վեհափառ Հայրապետի օրհնությամբ մեկնեց Անթիլիաս: Տեր հայրը մինչև նոյեմբերի 6-ը մնում է Բեյրութում և 5—6 անգամ այցելում Անթիլիաս, տեսակցութիւններ է ունենում Տ. Զարեհ և Տ. Խորեն սրբադանների հետ և իր նոյեմբեր 20 թվակիր նամակով գրում Վեհափառ Հայրապետին Անթիլիասից ստացած իր տպավորութիւնների մասին:

«Զերդ Վեհափառութեան գիտակցությամբ և արտոնությամբ, այցելելի կերանան ու պարտքս կհամարեմ Զեզ իրազեկ պահել այն խոսակցութիւններուն, որ տեղի ունեցան իմ, Զարեհ, Խորեն և Ղևոնդ եպիսկոպոսներու միջև:

Այս նամակիս կուտամ խոսակցութեան ձեռք, որ սովորական նամակի մը կազապարեն դուրս է, բայց ես այս կերպը նախընտրեցի, որպէսզի Զերդ Վեհափառութիւնը մեր խոսակցութիւններու մասին ավելի հասակ դադափար մը կաղմն:

Խոսակցութեան սկսելիս առաջ, հայտնեցի, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմեն չեմ գար, հետեաբար այդ կողմեն պաշտոնական հանդամանք մը չունիմ, բայց կուգամ փոքրիկ գաղութի մը, Բրազիլիոյ հայ գաղութի կողմեն, որու պաշտոնական և լիազորված ներկայացուցիչն եմ, և ինչ որ ձեզի պիտի խոսիմ, նույնը խոսած եմ նաև Ամենայն Հայոց Հայրապետին և իմացուցած, որ հոս ալ պիտի դամ նույն խնդրով և նպատակով:

1958 նոյեմբեր 1-ին, կեռօրե վերջ ժամը 15-ին, Անթիլիաս հասա ու տեսնվեցա Զարեհ և Խորեն սրբադաններուն հետ, գործածելով «Վեհափառ տիտղոսը, երբ խոսքը Զարեհին կուղղելի, Զարեհին հանձնեցի մեր գաղութի կողմեն Զերդ Վեհափառութեան ուղղված նամակի նման նամակ մը, զոր կարդայե վերջ, Խորենին երկարեց, որ ան ալ ընթերցումը վերջացուց, առաջին հարցումը, որ Զարեհը քաղ, հետեւյալն էր.

— Տեր հայր, Բեյրութի մեջ աղգականներ կամ բարեկամներ ունի՞ք:

— Ոչ:

— Ո՞ր իշած եք:

— Պանդոկ:

— Ինչո՞ւ ուղղակի վանքը չեկաք, չե՞ որ դուք կղերական եք և պետք էր վանքը գալիք. վանք եղած տեղ կղերականներ պանդոկ չեն իջնար:

— Ես հակադարձահական եմ, եկած եմ ձեզ հետ խոսելու, եթե կուզեք՝ վիճելու, և որպեսզի կարողանամ իմ անկախությունս պահել, նախընտրեցի վանքին դուրս բնակվել։

— Զարեհ՛ը ձեզի ի՞նչ բրած է, որ հակադարձահական եք։

— Ինձի անձնապես բան մը չեք բրած, ոչ ալ ձեզի անձնապես ճանչնալու պատիվը ունեցած էի, բայց ձեր հարուցած վեճը և անոր հաջորդող պառակտումը, ինձի, որպես հայ կղերականի, այնքան վշտացուցած է, որ հակադարձահական կհամարեմ ինձի, ու չեմ քաշվիր ըսելու, թե եկած եմ խնդրելու, որ ստեղծված դրուժյան վերջ տալու մասին խորհիք, միայն ադու՛մ ես և ինձի նման անշահախնդիր եկեղեցականներ կարող ենք Զարեհին բարեկամ դառնալ և հարգել որպես Կաթողիկոս Մեծի՛ն Տանն Կիլիկիո։

— Բայց պառակտումը ես չհառաջացուցի, Ամենայն Հայոց Հայրապետի և Իր խորհրդատուներու գործն է ան, ես, ընդհակառակը, ամեն տեսակ գիշորդություններ ըրի, նույնիսկ խնդրեցի և աղաչեցի, բայց անոնք կարևորություն չտվին, ուզեցին ինձի տրորել։ ամենավերջին պարագային էր, որ ես ինքնապաշտպանությամբ դիմեցի, Կերպական ես ալ մարդ եմ, և եպիսկոպոս մը, ես ալ արժանապատվություն ունիմ և իմ Եկեղեցիս կսիրեմ այնպես, ինչպես դուք կամ որե՛կ կղերական։ Ես հանցավոր չեմ, հանցանքը ուրիշ տեղ փնտռեցեք։

— Ես հանցավորներ փնտռելու չեմ ելած, և ոչ ալ մեկը արդարացնելու և մյուսը դատապարտելու մասին կխորհիմ. իրականություն մը կա մեղադր՝ Հայ Եկեղեցի՛ն պառակտումը, ու այդ պառակտումին պետք է վերջ տրվի, առանց որե՛կ մեկու արժանապատվությունը վիրավորելու։ Ձեզի կվստահեցնեմ, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն ալ այդպես կմտածե. Ան ձեզ հանդես պետություն չունի, բարի է ու խաղաղասեր, Անոր ուզածը եղբայրական սերն ու միությունն է։

— Ես ալ գի՛նք կհարգեմ, գիտեմ որ բարի մարդ է. Իր շրջապատին տարվեցավ, ու ըրավ և ըսավ բաներ մը, որ ընելու և ըսելու չէր։

— Ես անձնապես կընդունիմ, որ բանակցություններու ատեն երկու կողմեն ալ ժայռահեղուժություններ եղան, թեև պետք է գիտնաք նաև, որ ես պարզ քահանա մըն եմ և իմ կարծիքը կրնա եպիսկոպոսներու կողմն հաշվի չառնվիլ, հետևաբար պաշտոնական հանգամանք ալ չունի։

— Դուք հարկավ տեսնվեցաք Վեհափառ Հայրապետին հետ. ի՞նչ է իր կարծիքը, ի՞նչ են իր պայմանները։

— Ես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին պաշտոնական պատվիրակը չեմ. ես

միայն իմ ժողովրդյան ներկայացուցիչն եմ և ինչպես ձեզի, նույնպես ալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ներկայացա՝ նույն հանգամանքով։

— Հասկցա, բայց Վեհափառը հաշտության ի՞նչ պայմաններ ունի։

— Պատերազմող պետություններ չեք Դուք. որ հաշտության պայմաններ առաջարկվին. Դուք կղերականներ եք, Քրիստոսի փոխանորդներ, և այդ ոգիով ալ պետք է մոտենաք այս խնդրույն։

— Այսինքն։

— Այսինքն վերահաստատել նախկին սերն ու միությունը երկու Աթոռներու մեջ, մոռացության տալ եղած բոլոր ըսի-ըսավները, յուրաքանչյուր Աթոռ վայելի իր նախկին դիրքն ու իրավունքները. Ամենայն Հայոց Հայրապետը կճանչնա ձեզի որպես օրինական կաթողիկոս Մեծի՛ն Տանն Կիլիկիո, պայմանավ, որ զեթ սիմբոլիկ կերպով օրինականացնելու ձև մը առաջարկեք, եթե իր առաջարկներուն համաձայն չեք։

— Գարեգին պատրիարքի մեջտեղ նետած անտեղի «քառ գայթակղութեան»-ն է այդ, զուրկ լրբութենի։

— Գարեգին պատրիարքը իմ հոգևոր ծնողքն է, ու ես մեծ հարգանք ունիմ այդ մարդու հանդեպ։

— Հարգեցեք ուղածնուդ լավի, բայց թե այս խնդիրները այս կերպարանքը ստանալուն մեջ Գարեգին պատրիարքն ու մի քանի եպիսկոպոսներ շատ մեծ դեր ունեցան՝ այդ ալ գիտցեք։

— Անցյալը վերհիշելու պետք չկա, նախկին դրուժյունը վերահաստատելու մասին մտածելու է։

— Ըսել կուզեք, որ նախկին միաբանները պետք է վերադառնա՞ն։

— Բնականաբար։

— Ոչ, նախկին միաբաններեն միայն խաղաքեպիսկոպոսը կրնա վերադառնալ, անոր հանդեպ որդիական հարգանք ունինք, իսկ մնացյալները կարող են էջմիածին կամ Երուսաղեմ հաստատվիլ, անոնք այլևս Անթիլիասի մեջ գործ չունին։

— Բայց այս վանքը ձեր պապնական ժառանգությունը չէ, որ այդ տեսակ խոսքի, Գիտեմ, թե վանական օրենքներ կան, որոնցմով կկառավարվին մեր վանքերը, բայց ներկայիս բացառիկ դրուժյուն մը ստեղծված է, որ միայն քրիստոնեական ոգիով և համապատասխան ներդրամտությամբ կարելի է կարգադրել Մենք հաշտության և խաղաղության մասին կխոսինք։

— Կերեի, թե դուք կամաց-կամաց վերջերս մեզի կապված գաղութներն ալ էջմիա-

մեկին վերադարձնելու առաջարկը պիտի բերեք:

— Շատ բնական է և արդար ու օրինավոր: Զարեհը զայրացած ոտքի ելավ ու ըսավ:

— Ոչ, այդ անկարելի է, այդ գաղութները ինքնաբերաբար ինձի գիմուժ ըրած են, ու ես ստիպված էի անոնց դիմումին ընդառաջ երթալ: Այդ գաղութները ես ինձի կապած եմ և որեւէ գնով ձեռքս չեմ հաներ:

Այս անգամ ես զայրույթեա ինքնիրմեա ելած, նույնիսկ պատշաճութիւնը մոռցած, ոտքի ելա ու պոռալով ըսի:

— Ձեր այդ մտածելակերպը, ձեր այդ քայլը, Հայ Ազգին ու Եկեղեցւոյ դեմ գործված ուժիւր մըն է: Գուք կուզեք Ազգն ու իր Եկեղեցին պառակտված պահել ձեր փառքին սիրուն: Դուք ինքզինքնուդ աշխարհակալի հովեր տված եք և էջմիածնի թեմերը գրավելու հերք եք: Ո՛վ եք դուք, ո՛վ տվավ ձեզի այդ իրավասութիւնը: Գիտեմ, դուք Դաշնակցութեան կոթնած կրնեք, բայց գիտցեք, որ Դաշնակցութիւն ամբողջ գաղթաշխարհ ըսել չէ:

Այս անգամ հորեն սրբազանը ձայն բարձրացուց ու ըսավ:

— Ժողովրդեան համակրութիւնը մեզ հետ է: Ես Ամերիկա զացի և կարճ ժամանակվան մը մէջ կես միլիոն դոլար հանգանակեցի: Հիմա մեր բոլորն առաջվրն ալելի լավ է և ալելի հաստատուն:

— Սրբազան, այդ դոլարները շուտ կհալին, իսկ այսօր օգնաննա՝ կանչող ժողովուրդը վաղն ալ նույն եռանդով քի խաշ հան զդառ կկանչե: Ժամանակավոր հաջողութիւններով գինովնալ սխալ է ու վտանգավոր: Մոռնալու չեք, որ հայ ժողովուրդի մէջ էջմիածնի հմայքը չի մեռնիր, հայ ժողովուրդի հավատքին հետ շաղախված է ան. մի՛ դալչիք այդ հավատքին, վտանգավոր է:

— Մենք Ս. էջմիածնի դեմ պայքար չունինք, ոչ ալ անոր Գահակալին դեմ. մեր պայքարը բոլշեկութեան դեմ է, որ մեր Աթոռը կործանել կուզե, և այն ալ մեր եպիսկոպոսներու ձեռքերով:

Երեք ժամեն ալելի տեղդ այս չղագրգիտ վիճարանութիւնները վերջ գտան, ու ես Զարեհի կառքով պանդոկս վերադարձաւ: Ծամրա ելլելին առաջ հրավիրեցին, որ հաջորդ օր վանք երթալի եպիսկոպոսական ձեռնադրութեան ներկա գտնվելու համար: Զկարողացաւ մերժել, մանավանդ որ երկուշաբթի խոսակցութիւններ պիտի շարունակվեին: Հաջորդ օր երբ վանքը հասա, արդեն թափոր կադմելու պատրաստութեան ձեռնարկած էին: Խորեն սրբազանը առաջարկեց, որ շուրջառ առնեմ և թափորին մասնակցեմ. մերժեցի:

— Արեւմտե փիլոն առ և դասը կցիր, — լսավ: Մերժեցի, պատասխանելով:

— Ես իմ հաղուստներովս, դասի մէջ, բայց ժողովրդեան հետ կկենամ ու կգիտեմ:

Եվ այդպէս ալ ըրի:

Ձեռնադրված երկու եպիսկոպոսներն մին Հունաստանի համար էր, իսկ մյուսը վանքի լուսարարապետ, թեև ականջիս հասավ, որ Ամերիկայի ապագա եպիսկոպոսն է:

Մինչև նոյեմբեր 6 ամեն օր Աթորիսա գաղի և մեր խոսակցութիւնները երբեմն մեղմ, երբեմն փոթորկալից շարունակվեցան: Այս խոսակցութիւններուն ընթացքին ըսի որ, եթե հաշտվելու միտք ունիք, ես կհեռագրեմ Ամենայն Հայոց Հայրապետին և կխնդրեմ, որ հաճի Փարիզի առաջնորդ Սերովբե սրբազանը իր ներկայացուցիչը նշանակել և հոս դրկել: Դուք և Սերովբե սրբազանը որպէս պաշտօնական անձնավորութիւններ, իսկ ես անպաշտօն և պարզ ունկնդիր, համաձայնութեան և հաշտութեան մասին կխորհրդակցեք ու բանաձև մը կպատրաստեք, որուն տակ կստորագրեք երկու կաթողիկոսներդ, և կզրկեք բոլոր թեմերուն, վերջ տալով այս անախորժ դրութեան:

— Գիտցիր, Տեր հայր, որ ես ծագի մը վրա կեցած էի, անոր բոլոր ճշուդները կտրեցին, ու ես թռնելիք տեղ մը լուսնի: Ներկայիս կեցած եմ ճշուդի մը վրա միայն. այդ ճշուդը Դաշնակցութիւնն է: Դուք կուզեք, որ ես իմ ձեռքերովս կտրեմ այն ճշուդը, որուն վրա կեցած եմ, որպէսզի վերջնականապէս իյնամ, որպէսզի դուք ըստ կամս զիս ոտքերնուդ տակ առնեք ու տրորեք: Այդ մեկը ոչ, ես այդ բանը չեմ կրնար ընել:

— Ոչ ձեր Կաթողիկոսութեան և ոչ ալ ձեր Աթորին վտանգ կապառնա. երեւակայական վտանգներ են աղոնք, որ զոյութիւն չունին. դուք երեւակայութեամբ, առնվազն միտումնաւոր ու սխալ տեղեկութիւններով կառաջնորդվիք: Ամենայն Հայոց Հայրապետը ամենափոքր չափով մը իսկ այդ մտադրութիւնը չունի:

— Ես հաշտութեան համար ամեն տեսակ զիջումներ ըրի, բայց իմ բոլոր առաջարկներս ու զիջումներս նկատի չառնվելն զատ, արհամարհվեցան: Մարդոց նպատակն էր ինձի ոտքի տակ առնել ու տրորել: Վերջապէս ես ալ մարդ եմ և եպիսկոպոս մը. ես ալ արժանապատվութիւն ունիմ: Ինձի ստիպեցին, որ ինքնապաշտպանութեան դիմեմ, ու դիմեցի: Խնդիրը այժմ տարբեր կերպարանք ստացած է, մեր ձեռքն ելած է. եթե ուզենք ալ, չենք կրնար բան մը ընել: Մեղքը խնդիրը մինչև այս կետին հասցնողներուն է, ոչ թե մեր:

Հինդ օրվան աղմակալից տեսակցութիւնները վերջ, երբ տեսա, թե այնքա երկարելը

ոգտւո լուծի, հրաժեշտ առի ու Բեյրութ վերադարձաւ: Մեկնելնս առաջ երբ ուղեցի պանդոկի հաշիվը մաքրել, դրամ շտապեցան, հայտնելով, թէ «կաթողիկոսը վճարած է արդեն, դուք անոր հշուրն էիք»: Անմիջապէս լեռախոսեցի Զարեհ սրբազանին և շնորհակալութիւնս հայտնեցի իր հշուրասիրութեան համար ու ավելցուցի:

— Գիտցած եղիր, որ ես կաշառվելիք մարդ չեմ:— Ու կատակելով վերջ տվի իմ առաքելութեան, որ թեև իմ սպասած արդուներ չտվալ, բայց դոնե ժողովրդայն անվերապահ կարծիքը լսեցին:

Վեհափառ Տեր, Ձեզի խորհուրդ տալու հավակնութիւն լուծիմ, բայց շատ անգամ հայտնված կարծիքներու մեջ կարելի է հանդիպիլ այնպիսիներու, որոնք օգտակար կրլլան: Իմ կարծիքով հրապարակագրութեամբ, բուն լեզու գործածելով այս դրութիւնը չի դարձանվիր. ընդհակառակը, ավելի պիտի խորանա և վտանգավոր դառնա, անհրաժեշտ է խոհեմ ըլլալ և կողմնակի աշխատանքներ կատարել և մասնավորապէս այս խնդիրներու մեջ ցցուն դեր չկատարող անձնավորութիւններու միջոցով: Ու ես կհամարամ, թե ելք մը գտնել կարելի պիտի ըլլա:

Այս բոլորից հետո Վեհափառ Հայրապետը նորից մտածում էր, որ դեռնս վերջնականապէս չի կորել հաշտութեան հույսը: Այդպէս էին մտածում նաև եկեղեցական և աշխարհական առողջ բանականութեան տեր անձնավորութիւններ, նույնիսկ քաղաքական տարբեր դիրքերի վրա գտնվող կուսակցականներ, ազնիվ մտավորականներ և առաջարկում էին Վեհափառ Հայրապետին, որպէս Գերագույն Պետը Հայաստանյայց եկեղեցւոյ նվիրապետութեան, շարունակել հաշտութեան նոր փորձերը՝ հօգուտ Հայ եկեղեցւոյ և ի շահ հայ ժողովրդի: Այս հարցի մասին Մայր Աթոռում և Վեհափառ Հայրապետի անունով ստացվել են բազմաթիվ սրտցավ ազգայինների նամակները, որոնցում նրանք պաշտպանում և արդարացնում են Վեհափառ Հայրապետի սկզբունքային, կանոնական դիրքը Անթիլիասի հարցում և միաժամանակ սրտագինս խնդրում են, որ վերջ տրվի ստեղծված եկեղեցական անել կացութեան:

1958 թվականի հուլիսին, հայտնի մտավորական և գրագետ Համաստեղը գրում էր Վեհափառ Հայրապետին.

«... Ուրեմն, սիրեցյալ և Վեհափառ Տեր, Ձեր հիսնամյակի տոնակատարութեան առթիւ Ձեզի կմաղթեմ նոր կորով և նոր թափ Ձեր պատասխանատու ու ծանր աշխատանքներուն համար: Կմաղթեմ մանավանդ,

որ կարենաք հանդարտեցնել պայքարը Ոսկուտքի եկեղեցիներուն, կմաղթեմ, որ Ձեր կորովի ջանքերով պահեք էջմիածնի ավանդական և նվիրապետական իրավունքները, որ իրավունքն է ժողովուրդին: Կմաղթեմ, որ զահակալեք մինչև խոր ծերութիւն ու մեր պատմութեան համար ձգեք լուսավոր էջեր»:

1959 թվականի մայիսի 21-ին Հայեպից դուկտ. Հ. Տեր-Ղազարյանը, նույն մտահոգութիւններով, գրում էր Վեհափառ Հայրապետին.

«Հորեղբորորդիս Պողոս Տեր-Ղազարյան պատիվն ունեցած էր Ձերդ Վեհափառութեան ներկայանալու էջմիածնի մեջ: Այս առթիւ բարեհաճած էիք ուղարկելու Ձեր ողջունները և խաշ մը, իր միջոցով իմ հասցեիս:

Նման պատիվի մը արժանանալուս համար ինքզինքս շափազանց երջանիկ զգալով, կուզամ իմ անկեղծ շնորհակալութիւններս հայտնելու Ձերդ Վեհափառութեան:

Այս պատեհ առթիւ խոնարհաբար կիսեղբին Ձերդ Սրբութեան բարձր միջամտութիւնը երկու Աթոռներու փոխհարաբերութեանց բարվոքման և բնականոն վիճակի հաստատման, ի սեր համերաշխութեան և սիրալիր հարաբերութեանց, որ դարերէ ի վեր տեղի ունեցած է Աթոռներու միջև, միշտ նկատի ունենալով Հայաստանյայց եկեղեցւոյ միասնականութիւնն ու շահը»:

Հանուն Վեհափառ Հայրապետի, Գերագույն Հոգեւոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հունիս 17 թվակիր նամակով պատասխանում էր դուկտ. Հ. Տեր-Ղազարյանին.

«Մեծահարգ տիար

Դուկտ. Հ. Տեր-ՂԱԶԱՐԳԱՆ
Հայեպ

Այսու հաճույքն ունենք ձեզ հաղորդելու, թե Վեհափառ Հայրապետը զոհունակութեամբ կարգաց ձեր սույն թվականի մայիս 21 թվակիր գրութիւնը և հանձնարարեց հղել ձեզ Ս. էջմիածնից ողջուն և օրհնութիւն:

Իրազորված ենք նաև պատասխանելու ձեր գրութեանը ոտտ էութեան, որով խնդրում եք Վեհափառ Հայրապետի յարաբերութիւնը երկու Աթոռներու փոխհարաբերութեանց բարվոքման և բնականոն վիճակի հաստատման, ի սեր համերաշխութեան և սիրալիր հարաբերութեանց, որ դարերէ ի վեր տեղի ունեցած է Աթոռներու միջև, միշտ նկատի ունենալով Հայաստանյայց եկեղեցւոյ միասնականութիւնն ու շահը»:

Թեև կարծում ենք, որ ձեզ քաջ ծանոթ է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ուղիղ և

արդար մտածումը երկու Աթոռների փոփոխությանը հարաբերության վերաբերյալ, սակայն, քանի որ այս հարցով դուք ուղղակի դիմում եք նորին Սրբության, հավանաբար շինարար նպատակով, մենք, Վեհափառի համաձայնությամբ, պարտք ենք համարում մի անգամ ևս պարզել Մայր Աթոռի մտահոգությունները և դիրքը:

1. Նախ պարտինք հիշեցնել, թե նորին Ս. Օծությունն Վազգեն Ա Հայրապետը, տեսնելով պատակտյալ վիճակը Կիլիկյան Աթոռի, և կանխելու համար ժողովրդի վերջնական լուծարումը, անձամբ փութաց Անթիլիաս՝ ամրապնդելու համար համերաշխությունն ու միասնականությունը զեթ Եկեղեցու ներսում: Ամենայն Հայոց Կաթողիկոսի այս առաջին փորձը հաջողություն չպսակվեց, որովհետև այդ օրերին ոչ ոք չկարողացավ հասկանալ Վազգեն Հայրապետի հոգին և ոչ ոք չուզեց օգնության հասնել անկեղծ հայու սրտով՝ ձերբադատված խմբակցական ջահերից և նկատումներին: Ոչ միայն չհասկացան կամ չուզեցին հասկանալ, այլև, ընդհակառակը, մամուլի որոշ օրգանների կողմից այն ժամանակ ամենաաշխատակալ վերագրումներ արվեցին (և շարունակվում են արվել) նորին Վեհափառության և Կոստանդնուպոլսի առաքինազարդ Գարեգին սրբազան պատրիարքի հասցեին, վերագրումներ, որոնց հավատ ընծայելը պարզապես անխղճություն է, եթե ավելին չասենք:

2. Երկրորդ փորձը կատարվեց Կահիրեի Եպիսկոպոսական ժողովի բանաձևով, որ Անթիլիասի կողմից մերժվեց կոպիտ կերպով, առանց որևէ շինարար հակառաջարկի:

3. Մայր Աթոռի կողմից երրորդ առաջարկն արվեց 1956-ի հունիսի 9-ին, որով գահաընթաց Տ. Զարեհ սրբազան, իբրև միակողմանի ընտրյալ գահակալ, հրավիրվում էր կաթողիկոսական օծում ստանալու Ս. էջմիածին, համազգային կնիք տալով այդ օծման և դրանով իսկ զարմանելու ընտրության միակողմանիությունը: Այդպիսով բոլորի համար անխտիր ընդունելի պիտի դառնար Զարեհ սրբազանի կաթողիկոսական հեղինակությունը:

4. Այս առաջարկը ևս մերժվեց հունիս 16-ի հեռագրով, որով հորինե Եպիսկոպոսը պայման էր դնում, որ օծումը պետք է տեղի ունենա Անթիլիասի Տաճարի մեջ: Վազգեն Կաթողիկոսը անմիջապես ընդառաջեց այս պայմանին, պատրաստ լինելով Անթիլիաս ուղարկել իր ներկայացուցիչը և հունիս 22-ի հեռագրով հայտնեց այդ մասին Բարսեղյան սրբապանին, սպասելով պատասխանին: Այս

անգամ սակայն Անթիլիասը, հարմար դուրս եկավ չպատասխանել Մայր Աթոռին:

5. Անպատմաբեր տեղի ունեցած ոչ օրինական օծումից առաջ Վեհափառը մի փորձ ևս կատարեց իր հեռագիր-կոչով, որտեղ ասված էր.

«Մեր միակ ջանկությունն է, որ Տանն Կլիկիո կաթողիկոսի օծումը կատարվի կանոնական և համազգային համերաշխության պայմաններում մեջ, Եթե այդ երկու պայմանները չստեղծվին, կհորդորենք զձեզ հետաձգել սեպտեմբեր 2-ի արարողությունը, որ կրնա անդամանելի բարդություն և վերջնական հերձված առաջացնել՝ ձեզ տանելով Եկեղեցիին և Ազգին նշույթի տակ:

Փորձենք անգամ մը ևս միացյալ ճիգերով ստեղծել լրջձալի պայմանները ի սեր մեր սուրբ հավատքի ու Ազգի միություն:

Մենք ոչ մեկ անհաղթահարելի արգելք չենք տեսնել:

Ձեր կողմն զրական պատասխանի մը պարագային, ձեզ ներկայացնելիք նոր առաջարկներ ունինք ի շահ ձեզ և ձեր Աթոռին:

Երևարար սուրբ զործի համար բնավ պետք չէ հուսահատի կամ խռովի: Պատասխանատու ենք Աստուծո և մեր պատմության առաջ» (30 օգոստոսի 1956 թ.):

Պատմական մի փաստաթուղթ է այս, որի մեջ ապագա մեր սերունդները պիտի տեսնեն հայ ժողովրդի սրտից արձակված մի ձայն, որն անպայման լսելի պետք է դառնար հայու սիրտ կրողների համար:

Սիրելի՛ պր. դոկտոր, մենք պարզապես ի վիճակի չենք հասկանալու, թե ինչու Անթիլիասը այսքան անիմաստ և անհեռատես կերպով մերժեց գոնե այս վերջին երկու առաջարկությունները: Ի՞նչ պիտի կորցնելու Անթիլիասը և իր նոր գահակալը, Ոչինչ: Իհիսյն և միայն կշահին նրանք, քանի որ ինքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատրաստ էր իր հեղինակությամբ նվիրագործելու Զարեհ սրբազանի կաթողիկոսությունը: Հարկ էր մի ձև գտնել, հասնելու համար այդ ցանկալի արդյունքին: Անթիլիասը և իր զործակիցները ոչ միայն չօգնեցին այդ արդյունքին հասնելու, այլև իրենց ներկայացված պատրաստ առիթը և միջոցը դիտակցորեն մերժեցին:

6. Հաջորդեց սեպտեմբեր 2-ի արարողությունը, որ չի կարող կաթողիկոսական օծում նկատվել մեր Եկեղեցու կանոնների և ավանդությունների լույսի տակ: Երբեք չի պատահել, որ երկու հայ և մեկ օտար Եպիսկոպոսով ձեռնադրություն և օծում կատարվի և կանոնական նկատված լինի այդ արարողությունը: Ե դարից առաջ կատարված որոշ ձեռնադրություններ նախընթաց չեն կարող հա-

մարմնի, վասնզի մինչև Քաղկեդոնի ժողովը. ինչպես գիտենք, եկեղեցիների քամանում չէր կատարված և բոլորը ապրում էին իբրև ամի և ընդհանրական եկեղեցի»։ որը դադարեց զոյություն ունենալուց և դարձրեց հետո, և Հայ եկեղեցին կազմակերպվեց իբրև ազգային ուրույն ինքնիշխան եկեղեցի, գլուխ ունենալով Ս. Էջմիածինը, իբրև Փրկչի իշման սրբատեղի։

7. Վերջապես դրանից հետո ևս հաջորդեցին Մայր Աթոռի մի քանի փորձերը՝ զբարվոքելու համար երկու Աթոռներու հարաբերությունները, փորձեր, որ արվեցին մեր Հայրապետի առաջարկությամբ, Գարեգին պատրիարքի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահի և այլոց միջոցով։ Սակայն այս բոլոր փորձերը ոչ մի արդյունք չտվեցին։ Միշտ հանդիպեցինք Անթիլիասի քար լուռության։

8. Գուցե ավելորդ լինի հիշելու վերջին անպաշտոն մի փորձ ևս, որ ցանկաց կատարել Սան Պապիոյի հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Եղնիկ ավագ քահանա Վարդանյանը՝ իր և Սան Պապիոյի թեմական խորհրդի նախաձեռնությամբ։ Մեր Հայրապետը այնքան էլ լավատես չէր այս գործում, բայց բարեմիտ Տեր հորը ասաց. «Դուք լսեցիք Մեզ և տեսաք այստեղ Մեր կյանքը և գործը, և հասկցաք Մեր հոգին։ Գացեք, խոսեցեք նաև Անթիլիասի հետ։ Փորձեցեք։ Մենք միշտ պատրաստ ենք հաշտության և ներքին խաղաղության վերահաստատման։ Տեր Եղնիկ քահանան գնաց Էջմիածնից Անթիլիաս և Վեհափառ Հայրապետին գրեց իր 20 նոյեմբեր 1958 թվակիր նամակը, որի մեջ ողորդական կերպով դրսևորվում է անթիլիասյան այժմյան հոգեբանության ճշմարիտ պատկերը։ Ներփակում ենք պատճեններ Տեր Եղնիկ քահանայի նամակի։

9. Եվ այս բոլորից հետո, այլև Անթիլիասի ապրիլի ու ազգաքանդ ոտնձգություններից հետո Էջմիածնական թեմերից ներս, որոնք պաշտոնապես ներկայացվում են իբրև «հաղթանակներ»... Ս. Էջմիածնի դեմ, դուք, հարգելի գովուոր, գրում եք Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ «Կիսկորեմ Զեռդ Սրբության բարձր միջամտությունը երկու Աթոռներու փոխհարաբերությանց բարվոքման և քննական վիճակի հաստատման, ի սեր համերաշխության ու սիրալիր հարաբերությանց»։

Զենք կասկածում ձեր խոսքերի լրջության, սակայն չենք էլ կարող ալքներս փակել իրականությունը շտեմելու և եզրակացություններ շանելու համար։ Մենք շատ զոհ պիտի լինեինք, եթե համերաշխության և հաշտության ձեր խոսքը լսելի դարձնեիք Անթիլիասում։ Անտեղ է հանգուցը։

10. Ամփոփելով և եզրակացնելով, մենք կարող ենք քաց սրտով ձեզ հայտնել հետևյալները։

ա. Մայր Աթոռը ցանկանում է տեսնել մեյ եկեղեցին ներքնապես խաղաղ ու միասնական և Էջմիածնի ու Կիլիկյան Աթոռները բնականոն հարաբերությամբ մեջ՝ պատմական իրավասությունների և ավանդույթների լույսի տակ։

բ. Մայր Աթոռը ցանկանում է բնդհանուր մի բանաձևով կանոնականացնել Զարեհ Եպիսկոպոսի կաթողիկոսացումը, որի նկատմամբ Վազգեն Կաթողիկոսը անձնապես լավագույն եղբայրական զգացումներ է տածում։

գ. Անհրաժեշտ է պայքարող կողմերի միջև մի հաշտության գոյացնել, Կիլիկյան միաբանության ներքին հաշտությամբ, համապատասխան դիրք տալով գերաշնորհ Տ. Խաղարեպիսկոպոսին, մեր կաթողիկոսական աթոռակցության դրությամբ։

դ. Միացյալ ուժերով կազմակերպել Հայ Սփյուռքի եկեղեցական կյանքը, գործակցության մեջ նվիրապետական բոլոր Աթոռներին, օգտագործելով մեր թեմերում Անթիլիասի և Երուսաղեմի արժանավոր միաբաններին։ Եթե մեր Աթոռների միջև բնականոն հարաբերություններ ստեղծվեն, ոչ մի պատճառ չկա, որ Էջմիածնական թեմերում պաշտոնավարեն նաև Կիլիկյան միաբանների՝ Աթոռների փոխադարձ համաձայնությամբ։

Ահա, հարգելի գովուոր, այն ամենը, որ կամեցանք ձեզ հայտնել անկեղծ սրտով և շինարար ոգով։ Թեև մեր սույն նամակը պաշտոնական պատասխան չէ Մայր Աթոռի կողմից, սակայն վստահացնում ենք ձեզ, թե այս է խորքի մեջ Ս. Էջմիածնում տիրող մտածելակերպը և Աթոռների միջև բնականոն հարաբերությանց ստեղծումը ամենալավ իդեա է Ազգիս Վեհափառ Հայրապետին։

Երանի թե մի օր ոպստի գալով Ս. Էջմիածին, անձամբ հաստատեիք այս քոլորը և իրավ կերպով հասկանայիք Նորին Մրդության ճշմարիտ հոգին։

Ողջունելով և օրհնությամբ, աղոթարար՝

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատեմապետ Գեւորգյան Հոգևոր Խորհրդի

17 Յունիսի 1959 թ.

Ս. Էջմիածին։

1959 թվականի հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ այցելեց Հայկական ՍՍՄԿ գիտությունների Ակադեմիայի հրավերով Հայաստան հկած հայտնի քիմիկոս պրոֆ. դոկտ. Մանասե Սևակը։ Վեհափառ Հայրապետ

տի և պրոֆեսորի միջև տեղի ունեցավ զրույց, ի միջի այլոց նաև Անթիլիասի տաճնապի լուծման հեռանկարներին և հնարավորություններին մասին, խոսակցության ընթացքում հարգելի պրոֆեսորը խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ իր տեսակետը հայտնել այդ հարցի շուրջ։ Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով պրոֆեսորի ցանկությանը, մոտավորապես ասաց հետևյալը.

«Մայր Աթոռի իղձն է, որ ոչ մեկ քաղաքական պայմանավորումի լինթարկվի Սփյուռքի հայ եկեղեցական կյանքը, Քաղաքական կուսակցությունները կրնան իրենց զաղափարական պայքարները շարունակել կամ լքարունակել, այդ իրենց գործն է։

Բայց Մենք կսպասենք բոլորին, և ներկա պարագայիս հատկապես Դաշնակցութենին, որ եթե այսօր իրոք ազգային հայրենասիրական գերագույն մտահոգություններով կղեկավարվին, պետք է անհրաժեշտորեն հրաժարին արտասահմանի հայությունը իրեն եկեղեցի Ս. էջմիածնին քաժնելու ծրագրին, անկախ այն հանգամանքից, թե իրենք ինչ կարծիք և վերաբերմունք ունին Սովետական Հայաստանի իշխանության վերաբերմամբ։ Մեր հաստատ համոզումն է, որ այս կպահանջե սփյուռքահայության շահը և նաև Ս. էջմիածնի շահը։ Մեր կարծիքով, եթե այս հիմնական կետին մեջ բարեշրջում սկիզբ առնեն, Անթիլիաս ի վիճակի կըլլա Մայր Աթոռին հետ համաձայնության գալու բոլոր հարցերուն նկատմամբ։ Այդ հարցերն են.

1. Վերահաստատել սիրո միությունը և գործակցությունը Հայաստանյայց եկեղեցվո ժողովի մեջ, որով ցանկալի հնարավորությունը պիտի ստեղծվի միացյալ ճիգերով ամրապնդելու և առավել շնցնելու Սփյուռքի հայ եկեղեցական, կրթական և մշակութային կյանքը, և այսպիսով առավել հաջողությամբ կազմակերպելու և իրականացնելու հայապահպանության սրբազան գործը։

2. Վերահաստատումը կանոնական կերպով և պատմականորեն նվիրագործված Մայր Աթոռ Ս. էջմիածնի գերագույն հոգևոր հեղինակության ամբողջ Հայաստանյայց եկեղեցվո և բոլոր նվիրապետական Աթոռներուն վրա։

3. Հարգել և պահպանել Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմականորեն նվիրագործված սահմանները և իրավասությունները իր թեմերին ներս, այսինքն լիբանանի, Սուրիո և Կիպրոսի։

4. Անթիլիասի ներկա աթոռականի կաթողիկոսության կանոնականացումը և ճանաչումը։

5. Հաշտություն և միություն վերահաստատում Տանն Կիլիկիո Աթոռի միաբանության և եկեղեցվո ժողովի մեջ։

6. Հետս կոշումը էջմիածնական թեմերում մեջ կատարված ոտնձգությանց, Փոխադարձ համաձայնությամբ Մայր Աթոռը կարող է ճանչնալ Կիլիկյան Աթոռի միաբանի մը պաշտոնավարությունը էջմիածնական թեմի մեջ, պայմանավ որ Կիլիկյան Աթոռի տվյալ միաբանը, պահելով հանդերձ իր Կիլիկյան միաբան ըլլալու հանգամանքը, իրեն էջմիածնական թեմի մեջ պաշտոնավարող հոգևորական, ենթարկվի էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության, ինչպես բոլոր մյուս առաջնորդները, որոնք կպաշտոնավարեն էջմիածնապատկաճ թեմերում մեջ։

Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի համար առավել լավատեսության առիթ հանդիսացավ պրոֆ. Սևակի այցելությունը։ Վեհափառ Հայրապետը այդպիսի լավատես զգացմունքներով ըաժանվեց պրոֆեսորից։

Սակայն 1959 թվականի դեկտեմբեր ամսի առաջին օրերին, Մայր Աթոռում ստացվեց սահմանցուցիչ լինելու աստիճան մի նոր դրպարտագիր՝ որպես փաստաթուղթ, որը մեր այսօրվա եկեղեցական տաճնապը խորացնելու և սաստկացնելու տեսակետից կարելի է համարել ազգային դժբախտություն։

Խոսքը վերաբերում է 1958 թվականին Անթիլիասում խմբագրված և տպված, բայց հրապարակ չհանված և միայն 1959 թվականին, դավադրաբար, ԱՄՆ-ի կոնգրեսմեններին, եկեղեցական և պետական գործիչներին, ոտար մամուլին րաժանված «Հայ եկեղեցու տաճնապը» անգլերեն լեզվով գրքին, որից մի օրինակ հասավ Մայր Աթոռ 1959 թվականի դեկտեմբերին։

Այս գրքում շարամտորեն, վատագի դրպարտութուններով ամբաստանված են, հաշս Ամերիկյան կառավարության և ժողովրդի, Մայր Աթոռը, Վեհափառ Հայրապետը, Երուսղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքները, Սփյուռքի՝ Մայր Աթոռին հավատարիմ հոգևորականները, ԱՄՆ-ի բոլոր հայ եկեղեցիները, Հ. Բ. Մ.-ը, ազգային, մշակութային հայ կազմակերպությունները, մամուլը, մեկ խոսքով ԱՄՆ-ի Հայ եկեղեցիներ և համայն հայ ժողովուրդը, որպես քաղաքականապես անվստահելի և վտանգավոր տարր։

Անթիլիասի հովանավորությամբ հրատարակված այս դրպարտագիրը խորին վերդովմունքով, ցատումով լցրեց ողջ հայության սիրտը։ Սփյուռքի հայ մամուլը տվեց արժանի պատասխանը։

Ո՛ր պիտի հասնի քարոյական այս անպատասխանատվության և ազգավնաս քաղաքականության վախճանը. երբ մարդիկ բռնանում են հայ կյանքի վրա, դառնացնում են այն ամեն տեսակ զրպարտություններով և այլանդակությամբ:

Ո՛վ է այս բոլորի բուն մեղավորը:

«Իհնչես Լիրանան, ապա Սուրիա, Հուսաստան, Կիպրոս, Իրան, Ատրպատական հեռզենտե հառեցան Հայաստանյայց եկեղեցիի ռադամիւս և անկաշառ հովիւայան, Անթիլիասի մեջ, հուլյես մեք թմբ երցանիկ է, որ կենտիկ հուլե առաջնորդայում, և այս՝ շնորհիվ Հայ Հեղափոխական Դաշնակցության ղեկավար Խմբուրե և անձնագոհության:

Անկառնի է մոռնալ, որ Անթիլիասը իր այսօրվան փառհին չէր հասներ, եթե Հ. Հ. Դ.-ն իր ամբողջ կշիռը դրած չըլլար անօր պաշտպանության և հառադիմության համար» («Հայրենիք ամսագիր», 1959 թ.):

Ավելորդ են այստեղ արդեն մեկնությունները:

Մայր Աթոռ Ս. էջմիածնում Գերագույն Հոգևոր Խորհուրդը, իր 1960 թվականի հունվարի 8-ի նիստում, քննության առնելով «Հայ եկեղեցու տագնապը» գիրքը, ընդունեց հետևյալ հայտարարությունը.

«Մայր Աթոռ Ս. էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդս մեծ վշտով արձանագրում է Հայ եկեղեցուց անջատված մի խումբ հայերի հրատարակած «Հայ եկեղեցու տագնապը» վերնագիրը կրող 211 էջանոց անգլերեն գիրքը, Անթիլիասում տպված, որ գրի է առնված և օտար շրջանակների մեջ տարածված, Հայ եկեղեցու շահերի և հայ ժողովրդի ճշմարիտ ապրումների ու իդճերի հետ աղերս լուսնեցող նպատակներով:

Մուրով դրված այս սև գիրքը սկզբից մինչև վերջ լի է մեր եկեղեցին ու ամբողջ մեր Ազգը վարկաբեկել փորձող ահավոր զրպարտություններով և հանդիսանում է ամոթ հայ պատվավոր անվան համար:

Այս գիրքը մահավճիռ է իր իսկ հեղինակներին, որոնք քաղությունը չունեն հրապարակ դալու իրենց իսկական անուններով:

Գերագույն Հոգևոր Խորհուրդս խոր վերգովմունքով դատապարտում է մեր օրերի այս սև գրքի հեղինակներին և կոչ է անում Սփյուռքի բոլոր հայ հոգևորականներին և համայն հայ հավատացյալներին՝ մնալ անսասան ու խաղաղ և առավել լավատեսությամբ ու նվիրումով աշխատել ի շինություն մեր բարեպաշտ ժողովրդյան հոգևոր կյանքի, ի միասնություն մեր Ս. եկեղեցու և ի պայծառություն հավերժական Ս. էջմիածնի:

Խնչան ամբողջ Սփյուռքի հայությունը, հայ հոգևորականությունը, այնպես էլ Մայր Աթոռը, վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, դատապարտելով մեկտեղ հայ անվան անարժան այդ զրպարտագրի հեղինակներին, խորապես համոզված են, որ Ամերիկյան պետական իշխանությունները, հոգևորականությունը, կոնգրեսմենները և մամուլի ներկայացուցիչները, որոնց ուղարկվել է այդ սև գիրքը, իրենց գործիմացությամբ, արդարադատությամբ և խոր փորձառությամբ ու մտքի հստակությամբ, չեն դժվարանա երբեք հասկանալու իրենց ներկայացված այդ գրքի զրպարտական բնույթը: ԱՄՆ-ի հայ համայնքը, եկեղեցին և մտավորականությունը, երկրի օրենքներին, երկրի բարօրության և բարգավաճման նվիրված, ազնիվ ու խաղաղասեր քաղաքացիներ են, զնահատված արդարորեն պետական շրջանակներից, Սուրբ կարճ ոտքերունի. նա տեղ հասնել չի կարող:



Այս բոլորը անցյալ է արդեն և անցյալը տխուր հուշ է այժմ: Ամեն զեռով պետք է առաջը առնել եկեղեցական պառակտման և հայ ժողովրդի ու Հայ եկեղեցու ծոցում հաստատել քրիստոնեական ներքին խաղաղություն, համերաշխություն և եղբայրական գործակցություն: «Մի է հայրն մեր, մի և միակրօն Ազգն Հայոց», — գրում է Հովհան Երզնկացին, իսկ Եղիշեն զարմանք է հայտնում, թե «Զիա՞րդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակց լինիցին և ոչ միաբանք»:

Այսօր մեր նվիրապետական Աթոռները միացնող հարցերը, սկզբունքները շատ ավելի խոր են ու կենսական, քան մեզ տաժառող երկրորդական խնդիրները: Այսօր ողջ Ազգի ցանկությունն է, որ այս ցավոտ խնդրի մի պատվավոր լուծումը գտնվի, գործնական միջոցների առաջարկությամբ: Ժամանակն է, որ մեկ կողմ թողնենք հայ ժողովրդի հոգևոր-ազգային միությունը քանդել փորձող բոլոր ջեններն ու ատելությունները... ամրապինդ կապիրով վերահաստատելու եկեղեցվո անպակաս միասնականությունը և առաջը առնելու դարերի ի վեր գոյություն չունեցող հերձվածի մը աղետին» (Պարեգին պատրիարքի 1957 թվականի ապրիլ 2 թվակիր նամակից՝ «Անթիլիասի կաթողիկոսական խնդրույն լուծումը» հարցի շուրջ):

Ապրում ենք քաղաքական բարդ և դժվարին փրագրություն մեջ, Շատ փափուկ է Սփյուռքի հայության, Կիլիկյան Աթոռի, մեր նվիրապետական մյուս Աթոռների, թեմերի կացությունը: Պաղտնիք չէ, որ այսօր ունենք Հայ եկեղեցու միասնության և հայ ժո-

զոգվող միության թշնամիներ, որոնք բոլոր միջոցներով աշխատում են քայքայել հայ ժողովրդի կուռ միասնականությունը, համախմբվածությունը իր նկեղեցու շուրջ, իր Հայրենիքի շուրջ:

Ի պատիվ մեր ժողովրդի, սակայն, պետք է արձանագրել, որ մեր թշնամիներին հիմնականում չի հաջողվում հասնել մեծ արդյունքների, խափանել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության գաղափարը, որովհետև հայ ժողովուրդը հոգևոր սիրում է իր Եկեղեցուն, Իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հանդիսացել է հայ ժողովրդի կյանքի ոսկի խարիսխը, ավելան հաստատություն, անշարժություն և սին հրեղեն: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միաժամանակ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության արտահայտությունն է:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր նվիրապետական մյուս Աթոռների փոխհարաբերությանը հարցը սահմանվել և վճռվել է մեր ազգային-եկեղեցական ժողովներում: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերագահ և բարձրագույն Աթոռը Ս. Էջմիածինն է և մեր մյուս նվիրապետական Աթոռների միջև սահմանվել է պատշաճ և օրինավոր հարաբերություն, հռչակվել յուրաքանչյուրի իրավասության սահմանները այն մեծ և փրկարար սկզբունքի լույսի տակ, որ մի է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մի է Հայոց Հայրապետությունը:

Ցանկալի է, որ, լուսահոգի Գնրեղին Վեհի իմաստուն ռացատրությամբ, «ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը, կկամենայինք, որ ըստ ամենայնի պանաղանվեր ճրանց պատշաճ ճարտարությունը, ըստ պաշտոնի և կոչման: Միասնականությունը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ հասկացողությամբ և ճարգանքով կատարված պարտքերի, ճպտակների և ձգտումների միության մեջ: Մենք, իբրև Կիլիկիո Հայրա-

պետական Աթոռի Գանակալ, պատրաստ ենք Մեր կառելիք բերել, ճավերժացնելու ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջանայաց ճարտարություն Մայր Աթոռի հետ»:

Այս լույսի պես պետք է պահպանել մեծատաղանդ Գրեղին Վեհի այս Կտակը, որը կենսական նշանակություն ունի այսօր մանավանդ, Հայ Եկեղեցու կյանքում:

Մյուս կողմից Ամենայն Հայոց Հայրապետները ևս, մեր նվիրապետական մյուս Աթոռների նկատմամբ, ղեկավարվել են քրիստոնեական լայնախոհության ոգով, փոխադարձ սիրո և հարգանքի մեծ սկզբունքներով, պարտքի և պարտականության փոխադարձ ըմբռնումով: «Միասնականություն» անվան տակ «միապետություն»-ը խորթ է եղել միշտ Ամենայն Հայոց Կաթողիկոսներին, ըստ առաքելական պատվերի՝ «մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին» (Ա Պետր. Ծ 3): Այս մեծ կանոնից եղած մի քանի փոքր շեղումներ հետևանք են կաթողիկոսների անհատական նախասիրությունների և տեսությունների:

Մայր Աթոռի և մեր նվիրապետական մյուս Աթոռների սերտ համագործակցության ամրապնդում. ահա՛ օրվա հրամայական պահանջը, հօգուտ Հայ Եկեղեցու և ի շահ հայ ժողովրդի:

Զպիտի տարվել կուսակցական ամուլ պայքարներով, Եկեղեցու և վեղարի հովանու տակ: Այդ պայքարները ո՛չ մի լավ բան չեն խոստանում Եկեղեցուն և ժողովրդին բացի նրանից, որ կարող են վարկաբեկել հայ աշխատանքի և շարաշահել մեզ հյուրընկալող ազնիվ և բարի ժողովուրդների համբերությունն ու հանդուրժողությունը:

Ոչ մեկ պայքար՝ ոչ ոքի դեմ:

Այդ է պահանջում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի դերագույն շահը: Այդ են պահանջում ժամանակի ոգին և հանգամանքները:





Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի սեփական տեղի ունեցած վերջերս՝ նվերված 1959 թվականի գիտական արշավախմբերի ձեռք բերած արդյունքների ամփոփմանը:

Սեփական բացեց ակադեմիկոս Ա. Կարինյանը: Ձեկուցումներ լսվեցին հնագիտության, ազգագրության, վիճագրության և այլ հարցերի վերաբերյալ:

Պատմական գիտությունների Թեկնածու Ս. Սարգսյանի «Ենթակվիթի պեղումները զեկուցումը լրացվեց մեծ հետաքրքրությամբ: Նա հատկապես նշեց, որ Ենթակվիթը նեոլիթի դարաշրջանին պատկանող առաջին քնակառնդին է Հայաստանում և նստակյաց կյանքի անցած մարդու ամենաինքն քնակավայրերից մեկը: Սովետական Միությունում Ենթակվիթում պեղումներ կատարելիս հայտնաբերվել են նյութական կուլտուրայի լորս շերտեր, ստորինը՝ ուշ Նեոլիթ (Դ հազարամյակ մ. թ. ա.), վերին հերթ շերտերը՝ Գ. Բ հազարամյակներ մ. թ. ա.: Դա նշանակում է, որ Ենթակվիթը, ինչպես նաև նրանք շուրջ 8000 տարվա քնակավայր են եղել:

Ուշագրավ էր նաև պատմական գիտությունների թեկնածու Գ. Վարդումյանի զեկուցումը Նոր-Նախիչևանի գիտական կոմպլեքսային արշավախմբի ազգագրական աշխատանքներին նվիրված:

Ենթահայկալ աշխատանք էր կատարել քանասիրական գիտությունների թեկնածու Պ. Հակոբյանը «Նոր նյութեր և. Արարիկյանի մասին զեկուցումը: 1959 թվականին, — պատմում է զեկուցողը, — ես եղա Հայաստանի, Լենինգրադի, Կիևի, Տարսուի արխիվներում և հայտնաբերեցի ռազմաթիվ արժեքավոր նյութեր հայ մեծ լուսավորչի կյանքի ու գործունեության մասին:

Բովանդակային էր նաև հայտարարվածության թեկնածու Ա. Սահյանի զեկուցումը Ս. Էմիանի Մայր Տաճարի պեղումների մասին:

Բովանդակային զեկուցումներով հանդիս եկան պատմական գիտությունների դոկտորներ Բ. Առաքելյանը (Գառնիի պեղումները), Կ. Ղաֆազարյանը (Դվինի պեղումները), պատմական գիտությունների թեկ-

նածուներ Ս. Բարխուդարյանը (Վիճագրական արշավախմբի աշխատանքները) և Հ. Մնացականյանը (Լճաշենի պեղումները):

ՆԱԿԱԴ ՄԱՐՏԻՈՍ ՍԱՐՅԱՆԸ ԳՆԱՀԱՏՎԱԾ.— ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության մարտի 11-ի հրամանագրով կենսաբանության րնաչափաբան մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար սովետահայ նկարիչ Մարտիրոս Սարյանին շնորհվեց ՍՍՌՄ Ժողովրդական և նկարչի կոչում:

Փետրվարի 28-ին լրացավ մեծ արվեստագետի 30 տարին:

Սարյանի արվեստը, լինելով գերազանցապես հայկական իր շնորհ ու հոգիով, գույնով ու տեսաբանով, մարդով ու տարազով, նույն ժամանակ համաշխարհային մասշտաբով արվեստ է, հարազատ աշխարհի բոլոր ժողովուրդներին: Նրա նկարչության հայկական լեզուն մոտ է ու հասկանալի բոլոր ժողովուրդներին, դրանով իսկ այն ծառայում է տարրեր ազգերի մերձեցման և փոխըմբռնման:

ԵՐՎԱՆԻ ՕՏՏԱՆԻ ԵՐԿՆՐԸ ՎՆՑ ՀԱՏՈՐՈՎ.— Երվանդ Օսյանը մեր ժեռ հրգիծարաններից մեկն է: Բնվում է եղել նրա գրիչը, լրագրական հասարակ հոյվածից սկսյալ մինչև ֆելիետոն, պատմվածք, վեպ ու վիպակ: ԺԺ դարի վերջի և Ի դարի սկզբի հայ կյանքը Դր բոլոր կողմերով արտացոլում է ն. Օսյանի երկերում:

Վեց հատորների մեջ ընդգրկվելու է Օսյանի ստեղծագործության համարյա ամբողջ վաստակը, ինչպիսիք են՝ «Միջնորդ տերպապան», «Պապա-գանդիստը», «Ազգային բարերարը», «Ես դրսեցի լեռ առնել», «Պատերազմ և խաղաղություն», «Միքիսի սիրարկածը», «Վաճառականի մը նամակները», «Նոր հարուստները», «Կավե հերոսները», «Արգուի Համիդ և Երրոկ Հովսեփ», «Սալիհ հանըմ», «12 տարի Պոլսի դուրս», «Գրական հիշատակներ», «10 տարի ետք», ինչպես նաև մի շարք վիպակներ ու վեպեր, երգիծական պատմվածքներ, կոմեդիաներ և այլն:

Այս ցանկում ընդգրկված երկերի մեծ մասը առաջին անգամ է լույս տեսնում Սովետական Հայաս-

ստեղծում և հատկապես նախատեսված է 1960 թվականի երկրորդ բաժնուղի համար, վեցերորդը՝ 1962 թվականին:

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՑԱՆԻ ԾՆԵՂԾԱՆ 80-ԱՐՄԱԿՎԸ.— Փետրվարի 26-ին Ալ. Սպենդարյանի անվան լինելի շրջանային օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում նշվեց հայ ակադեմիկոս կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի ծննդյան 80-ամյակը:

Հանդիսավոր երեկոյին մասնակցում էին Խորհրդավոր գրողներ, եկամբներ, կոմպոզիտորներ, արտիստներ, ծառայողներ և ուսանողներ:

Երեկոյն բացում է ռեպերտիկական հրեյնյանական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՌ Միևիստորներին Սովետի նախագահի տեղակալ Լ. Ստեփանյանը:

Ականավոր կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է Հայկական ՍՍՌ Կուլտուրայի միևիստորի տեղակալ, արվեստի վաստակավոր գործիչ Մ. Գասպարյանը:

Ա. Տիգրանյանը սովետական կոմպոզիտորների ավագ սերնդի ամենապայծառ և տաղանդավոր ներկայացուցիչներից մեկն է, — ասում է նա, — նրա անունն ու ստեղծագործությունը վաղուց հայտնի են ոչ միայն մեր երկրում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Մեծ են նրա ծառայությունները հայ երաժշտական կուլտուրայի պատմության մեջ, նա ստեղծել է մեր ազգային առաջին օպերան՝ «Անուշ»-ը:

Ա. Տիգրանյանի գրված են պատկանում մեծաթիվ վոկալ և գործիքային ստեղծագործություններ, զարնամորային պիեսներ, կանտատներ, ռոմանսներ և երգեր: Նա իր կյանքի վերջին շրջանին գրեց իր երկրորդ օպերան՝ «Դավիթ Բեկ»-ը:

Հայաստանի Սովետական կոմպոզիտորների միության, Ալ. Սպենդարյանի անվան օպերային թատրոնի կուկնիստի և մայրաքաղաքի երաժշտանքի հասարակայնության անունից հանդես եկավ արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Կ. Ջաքարյանը:

Բրիտիսի կոմպոզիտորների պատվիրակ, Վրացական և Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Մ. Բարխուդարյանը պատմեց Ա. Տիգրանյանի կյանքի վերջին տարիների մասին, որոնց անց կացան Բրիտիսիում, «Դավիթ Բեկ» օպերան գրելիս: Երկու ավարտվեց մեծ համերգով, ծրագրում միայն Ա. Տիգրանյանի ստեղծագործություններից:

Այս առթիվ Հայկական ՍՍՌ Միևիստորների Սովետական Երկրում կանգնեցնել կոմպոզիտորի արձանը, իսկ իր ծննդավայր Լենինականում՝ կինոսրահին, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում սահմանել Ա. Տիգրանյանի ունվան Երկու հասանդական թղթակի՝ յուրաքանչյուրը մի միլիոն հարյուր հազար հայկական դրամով: Ինչպես նաև նրա օպերաների բեմագործություններին նվիրված զեկուրվանտական ալբոմ:

Բ. ՄԵԼԻՔ-ՄԱՌԱՅԱՆԻ ՄԱՆՎԸ.— Փետրվարի 26-ին 67-ամյա հասակում վախճանվեց թշվառական զինուժայնների ղեկավար-պրոֆեսոր Բարդիս Մելիք-

Մուսայանը, որը մեր աշխարհի զինականներից մեկն էր, որպես այդի հիվանդությունների մասնագետ:

1933 թվականին Մելիք-Մուսայանը նշանակվում է Երևանի թշվառական ինստիտուտի այդի հիվանդությունների ամբիոնի ասիստենտ: Շուտով նա ստանում է դոցենտի կոչում և նշանակվում ամբիոնի վարիչ (1935 թ.), պաշտոն, որը վարում է մինչև իր մահը: 1939 թվականին պաշտպանում է դոկտորական թեզը՝ անտառային, միևնույն ժամանակ ստանալով նաև պրոֆեսորի գիտական կոչում:

Իր և թշվառական ինստիտուտի ակնառու դասախոսներից մեկը, նա երկարամյա մանկավարժական գործունեության ընթացքում պատրաստել է բազմաթիվ ակնաբույժ մասնագետներ: Իր գրքին են պատկանում բազմաթիվ տպագրված գիտական աշխատություններ: Նա Հայկական ՍՍՌ ակնաբույժների ընկերության հիմնադիր նախագահն էր մինչև իր մահը: 1944 թվականին նրան շնորհվել էր վաստակավոր թշվառ բարձր կոչումը: Նա ոչ միայն հիմնադրել էր մանկավարժ էր, այլ նաև լուրջ գիտական աշխատող, զգալուն և նվիրված թիմի:

ՖԵԼԴԵՐԻԿ ԵՈՒՆԵՆԻ ՆՎԻՐՎԱՄ ԵՐԵՎԱՆ.— Վերջերս հայ երաժշտանքի հասարակայնությունը մեծ հանդիսավորությամբ և ջերմ սիրով նշեց լեհ հանճարեղ և անմահ կոմպոզիտոր Ֆելդերիկ Եոպենի ծննդյան 750-ամյակը:

Փետրվարի 26-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, տեղի ունեցավ երեկո:

Եոպենի կյանքի և գործունեության մասին զեկուցեց երաժշտագետ Մ. Տեր-Միսեյանը: Տրվեց համերգ, որի ընթացքում Եոպենի ստեղծագործությունների կատարումով հանդես եկան Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, ինչպես նաև ԲՈՅՍԻ արվեստի վաստակավոր գործիչ պրոֆեսոր Յակով Ֆլիբեր:

ԱԼ. ԻՄԵՆԵՆԻՍԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱՇԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 30 ՏԱՐԻՆ.— Երևանի առաջին երաժշտական դպրոցը՝ Ալ. Սպենդարյանի անվան, բացվել է որպես քառամյա մի դպրոց և նպատակ է ունեցել պատրաստել պրոֆեսիոնալ երաժիշտներ, այդ իսկ նկատմամբ էլ սկզբնական շրջանում այն կազմվել է ռուսական երաժշտական, Այդ շրջանին նա ուներ միայն երեք դասարան (չուֆակ, թավ ջուֆակ և դաշնամոր), ընդգրկելով 282 աշակերտ: Առաջին շրջանավարտները դուրս եկան 1935 թվականին, ստեղծելով ջառ մեծ խանդավառություն, ներշնչելով մեծամեծ հույսեր: Իզուր լանցան այդ բոլորը: Շուտով դպրոցը տեղափոխվեց նոր շենքում և վերածվեց յոթամյակի, ավելացան նաև գործիքները, բացվեց արևելյան գործիքների դասարան:

Այդ դպրոցից դուրս են եկել բազմաթիվ մեծատաղանդ երաժիշտներ, արվեստագետներ, մանկավարժներ և այլն, ինչպես Ա. Բարաշյանյանը, Ալ. Հարությունյանը, Էդ. Միրզոյանը, Մ. Բրուսյանը և շատ ուրիշներ:

Առջինից այս դպրոցի կողքին այսօր բարձրացել են տասնյակ ուրիշ երաժշտական դպրոցներ, որոն-

ցում սովորում են հազարավոր պատանիներ և տղջիկներ, ապագայի մեր երաժշտության ուսուցիչները, ապագայի պատանիներն ու շարունակողները:

ՎԱՐԳՅԱ ՍՈՒՐԵՆՑԱՆԻՆ ԵՎԻՂԱՄ ԵՐԵՎԱՆ.— Էրաջով արեւելայ Եղանավոր նկարիչ Վարգան Սուրենյանի ծննդյան 100 տարին: Այդ առթիվ Արվեստի աշխատողներին տանը կազմակերպվեց ներկո, որին ներկա էին նկարիչներ, արվեստագետներ, ուսանողներ և երեսնյան արվեստասեր հասարակայնության այլևայլ ներկայացուցիչներ:

Բացման խոսքը տուց Հայկական ՍՍՌ Ժողովրդական նկարիչ, ՍՍՌԿ Գեղարվեստական ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր Արա Սարգսյանը: Իր խոսքում պրոֆեսորը Վ. Սուրենյանին բնութագրեց որպես մեծատաղանդ նկարիչ, արվեստի տեսաբանի, թարգմանչի, գրողի և ճարտարապետի:

Վարգան Սուրենյանի կյանքն ու ստեղծագործությունը մեծապես զննվեց Արվեստի ինստիտուտի կրասեր գիտական աշխատող Մ. Ղազարյանը, որն իր զննության մեջ ներկայացրեց Վ. Սուրենյանին որպես Մոսկվայի և Պետերբուրգի թատրոնների նկարիչ, զննարվեստական գրքերի նկարազարդողի և մանավանդ որպես մեկը Ժ. Գարի վերջի և Ի. Գարի սկզբի այն նկարիչներից, որոնք ստեղծեցին և զարգացրին մեր դասական նկարչությունը:

Երեկոն փակվեց ճախ համերգով:

ԱՊԱԿՑԱ ԹԵԼԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՐԵՐԻՑ.— Հայկական ՍՍՌ Ժողովրդական տնտեսության խորհրդի Ժիմիայի ինստիտուտում Հայաստանի քաղաքագետներին ստացել են ապակեթելեր: Այս արժեքավոր հայտնագործության հեղինակն է անվանի քիմիկոս Մ. Մանվելյանը: Հեղինակը վերջերս զննվելով կարգաց Հայաստանի քարերից ապակյա թել ստանալու մասին, Մ. Մանվելյանը իր հետաքրքիր զննության մեջ պատմեց Փիմիայի ինստիտուտում կատարված այն վիթխարի աշխատանքների մասին, որոնց շնորհիվ Հայաստանում դասվելու ունեցող քարերից ստացվել են ապրեր երանգի ու դասից ապակյա թելեր: Այդ թելերը երկու տեղում արվել են թելի և այլուր: Իրենց աժարկով լին զիջում երկաթին, բոլոր պայմաններում միշտ պահպանում են իրենց դուրսը, չեն վախենում ջերմությունից:

Այդ թելերից կարելի է ստանալ մոտ լուրս հազար տոննա իրեր: Թերից ստացված այդ թելերը շատով կօգտագործվեն մեքենաշինության, էլեկտրադուրանաբերության մեջ, փոխարինելով մի շարք թանկարժեք և կարևոր շինանյութերի, որի շնորհիվ հսկայական քանակությամբ դառնալու մեծապես կխնայվի:

Անվանի քիմիկոս Մ. Մանվելյանի ջանքերով ստացված ապակյա թելերի այդ նոր տեսակները ամենուրեք արժանացել են բարձր գնահատանքի: Շատ շուտով Հայաստանի տարրեր վայրերում կկառուցվեն մի շարք ձեռնարկություններ, որոնց կսկսեն քարից ստացվող ապակյա թելերի մասսայական թողարկումը:





Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Ամերիկահայ ազգային ու կրոնական կյանքի տարեգրության մեջ պատմական փայլուն էջեր պիտի արձանագրեն 1959 հոկտեմբեր 30-ի և նոյեմբեր 1-ի շքեղ հանդիսությունները, զորս տեսնելու բախտավորությունը ոմնեցավ մեծագույն Նյու-Յորքի և շրջակայքի հայ զաղութը խոր ներշնչմամբ։

Այո՛, հոկտեմբեր 30-ը պատմական արեւելաշող օր մը եղավ հայ ժողովուրդին համար, հակառակ որ կանձրեցի։ Զէ՛ որ սրտերը լեցված էին հրճվանքով, անզուսպ ուրախությամբ։ Անոնց դիմագծերուն վրա դյուրությամբ կարելի էր տեսնել գնահատանքի ու երախտագիտական զգացումներու դրոշմը։ Ամեն շրթնաք օրհնություն մը ուներ Մայր Տաճարի, Ազգային տան և առաջնորդարանի շինության հանձնախումբին, որ, առաջնորդությամբ իր մեծանուն ատենապետին՝ տիար Հայկ Գալուզճյանի և շնորհիվ բարեհամբավ Տիարպեթրյան եղբայրներու երկարած բարերար ձեռքին, հաջողեցավ երեք կոթողներին առաջնորդարանը բարձրացնել ալիպիսի շքեղությամբ և ներքին արդիական կահավորություններով, որով մենք հայերս հպարտ պիտի մնանք, իսկ օտարներ, հմայված անոր պատմական դիրքով ու դեմքով, պիտի ջանան խորասուզվի մեր պատմությամբ, մեր փառահեղ անցյալով ու ներկայով և մեր մշակույթի թանկագին արժեքներով։

Առաջնորդարանի օժուժն ու բացման արարողությունը ընթացք առին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեջ։ Ժողովուրդը խուռներամ հասած էր։ Առաջակարգին իրենց տեղերը զբաղած էին օրվան մեծանուն բարերարները, տեր և տիկին Սարգիս Տիարպեթրյան և անոնց սիրուն որդին, տեր և տիկին Հայկ Գալուզճյան, տեր և տիկին Նրվանդ Աղաճանյան՝ Քլիվլենդեն,

տեր և տիկին Հարություն Թադեոսյան, տիկին Զարուհի Գալմաթյան, տիկին Պապյան, Կանադայեն, փաստաբան Ղինոհն Յարգրմ և այլ հեղինակավոր անձնավորություններ։

Օրվան եկեղեցական արարողությանը կմամակցեին մեծագույն Նյու-Յորքի յոթը եկեղեցիներու կրոնավորները։ Երգեցողությունք կատարվեցան «Կոմիտաս» երգչախումբի կողմից, ղեկավարությամբ Իսահակ Աբրահամյանի։

Սուրբ պատարագի հանդիսավոր արարողությունը կատարեց Նախկին առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան։ Սույն արարողությանց ներկա էր նաև առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Մուսոն Ժայրագույն վարդապետ Կրճիկյան։

Հավարտ սուրբ պատարագի, առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան տվավ ավուր պատշաճի շինիչ և հոգեհույզ քարոզ մը, վեր առնելով «տալու և զոհաբերելու կամեցողությունը, ոգին», և անդրադառնալով օրվան բարերարներուն՝ տպավորիչ ներբողանքով մը դրվատեց Տիարպեթրյան եղբայրներու ազգասիրական, հայրենասիրական և բարեսիրակուն բարձր ոգին, որոնց խոստով ապացույցներ են, ավելցուց սրբազանը, անոնց Միլանոյի մեջ հիմնարկած հայոց եկեղեցին, Ամերիկայի մեջ մեր առաջնորդարանը և այլ տեղեր զանազան ազգային զոհողություններ։

Մեծ շուքով տեղի ունեցավ հոգեհանգրստյան արարողություն բարերարներու հանգուցյալ ծնողաց՝ տեր և տիկին Մանուկ և Զարուհի Տիարպեթրյաններու, որոնց հիշատակին նվիրված է նորակառույց առաջնորդարանը։

նկնդեցի վերջավորության հավատացյալներ առաջնորդվեցան առաջնորդության, ուր անցքի ժամանակ ժապավենը կտրեց բարերար Տիարպեքիրյանը: Մուտքի առաջին բաժնին մեջ, դեպի ձախ դնողված էր հանգուցյալ Մանուկ Տիարպեքիրյանի բրոնզե կիսանդրին:

Ներկաները ազատ էին Կոտայքի մեջ կատարելու շենքեր ներս, որոնք հարկե հայկ, սեկյակե սեկյակ հափշտակություն կսքանչանային անոր գեղական ճարտարապետական կառուցվածքին, որ պործն էր ճարտարապետ Զարեհ Սուրյանի, պատշաճ կահավորման, ձեռնարկներն կախված լուսաճանաչ ջահերուն, ամեն ինչ որ կարելի է ա-

կընկալել այսպիսի հոգևոր իշխանատան մեջ համար, գրեթե ամբողջացված էր:

Ընդունելության սրահին մեջ, ուր արդեն հավաքված էին հրավիրյալներ, տեղի ունեցավ կենտրոնական համեստ ճաշ, նախաճաշության մեջ առաջնորդ հոր, Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի:

Այդ ազգային մտերմիկ մթնոլորտին մեջ ստեղծված խանդավառությունը զարթնում էր կյանքի մեջ, զոր կունենային անցյալին մեր իշխանազունները, իրենց մոլ ձեռք բերված ազգային հաջողություններու տոնակատարության առթիվ:

(Նյու-Յորք, «ԱՅԱՍՏԱՆՑԱՆՑԱՆ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերթ առաջնորդաբանի հայոց Ամերիկայի, № 11, դեկտեմբեր, 1959 թ.)

ՀԻՇԱՏԱԿԵԼԻ ԵՐԵԿՈ ՄԸ

Առաջնորդարան գեղեցիկ մտածումը ունեցած էր առաջնորդարանի նորակառույց շենքին բարերար Տիարպեքիրյան եղբայրները պատվել հանդես-ճաշկերություն մը, հոկտեմբեր 31 1959-ին, երկնյան ժամը 7-ին, Նյու-Յորքի Ռուզվելտ պանդոկին մեջ, որուն ընթացքին նաև տիար Սարգիս Տիարպեքիրյան պիտի ստանար Ազգիս Վերահիտ Հայրապետին՝ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին կողմն շնորհված Երևանավորի առաջին կարգի ադամանդակալ շքանշանը:

Որոշյալ ժամանակ մոտ երկու հարյուր ազգայիններ կարգման իրենց համար նշանակված սեղաններուն շուրջը Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի աղոթքով ներկաները կսկսին ճաշի:

Ճաշն անմիջապես ետք, օրվան սեղանապետը՝ թեմական խորհուրդի ատենապետ տիար Նրվանդ Աղաճանյան կսկսի հայտագրի գործադրությանը: Հարգելի սեղանապետը ներշնչելով զրույթամբ մը կբացատրե նպատակը հանդիսության ու գեղեցկորեն համադրած վեր կառնե Տիարպեքիրյան եղբայրներուն նվիրատվության ոգին, անոր մեջ տեսնելով մեր հայ ժողովուրդին անհատական և հավաքական հավատքն ու նվիրումը՝ հանդես եկեղեցական ու ազգային արժեքներուն պահպանումին, որ կուգա վարդանանց շրջանին իսկ:

Ապա սեղանապետը կհրավիրե Մայր Տաճարի շինություն հանձնախումբի ատենապետ տիար Հայկ Գավուգճյանը, որպեսզի այս գեղեցիկ առթիվով ան ըսե մի քանի խոսք: Տիար Գավուգճյան, որ շատերուն համար դարձած է հայր մը, մեծ ուրախության մեջ կխոսի առաջնորդարանի շենքին ավարտումին մասին ու ապա՝ Մշակութային շենքի մասին, որ մոտ ատենին պիտի սկսվի

շնորհիվ Սերովյան և Կյուլլապի Կյուլլանյաններու առատաձեռն նվիրատվության: Անդրադառնալով Մայր Տաճարի շինության, ան քաջ վստահ է, որ մի քանի տարիներ պիտի հանգանակե անհրաժեշտ գումարը, շնորհիվ հավատացյալ հայ ժողովուրդին պարտաճանաչության:

Ապա կխոսի վերապատվելի Ա. Ա. Պետիկյան: Ան առաջնորդարանի նոր շենքին կառուցումին մեջ կտեսնե հայ ճշմարիտ քրիստոնյա ժողովուրդին պարտախանությանը սկզբնավորությունը, որ հառաչ պիտի է տարվի այս նոր միջավայրին մեջ:

Թեմիս նախկին առաջնորդ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան է խոսողը: Սրբապետ հայրը կհզարագակե իր խոսքը ըսելով, թե պետություններ կվարձատրեն իրենց ասպետները շքանշաններով, որոնք եղած են զոհվողներ երկրին համար: Իսկ Նկեղեցին շքանշանով կզարդարե կուրծքը անոնց, որոնք եղած են սիրո և խաղաղության պայքարի ասպետներ, ինչպիսին է այսօր տիար Ս. Տիարպեքիրյան:

Թեմիս առաջնորդ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան կհրավիրե առաջնորդական փոխանորդ Տ. Մյուռոն Ժայրագույն վարդապետ Կրճիկյանը, որպեսզի հայր սուրբը՝ կարգա հայրապետական կոնդակը: Ապա թեմական խորհուրդի ատենադպիր տիար Ֆրենկ Զոբյան կկարդա կոնդակին անգլերեն թարգմանությունը: Հուլիս է պահը, երբ նախկին առաջնորդ Տ. Մամբրե սրբազան կղեկնեղե լուսավորչան շքանշանը պր. Ս. Տիարպեքիրյանի կուրծքին և զույգ սրբազան հայրեր սրտագին կողջագուրեն և կշնորհավորեն բարերարը:

Առաջնորդ Սիոն սրբազան հայրը, հուլիսի մի և ուրախության ապրումով զեղուն, կու-

տա հանդիսականներուն իր պատգամը: Սըր-
րադան հոր համար Առաջնորդարանի շենքը
լեցուն է վեհ խորհուրդով մը: Ան կռված է
ըլլալու խորհրդանշանը ամբողջ ամերիկահա-
յոց թեմին: Ամերիկահայությունը կունենա
մոտ ատենեն իր Մշակութային տունը ևս:
Բայց նվիրագույնը Մայր Տաճարն է, քանի
որ ան պիտի ըլլա խորհրդանշանը մեր միու-
թյան և սիրու: Արդ, բոլոր հայ հավատացյալ-
ները անխտիր պետք է բերեն իրենց մաս-
նակցությունը այդ սրբազան գործին: Ապա
սրբազան հայրը կվերջացնեն իր խոսքը հայտ-
նելի ետք իր սրտագին շնորհակալություննե-
րը Տիարպեթիյան եղբարց և շնորհավորու-
թյունները տիար Ս. Տիարպեթիյանին:

Այս սրտագին խոսքերն ետք, տիար Սար-
գիս Տիարպեթիյան, ուրախությամբ հուզում-
ներով աղյուծն, կհայտնեն իր շնորհակալու-
թյունները նախ Վեհափառ Հայրապետ Տ. Տ.
Վազգեն Ա Կաթողիկոսին, որ ղինք արժանի
էր տեսած Լուսավորչյան շքանշանին, և ապա
առաջնորդարանին, որ ղինք կպատվեր այս-
պիսի գեղեցիկ հանդես ճաշկերութիւնով մը:

Հանդեսը իր լրումին կհասնէր «Տէր կեցոյ»
մաղթերգով և առաջնորդ հոր «Պահպա-
նիչ»-ով:

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՅԵՆՆԵՐ»,
պաշտօնաթիւր ԽՈՍԵՖՈՒԴԱՐԱՆԻ ԽԱՅՈՍ
ԱՄԵՐԻԿԱՅԻ, № 11, դեկտեմբեր, 1959 թ.)

ԱՐԳԵՆՏԻՆԱՆԱՅ ԿՅԱՆՔ

Հունվար 6, Մենդ և աստվածայատնու-
թյուն Քրիստոսի: Առտու ժամը 8.30-ին
սկսավ ժամերգությունը դպրաց դասու քաղցր
երգեցողությամբ: Երբ արարողությունը հա-
սավ «Փառք ի րարձունս»-ին, սրբազան հայ-
րը, Վզեստավորված, սուրբ խորան րարձա-
յալ և կարգաց Մենդյան Ավետարանը, իսկ
եկեղեցականք, դպիրք և ժողովուրդ վարեն
երգեցին երեշտակաց երգ՝ «Փառք ի րար-
ձունս»-ը:

Ժամը 10.30-ին սկսավ հանդիսավոր պա-
տարագր: Ս. Գրիգոր Լուսավորիչ դպրաց դա-
սու երգեցիկ խումբը, թափորով, առաջնոր-
դարանեն դեպի Մայր Եկեղեցի առաջնորդե-
ցին պատարագի սրբադանը:

«Հայր մեր»-ի պահուն, Պատվիրակ սրբա-
դան հոր պատգամեն առաջ, հոգեշնորհ Տ.
Հարություն ծայրագույն վարդապետ Մուշ-
յան, ի լուր ժողովրդյան կարգաց Վեհափառ
Հայրապետի շնորհավորական և օրհնության
գիրը, գործերկաներ ունկնդրեցին հոտնկայս:
Վեհափառ օրհնության գրի ընթերցումեն
անմիջապես վերջ, սրբազան հայրը տվավ իր
քարոզը, նյութ ունենալով՝ հովիվներուն
պատգամված խոսքը՝ «Աւետարանեմ ձեզ ու-
րախութիւն մեծ, դի այսօր ծնաւ ձեզ Փրկիչ,
որ է օծեալ Տէր ի քաղաքի Գաթիք: Շեշտը
դրավ Քրիստոսի օծյալ Տիրոջ հանգամանքին
վրա, իբրև առաջնորդող հոգիներու Ավետա-
րանի ճամբաներեն, դեպի աղբյուրը ճշմար-
տության, սիրո և խաղաղության, Աստված:

Մարդիկ չհասան իրենք իրենց երջանկու-
թյան, հակառակ անոր որ դարեր շարունակ
պատմությունը եղավ որոնում մտքի և ուժի
ճամբաներով մարդուն հոգեկան լիության
գոյամիճակին, մինչև որ Քրիստոս անձամբ
իջավ խավարին և մեղքի անկումին մեջին
վերցնելու դայն, վեր Աստուծո գերագույն
սրբության և իր բնության իրագործումին, որ
կերաշխավորեն միայն հոգեկան լիակատար
ուրախությունը:

Մարդը պիտի սրբվեր իր սկզբնական մեղ-
քեն, դոր ժառանգած էր:

Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունե-
ցավ ավանդական Զօրհնեցի արարողությու-
նը, կնքահայրությամբ պր. Գավաթյանի:

Մեր գաղութի պատմության մեջ առաջին
անգամ ըլլալով էր, որ արարողությունը կա-
տարվեցավ Ս. Հովհաննէս Մկրտչի մասուն-
քով, դոր Վեհափառ Հայրապետ ուղար-
կած էր Պատվիրակ հոր հետ՝ իբրև նվեր և
պաշտպան Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր
Եկեղեցվույս:

Խաչանման այս մասունքին արծաթյա
պատվանդանը, մեր կոչին բնդառաջ ելլելով,
շինել տվին տեր և տիկին Համարձում և
Օվսաննա Գալանճյաններ, որոնց այս առթիվ
կրսենք՝ «Ուխտերնիդ ընդունելի ըլլա»:

(Բուենոս-Այրես, «ՀԱՅ ԿԵԴՐՈՆ» ամսա-
դիւր, 1960 թ. հունվար 1, № 1):

